



# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

Ե ՂԱՐ

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄԻՈՅՈՒՆ







ՄԱՏԵՆԱՍԱՐԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ  
ԸՆԳՈՒՆՄԱՆ  
1700 ԱՄՅԱԿԻՆ

Հրատարակվում է պետական  
հովանավորությամբ  
Խմբագիր ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Մատենադարի պատմախառն մեթոդաբան\*  
ԱՔՏ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**Մովսես Խորենացի**

Մ 016 Հայոց պատմություն| Բարձր., հերթ. և ծանոթ. Մտ. Մալխասյանցի.— Եր.: Հայաստան, 1997.— 552 էջ:

Հայոց պատմադար, համաշխարհային պատմագրության մեծածառ ներկայացուցիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» քննարկում է Հայաստանի պատմությանը հնագույն ժամանակներից մինչև Նեղոսիկի աղբյուր՝ Կ գրքը: Այն պարունակում է հսկայաբան հրապարակումը հայ Տին մշակույթի, հասկացիչ՝ Պաղատի մոզոգրաֆիկական բնագիտության, ինչպես և հարևան երկրների և մարտիկների պատմության ու մշակույթի վերաբերյալ: «Հայոց պատմություն» աչքի է ընկնում բազմաթիվ զեղարվեստական արձաններով՝ կատարվածքի կատարելությամբ, գրքիչների ու իրադարձությունների ժառանգությանը: Կերպարներով, լեզվի նրբությամբ ու միամտանակ սեզմությամբ:

Հրատարակությունը նախատեսվում է ընթերցող չլրջանների համար:

0509020015

Մ ————— 46—97

701 (01)—97

ԳՐԿ 68. 8(24)

ISBN 5-540-01102-9

7011 — ԳՐԱԳՈՒՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

© «Հայաստան» հրատարակչություն, 1997

**ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ**

«Աման» իրապակ բազու գայտ Բեյ և որ զին Կո գայտ են ազգ»  
(Խոր. Ա. Կ.):  
«Մի՛րն մտանան մե՛ն կայն ին՛ն կամ պարտին՛ն Բոց հայրենաց... Խալայն սկսաց, թեպետ և շահի. միայն թե շնորհակալ ո՛վ մե՛րցա գտանցի արխատարե՛ց» (Անգ. Ա. Գ.):

Մովսես Խորենացի: Նրա կենսագրությունը: Հայաստանի պատմությունը: Այլխատությունները: Հայոց պատմություն: Չորրորդ գրքի հարցը: Պատմության աղբյուրները: Մատենադարի աղբյուրը: Հայ մոզոգրաֆիկական առաջնիկները: Պատմության հատկությունները: Ոճը, լեզուն: Պատմության նշանակությունը: Քննություններ Խորենացու Պատմության մասին: Պատմության գրության ժամանակը: Պատմության արժանահավատությունը: Պատմության աղբյուրների ուսումնասիրությունը: Պատմության մեթոդները, հրատարակությունները, քաղցածությունները: Երկա բարձրագույն հանգամանքները:

Մովսես Խորենացին եղական գրական դեմք է մեր հին մասնագիրների մեջ: Նա տասնհորս զար շարունակ անձնագ Նոսարքրություն է շարժել հայ մոզոգրֆի և բանասիրության մեջ իր Հայոց պատմությամբ, որ ծառայել է իբրև ուսման առարկա և իբրև ուսումնասիրության նյութ: Ավելի քան տասը զար այս գրվածքը եղել է հայ ազգի միակ գառագիրքը իր հին լեզվային հեռ ծանոթանալու համար. եղել է աղբյուր և օրինակ հետագա պատմիչների համար, որոնք նրանից քաղվածքներ են անում, ընդօրինակում են, հետևում են նրա ստեղծած պատմագրության տիպին: Ամենաբարձր զգվեսաներով հիշում են նրա ստեղծը՝ տիեզերահաշակ քերթազ, պատմահայր, քերթազահայր (իբրև հասուկ նրան սեփական տիրադաս): Նրան հուշել են հայ Հերոդոտոս, որ ևս, ինչպես Գուաշմիան ասում է, հայերը, Էթն փորք-ինչ սնափառություն ունեն, իրավունք ունեն այսպես կուշկու նրան. նա արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությունը առաջիններից մեկն է Ս. Գրքից հետո<sup>1</sup>:

Սակայն տասնհիններորդ գրքից այս կողմը հեղաշեռե փոխվեց զի-

<sup>1</sup> Խորենացու արժանահավատությունը. Լր. 3 և 6:



անճովաճական է այս 120 տարվա հասակը և մանավանդ անընդունելի է 370 թվին ծնվելը, սա հակասում է Պատմահոր ցուցման։ Նա գրում է, որ Նիփոսի ժողովից հետո, ուրման 432—437 թվականների ընթացքում, Սահակ ու Մեսրոպը նրան ուրիշ բնկերների հետ ուղարկեցին Ալեքսանդրիա՝ բարձրագույն ուսում ստանալու։ Բայց 370-ին ծնվածը, այն ժամանակ կլինեք 62—66 տարեկան ձերունի Այսպիսի տարիքում, աշխարհում մտուքով, չեն գնում բարձրագույն ուսում ստանալու, այլ ափնի կրիտասարգ հասակում։

Գին օգնելով այս առասպելը, որի աղբյուրը թվում է թե Թովմա Առժրուճուն մի խոսքն է՝, մենք նրա ծննդյան հավանական տարին կհանենք հենց հորենացու հիշյալ վկայությունից։ Այնպիսի հնուավոր ու թվվար ճանապարհորդություն կատարելու, աստուծության մեջ ինքն իրեն կառավարել գիտենալու համար պետք էր բավական չափահաս ու փորձառու լինել, միանգամայն սուր հիշողություն, մտքի թարմություն և ուսանելու րոտն փափագ ունենալ, Այսպիսի հասակ մենք համարում ենք մարդու 22—23 տարեկան հասակը. ուստի էրբ հորենացին, արտասահման ուղարկվելիս, այսինքն՝ 432—434 թվականներին 22—23 տարեկան լինելով պետք է ծնված լինեք 410 թվականի շուրջը, մի-երկու տարով անպակ համո հետո։ Այս թվականը լավ համարվում է նրա մյուս վկայությանը, թե Պատմությունը գրելիս, 480-ական թվականներին, կհչել է «այդ ժնր և հիանդոտ և անպարսպ ի ԹարգմանուՍենաց»։

Այսպես, հորենացու ծնունդը զննելով 410 թվականի մոտ՝ այնուհետև երբակցանում ենք, որ նա մանուկիցն տարիներում սղորհական կրթությունն ստացել է հենց Մյունիքում, ս. Մեսրոպի արևելք հիմնած զարդոտ, ինչպես վկայում է Կորյունը։ Այստեղ ուսանելով ավարդված ասորական գիտությունը, որ էր զրավարժ բնիկացանություն և երգեցողություն, և ցույց տալով աչքի բնկնող ընդունակություն՝ նա 15—16 տարեկան հասակում, այսինքն՝ մոտ 427 թվականին, ուղարկվում է Վաղարշապատ, Հայաց այն ժամանակվա կենտրոնական վարժարանը, որտեղ ուսուցանում էր ինքը ս. Մեսրոպը։ Այստեղ էլ նա ուսանում է 5—8 տարի, բացի հայերենից սովորելով նաև հունարեն և ասորերեն (սառայց այս լեզուների մասնաբնթյան՝ նա չէր կարող ճանապարհորդել Ասորիքով և ապրել Ալեքսանդրիայում)։ Պահլավների և (Սասանյանների ժամանակի պարսկերենը), էթն ոչ զրավոր՝ բայց զորձնականապես նուչնպես գիտեր,

<sup>1</sup> «Քրոյ անք կենանք տեկույ նոխույ ամն հարիւր և բան լի և պարտւո ձերությամբ և այլն»։ Սրո մասին քիչ հետո մանրամասն կհսուենք։

Սա երևում է մի շարք պահլավների բառերի ուղիղ մեկնությունից, որ պատահում ենք նաև Պատմության մեջ։

Եփեսոսի ժողովից (431) հետո, էրբ Սահակ ու Մեսրոպը Ս. զիրեն ուղղում էին բոտ հունարեն բնագրի (կամ հունարենից երկրորդ անգամ էին Թարգմանում)՝ կարիք զգացին քաշ հունագիտների, բերթղական արվեստին հմուտ գիտնականների, ուստի որոշեցին իրենց ամենաընդունակ աշակերտներից մի քանիսին ուղարկել Ալեքսանդրիա, գիտությունների այն ժամանակվա կենտրոնը, որտեղ իրար հանգիպում և իրար հետ զոգվում էին Արևելքն ու Արևմուտքը։ Այս քնտրյալների զասին էր պահանջում և նրանց մեջ առաջինն էր պատահալի Մովսեսը, մոտ 22 տարեկան հասակում, որ հիացմունքով ու վառ հույսերով լի նկարագրում է իր ճանապարհորդությունը, իր ուսուցիչներին նմանեցնելով արեգակի, իսկ իրենց՝ այդ արեգակից լույս տաացող աստղերի։ Այս ճանապարհորդությունը երթարդում ենք 432-ից հետո, ոչ ուշ, քան 435 թվականը։

Ինչ էր նա սովորում Ալեքսանդրիայում՝ ստույգ չգիտենք. նա իր ուսուցիչին կոչում է նոր Պատմություն, սուսց անձեր սալու. ուստիև հավանական է, որ նա իմաստասեր՝ գիտնական լինելը, քան աստվածաբան։ Այսպիսի ունենալով նրա զուլու գլխավոր նպատակը՝ պետք է հետևեցնեք, որ նրա ուսման հիմնական առարկաներն էին հունարեն լեզուն և բերթղական արվեստը, այսինքն՝ լեզվի և խոսքի թնորքան, քերականություն, ճարտասանություն։ Երկրորդաբար նա սովորում էր Ս. գրքի մեկնությունները, պատմություն, հունաց զիցաբանություն։ Ալեքսանդրիայի աշխարհահռչակ մատենադարանը միջոց էր տալիս ուսմանսր Հայ կրիտասարգների կարգալու հուչք բանաստեղծների, փիլիսոփաների, պատմագիրների և այլ գիտնականների զրավձքները, որոնցից հետո հորենացին համախապի օգտվում է իր Պատմությունը գրելիս։

Հայտնի չէ, թե որքան ժամանակ հայ ուսանողները մնացին Ալեքսանդրիայում և ահաստարակ պանիստուսիլյան մեջ, հանենայն զեղս ոչ պակաս, քան 5—6 տարի։ Նրանք վերագարձան 439 թվականից հետո, էրբ Հայաստանի երկու լուսավորիչներն ու նրանց ուսուցիչներն արդեն վախճանված էին։ Նրանց համար անհանկալ էր այս ցավովի իրողությունը։ Ինչպե՛ս սրտառուչ կերպով արասնալաում է հորենացին իր վիշտը. «Միջև նրանք սպասում էին մեր զարձին, և փասավորվել իմ ամենախմատ արվեստով ու պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ զալով հուչս ունենիք հարանիքում պարել... և առազուստի երթաք սակ՝ այժմ այդ ուրախության փոխարեն զերկզմանի վրա ողբեր ասելով հառալում ու ողորմաղին, մանավանդ որ շժամանեցի



տեսնել նրանց անշքերի փակվելը և լույն նրանց վերջին խոսքն ու սրճանությունը (Ողբ):

Քայց զուցն այս երկու մահերից ավելի դառն էր այն սառն, զրեկն քննամական ընդունելությունը, որին նրանք հանդիպեցին իրենց կարոտած հայրենիքում: Գիտություն պաշարով ծանրաբեռնված, հայրենիքին ծառայելու անկողմ ուղեորված՝ նրանք գալիս են և հանդիպում են արժամարտերի և հայամանքների: Նրանց սապարեզ չէին տալիս զործելու, ծառայում էին նրանց գիտությունը, հայամանք էին տեղից տեղ, գաղտնաբարտում էին զրկանքներով ի կյանքի, ազդատություն: Այս մասին միանման վկայում են ինքը՝ Խորենացին և Չ. Փարսեղին, մեկը մյուսին լրացնելով: Խորենացին ասում է. «Արզ՝ երբ Աստուծո սրբերի հետ այսպես վարվեցին (խոսքը Տրդատ Թագազորին Քունվորելու մասին է), էլ ի՞նչ կարող ենք մեկը տակ ձեզանից մեր կրած վշտերի համար, քանի որ վշտերն ու աղքատությունը մեզ սեփական են...»<sup>1</sup> Ե՛վ մեր կեցած ժամանակ մեզ հանդիստ, սքեան կամ ասն պատրաստեց: Քոզմու՜ իմ տակ, որ զուր չանձանհարցից շար ու տղան լիզուններ, սնտրի փառանքությունն ու կատաղի լիզվագարությունը, այլ մեր ուսումնաստաց բարքով նշույթ մատակարարանցիք նրանց անմտությունն և բորբոքեցիք ավելի քան Բարբելու նի հնարք...»<sup>2</sup> Ե՛վ հասկացող մարդկանցից նրանց լի սրբա, և ե՞րբ չեք նեղանում՝ կասեմ և նրանց, որոնք նրանց հորդորան են այսպես լինելու (Բ. դր): Ողբի մեջ ասում է. «Ե՛վ՞ զայսուհետև պետք է հարգի մեր տառու՜մը, ո՞վ պետք է ուրախանա իր սրբու առաջադիմության վրա, ո՞վ պետք է պայանանցեի առողջ վարդապետության հակառակ դուրս կեղծերին...»<sup>3</sup> որոնք մեզ ծագրում և արժամարտում են իրեն անհաստատ և ոչ մի պիտանացու արժեքա չունեցող մարդկանց: Ղայար Փարսեղցին գրում է իր թղթում փիլիսոփա Մովսեսի մասին, որ ընդհանրապես համարում է Մովսեսն Խորենացին, «Մրանելի Մովսես փիլիսոփոսը, որ քանի կենդանի էր՝ հրեշտակի նման կյանք ուներ, չէ՞ որ հայոց այդ արեղայական խումբը նրան տեղից տեղ հայտնեց, ի՞նչ որ այն լուսավորչին և նրա սգիտանալով գրքերն իրենց անգրիտությունը կույտում էին փաթեղ իկես՝, և ուրիշ շատ բաներով էլ նրան վշտացնելուց հետո՝ ուրիշներից ամաշխով խորակական կախկապությունը նրան ավելի իրեն մահադեղ և սրբի ձայնը խեղդեցին»:

<sup>1</sup> Ե. Մուս այս երկու բաները, որ սնմական հասցում սնեն՝ բացարժեղ է ազգատու՜ման, ազգավրժանման նշանակությունը (նիստորարտում, ստրաբուսնի) (Началомиа история Армении Апостол, էջ 30):

ԱՆՆԱԿԱՆՔԵՆԵՐԻ ՊԱՏՃԱՆՔԻՆԵՐԸ, Ի՞նչ է այս հայամանքների պատճառը: Ընկեր և սրա հետևորդությամբ Աստվածներն այս բանը վերացրում են արեւո հայո հողերակախության նախնանքին, որ միակզամայն անընդունելի է և հակասում է իրականությանը: Պետք է ուրիշ՝ կենդանական և սոցիալական պայմանների մեջ փնտրել այս պատճառները, քանի որ նրանք, ինչպես իսկույն կունենենք՝ սկզբունքային, իդեալային բնույթ ունեն ընթ այս հայամանքները անհաստատ բնույթ ունենային, լակ Խորենացու զեմ ուղղված՝ կարելի կլիներ զրանք բացարժեղ Խորենացու համարակախուս լիզվով, որ իրեն համարում էր ռամենիմաստ արվեստի տերը, կատարելագույն պատրաստություն ունեցող անմ, իսկ մյուսներին ասանց բաշխվու միշտ տղես էր անվանում, որով հարկավ շատերին կզրզոներ իր զեմ. կամ կարելի կլիներ այդ հայամանքները վերացրել Խորենացու առերեսությամբ զկարի Մամիկոնյանները, անդիտի ժամանակ, երբ կրտսական պատերազմի նախադրական կամ նրանից հետո Մամիկոնյանները՝ հանձնին Ղարաբեյ Մամիկոնյանի և թիչ հետո Վահանի, ազգային հերոսների անուն ու հարգանք էին վախճում հայո հողերակախության մեջ և որանց սակայն Խորենացին այս կամ այն բանում մեղագրում էր կամ պարսաբակում: Քայց, ինչպես ասացիք, երևույթը մասապայական բնույթ ուներ. հայամանքները հետևանք էին գաղտնաբարդային պայջարի:

Պայքարը մղվում էր հայ հողերակախության երկու խավերի միջև, որոնցից մեկը առքուական օրինակապիսին հետևող էր, մյուսը՝ հունակապին Ասորիները վաղուց ի վեր տիրապետող ազդեցություն էին ձեռք բերել Հայաստանում. շմոտանակ, որ քրիստոնեությունն սկսվելուց ի վեր ասորի հողերակախներով լցվեց Հայաստանը. ժամերգությունը կատարվում էր ասորիներն լիզվով. հայ պատասխանները Ասորիք էին գնում ասորիներն ստորելու, որպեսզի հայրենիք վերադառնուլով կարողանան առերին լիզվով պաշամանքը կատարել հայոց կենդանիներում: Պարսեց կառավարությունն էլ, հունակապ թագաբանություններից կապակեցով խոչընդոտ էր լինում հունարենի տարածման և խրախուսում էր առքուական ազդեցությունը, Գրեզի զյուտի համար ս. Մերսուրը Ասորիք զիմեց և ոչ Հունաստան. Ս. զիրքը առաջին անգամ ասորիներից թարգմանվեց.

<sup>1</sup> Այս անթարություն մեջ ոչ մի անհավանական բան չկու: Եթե այսու, երբ ասանք կրտսական պատերազմի պատճառները զիմեց միայն երկու Մամիկոնյան պատմիչներից և քրտանկախիով շարք բանագրությունը հենց նրանց գրածներն իման լիզվելով, իր գաղտնաբարտում կասանքն և իր փառանքում Վարդանի, ո՞րքան նոր ու առքու բաներ մեկը կրտանայինք և իրազմությունը առքուեր կերպարանք կատանար, եթե այդ պատմությունը զուրք մի սյունեցի կամ զեմ մի անկողմնապաշ մայր լիներ:

նույնիսկ հուներն զրգամքները հայերեն էին թարգմանվում ասորերեն թարգմանություններից: Ս. Սահակի զահճեկեցութեան միջոցին հասնելու հետև հայոց կաթողիկոս ևստեցին ասորի հոգևորականները: Ասորիներն ուժեղ էին իրենց մասսայով և զրգամք բարձր գիրքերով և ունեին շատ հետևողներ հայ հոգևորականության միջոց: Այս խումբը պահպանողական էր և համեմատաբար ավելի սոցիալ:

Հունական օրինեստացիան ավելի ուշ առաջ եկավ, հաճախորեն այն մասնակից, երբ ս. Մեսրոպ Քյուլանցիան զնայ իրավունք ձեռք բերելու, որ Հայաստանի հունական բաժնում էլ հայերեն գրագիտություն մտածվի, Այս թույլտվությունն ստացվեց, բայց ուրիշ փոխադարձ դիմումով, այն է, որ Ս. գիրքը երբ թարգմանվի կամ գտնել ուղղվի ըստ հունարեն բնագրի և որ հայ ուսանողությունն այսուհետև Քյուլանցիան զնա ուսում ստանալու, փոխանակ Ասորիք զնալու: Եվ տեսնում ենք, որ երեսասարգությունը փափագելով դիմում էր Քյուլանցիա, նույնիսկ ստանց իրենց ուսուցիչների թույլտվություն: Այս երեսասարգների թվին էին պատկանում նաև Խորենացի իր ընկերներով, որոնք ուղարկվեցին Ալեքսանդրիա բարձրագույն ուսում ստանալու և թերթագրական արվեստը սովորելու: Սրանք ընդհանուր հասկանելի էր ավելի լայն աշխարհայացք և ավելի բարձր կրթություն:

Այս երեսասարգները, որ հնուհնական գալիս էին Հայաստան՝ զնմ առ զնմ հանդիպում էին պահպանողական և անուսում, բայց ուժեղ հոգևորականության, Խորս զնմ էին գալիս երկու խումբ՝ տարբեր կրթություններով, տարբեր աշխարհայացքով: Փայքան անխուսափելի էր: (Հիշենք՝ որպիսի ընդունելություն զրգամ վեհաբնեց հարյուր տարի առաջ եղավ: Արքայանը էջմիածնի հոգևորականության կողմից):

Որ այս պայթյալը գասակարգային էր ու ինքնական և ոչ անհաստական կամ անձնական՝ պարզ երևում է Ղ. Փարպեցու կարևոր վկայությունը: Իր թղթի վերջում, իր կրթած հայաժամանակները նկարագրելուց հետո՝ նա ասում է. «Բայց ընդունենք, որ ես այս շարժարանները կրեցի իրավացի կերպով իմ գործերի համար. իսկ այն մյուս առաքելանման մարդիկ ինչո՞ւ այսպիսի և ավելի խիստ վշտեր կրեցին այս աշխարհում և խստագույն վշտերի մեջ վախճանվեցին»: Սկսում է բերել օրինակներ, առաջին տեղում հիշելով «Երանին Մովսես փիլիսոփոսին» (անս վերք, էջ 8): Այնուհետև ձեռագրում մի թերթ պահասում է (կամ կորելի է պատահաբար, կամ, որ ավելի հավանական է, դիմումը պահել հանել են՝ ազգային խայտառակության քսումնելի արարքներն անհետացնելու համար): Հնարող թղթի վրա շարունակություն մեջ զրգամ է մի անհայտ

անձի մասին (անուր եզել է պոկված թղթի մեջ): «Երան նշանակեց աշխարհ անհնազանդ աշխատանքների վրա զիշեր ու ցրեկի, Հայոց աշխարհի լուսավորության համար. Ոսկորները գերեզմանեց հանել էին տալիս ու գեղեր թափում, Հրեշտակավան Տերին նույն անհնազանդ հալածանքներով վախճանացրին, և զնա այժմ էլ անհաջ քիսախնդրությամբ կոզում են մեռածի հետ: Անարատ և անկեղծ հարգված հույսը, անբեռնողիկ զնա մեր սահմանը հասած, մինչ գալիս էր՝ լսեցին և ինչպես իշխում զնմ զինվեցին ասկով: Ահա մյուս թարգմանն էլ, ո՞ր է գալիս»: Եվ այն օրնայլը հեռվից լսելով մահաբեր աղեղների ճայթյուներ՝ ազոթեց բարձրային և յուր ինչպիսիք գտավ, և նրա ցանկալի նըշխարները ամփոփելու արժանացան ուրիշներ և ոչ մեկը, եվ այլն: Որքանքն բնորոշ է՝ «Ահա՛, մյուս թարգմանն էլ գալիս է՞ խոսքը: Դեռ հայրենիքի սահմանը ոտը չկոխած, զնա ոչ մի գործ չարած՝ նա իր զնմ է զիսում հուզմունքների խումբը լսել այն պատճառով, որ թարգմանել էր, Քյուլանցիայում բարձրագույն ուսում է ստացել: Որքանն պայքարը մղողում էր մի օրոշ գասակարգի գնմ, անկանխ նրանց անհաստական հանգամանքներից: Եվ երբ հայաժամերի ենթարկվածները թարգմանիչներ էին, այսինքն հունական կրթություն և օրինեստացիա տեսցողները, ապա զիսում նաև, թե ովքեր էին հայաժողովրդ, նույն Փարպեցին նրանց շարունակ անվանում էլ արեկանց հայոց, ասորական արեկա բառից (ասոր. ԵՂԱԵ կրոնավոր), մինչդեռ մյուս հոգևորականներին կոչում է պարզապես տավոր (փարաշավոր): Գարձայս տեսնում ենք, որ Մովսես փիլիսոփոսին ծաղրելու համար նրա գրքերը կոչում էին փաթաղ իկես՝ ու զարձայս ասորական բաներով, ուրեմն ասորի էին կամ ասորացիս:

Պայքարն իրը սկսվեց և ազդեալի հետևանքներ ունեցավ հայ կուլտուրայի համար:

Մենք առայժմ երկու կողմերն առիթ կարող ենք ցույց տալ այդ պայքարի՝ լիզվի շուրջը և կրոնի շուրջը, որոնց երկուսի մեջ էլ ասորական խումբը հանդիսանում է պահպանողական, իսկ հունասերների խումբը՝ առողջոյնական:

Լեզվի հարցում նորիկ հունասեր խումբը հանդես բերեց մի բարենորոգչական ձգտում՝ հայերենի մեջ մտնել գտնել մի մասը այն բազմատեսակ առավելություններից, որ ունեւ հունարենը, որով նրանք սիրահարված էին. նախդիրներով կազմված հարաբար ըստեր, համաձայ-

1 Ասորի-հունական հակամարտությունը Հայաստանում և Ֆրյույս ասորական բուրքի բնորոշ գործունեությունը առաջին անգամ մտածելից Մարտ. Ուս. ԻՍՏ. ԱՐՄ. ԱՌՈՈՒՄԱ.

նական ազատություններ, հոգիք, սեռեր և այլն, որոնցից զուրկ էր հայրենիք<sup>1</sup>:

Քաղնեով ուրիշ գրվածները՝ կարող ենք հաստատ անել, որ Փրիչոն ճառերը, Գրոնիստոսի շերտակնությունը, Եվեթրիոսի ժամանակագրությունը, Փրոտոյից գերբը արգեն Քարգմանված էին հայերեն այս Քարգմանիչների ձեռքով: Եւն ժամանակ՝ երբ դեռ կենդանի էին հոսեղեղեղեղեղեղ լիզվի պարագլուխները՝ Ազատանգեղոսի խմբագրող, Փավստոսի անհայտ հեղինակը, զուցեև Յղիհիկ ու Երջուհե: Եւրոպիայի էին այս հեղինակավոր մատենագիրները հաշտ աչքով նայել զերհոհելույն Քարգմանությունների և երանց Քարգմանիչների վրա, որոնք ահագին հեղագիրություն էին մտցնում դասական հայերեն լիզվի բառամթերքի և քերականության մեջ, նթե մեկ մտտ ժամանակեքուս և հենց մեր օրերում լիզվի բառամթերքի, քերականության և ուղղագրության մեջ նորամուծություններն այնքան քննադատությունների և բողոքների առիթ են տալիս, հիշենք Առ. Նուգարյանի և երա խմբի պայքարը լիզվի ազնուգրականների հետ, ի՞նչ կրինք, այն ժամանակ, երբ պահպանողականությունը, նախնայաց հետևելու սովորությունը օրենք էր: Մի հիշատակագիր, որի գրամբ մեջ է բերում Գ. Զարգանայանը (Մատենադարան Հայկական Քարգմանության նախնայաց, էջ 397), տառն հեղինակի անուկ ասուով, ասում է. «Ամեն ինչ անտես անելով, մեղքներ, ազգականներ, ստացվածքներ՝ փութացին ուսման վայրերը, իմաստության և գիտության տունը, երկար աշխատանքով ձեռք բերին գիտություն, գարձան ստեղծեցին՝ և բայ փրկություններ... Այնուհետև մեծ խնդրությամբ գործան իրենց աշխարհը՝ իմաստություն տարածելու... Բայց ոչ միայն բնորոշություն չգտան, այլև ենթարկվելին հեղինակների հակառակորդների կողմից. հի՛նչ էր դուրս տալիս (բաղբաջեր), ասում էին երանց. մեր պատճառն արվեստակալ լեզուն (սկսեցինք) մեկ բոլորովին անդուրեն թվում, ստու և սեռաչել է մեր իմաստությունը, անսոցուտ մեր աշխատանքը»: Եվ նրանք ախրում, խոր խոցովում էին արտմությունը:

Երկրորդ առիթը, որ ավելի սուր էր և ավելի աղետալի հետևանքներով կրոնական պայքարն էր, տարածաշրջանային Քաղկեդոնի ժողովի զավանդարտության նկատմամբ: Այս ժողովը իր ընդունած բանաձևով

<sup>1</sup> Եզվի այսուրի բարենորոգչական փորձեր, ոչ միայն բուսականության, այլև քերականական ձևերի մեջ՝ խորթ են մեղադրում, բավական է՝ ինչի ճանկահայտում, Ուսուցիչներն, Միտա Չերազեն, մեք մեջ՝ և Ստեփաննի, Ազգայնեն և ուրիշներին: Իսկ բանասերգությունը ունի շատ ներկայություններ:

<sup>2</sup> Քաղկեդոնի ժողով է սովոր, որ մեք համարում ենք ազգավարության փոխանակ սովորներ:

Փրիստոսի մի թե կրկու բնութայն մասին՝ ամբողջ քրիստոնեյա աշխարհը բաժանեց երկու հակամարտող անհաշտ խմբերի՝ երկարակներին (երկու, բնութայն զավանդողների՝ ըստ Քաղկեդոնի ժողովի բանաձևի), որոնց ամբողջներն էին Բյուզանդիոսի և Հասթի, և միաբանակների (մի բնութայն զավանդողների)՝ հոգր ամբողջներով: Այնքանագրիչալում, Անտրոսում, Անտրիքում: Հայաստանը, որ մյուս քրիստոնեյա աշխարհից կզգիցած էր: Եւ շփում աներ թե՛ Բյուզանդիոսի և թե՛ Անտրիքի հետ՝ հարկավ չէր կարող անձան մնալ այս հարցում, որով գրաբար էր ամբողջ քրիստոնեյա աշխարհը: Անտրոսի ուժեղ ազդուր Հայաստանում անարարաչալու միաբանակ էր, այսինքն՝ մեքում էր Քաղկեդոնի զավանդարտությունը: Տիմոթեոս Կուրի, հակաքաղկեդոնի ուժեղ պայքարող է՝ Հակահատությունը՝ արգեն Քարգմանված էր հայերեն Ե զարի ուխտանական թվականներին: Իսկ Հունաստանում՝ ուսում նոր սերունդը, Քարգմանչական խումբը, բնականապես երկարակ էր, այսինքն ընդունում էր Քաղկեդոնի զավանդարտությունը: Այս կերպով հայ հոգրարականության մեջ ժողովի երկդասակություն: Եւ կողմն էր, անտրոսում միաբանակ են խումբը, որ ուժեղ էր ըստ մասնաշրջանի և գրաված բարձր գիթերով: մյուս կողմն էր հունական երկարակ սակավամթիվ խումբը, որ ուժեղ էր գիտական պատրաստությունը և հենարանով՝ տիեզերական ժողովի բանաձևով: Եկեղեցին պաշտոնապես դեռ չէր ըր մնում (անաղի երկդիմի որոշումը Քաղկեդոնի զավանդարտության դեմ Հայաց եկեղեցական ժողովը կայացրեց միայն 508 թվին, ժողովից 57 տարի հետո): Ես զգվարանում էր միաբանակների սովոր խմբի դեմ դնալ և իրենում ժամանակի զգուշանում էր՝ հակահատ որոշում կայացնելով միևն իր կողմը տիեզերական ժողովի և ընդհանուր քրիստոնեական եկեղեցու հետ և շարժել բյուզանդական կայսրերի բարկությունը: Բայց ավագ եկեղեցականներն անպատուս կերպով թե էին այսին միաբանակներին երանց պայքարի մեջ:

Որ հիրավի Հայաստանում Ե զարի երկրորդ կեսում կրոնական բուռն պայքար էր մղվում և երկու կողմերը մեկը մյուսին համարում էր մուլոված, շարսիտու, հերձվածագ՝ պարզ երևում է Խորենացու ողբից: Հենց սկզբում ես ողբում է, որ հուղարկատուրյանը վզգովվեց, ազնուս:

<sup>1</sup> Մյուս ազգայնց կարծիք է համարել Խորենացու բողոքը: Հնախնայող ժողովանցից էլ չի ողբում, և մեք չէր նկատում՝ կուսում և երանց, որ ասուց հարցում են այսպես լինելը: Գ. Փարզեցին էլ չոր թղթում գրում է, թե հարձակներին մեթարկված ժամանակ դեմքը բանասերային պիտոգրիքի ինդրով չոր ցորեք թնել, արքայաբանկ կամ պատեղ, իսկ ես պատասխանում: «Ձեմ կարող էմ համարելովում ընդ անկելի, մք զուց ինչ էլ չեզ հետ թազեն»:



Քյան շնորհիվ չարախառքյանը հիմնադրվեց: Քիչ հետո նա ասում է. «Մ'ի պետք է պապականներն առողջ վարդապետարան դեմ դուրս եկողների բերանը»: Մի երրորդ տեղ նա ասում է. «Եթեմ կոհիպեր ներսից և սարափները դրսից, սարափներ հեթանոսների (=կրակապաշտ պարսիկների) կողմից և կոհիպեր ներսից կողմից: Այս վերջին հերձվածող բարո միանցումայն որոշում է հորենացու գիրքը այս պայքարի մեջ: Հերձվածող կողմում է նա; ով ճեղքվում անշատովում է կեղեկացու միտքյանից, այս անունը կարող էր որովի միմիայն նրանց, որոնք քրիստոնեական ժողովի որոշումը մերժելով, անշատով կնի քրիստոնեական կեղեկացու միտքյանից, այսինքն մխարնակներին: Արեմն բառ հորենացու, հերձվածողները, շարափառները միարևակներն էին, իսկ ուղղափառները, առողջ վարդապետություն ունեցողները Քաղկեդոնի զավանթարանությունն քնդունողներն էին, այսինքն երկաբանակները: Արարից հետո՝ վում է, որ հորենացին երկաբանակ էր, քաղկեդոնական: Այս մասին մի ծանրակշիռ վկայություն ունեն է մրաց զրակապետյանից, վրաց Արևելևոր կաթողիկոսը (Թ զարում) խոսելով Մովսեսի մասին՝ նրան կոչում է ուղղափառ վարդապետ, այսինքն քաղկեդոնական, ինչպես ինն էր՝:

Քաղկեդոնիկների մեջ գիտությունը և ազդեցությունը աչքի էր քնկնում հորենացին, գուցեն նրանց պարագլուխն էր, ուստին զլսափորպես նրա զեմ էին ուղղված կապականները: Երկար տարիների քննարկում նրան ոչ միայն անտես էին անում, ծաղրում, արժանարժեքում էին «և այլ շատ բաներով թշնամանում», այլև նրան զատապարտում էին ազրատության և զրկանքների, բայց նա անկնքն էր մնում, Շուգրմանում էր նրանց ազրատյունը, մարառում էր նրանց հերձվածողությունն զեմ: Վերջը մի ճար գտան նրան յոնցնելու, ինչպես ասում է Փարսեցիների ուրիշներից ամաչելով նրան եպիսկոպոսություն ավիլն իբրև մահազու, որպեսզի այս միջոցով նրա բարդի ճաշից կտրեն, աչք փակելով նրա կրոնական համոզմունքի վրա:

1 Ա. Լ. Մելիքոսթրի Վրաց պատմությանը, Ա. էջ 38, որ քաղկեդոնականությունը Հուստանում է անձնականը երկրներում տարածված էր Շախրի մեջ զեմ Ե գործի պատճառով է ն. Մտար փաստերով Արքայու անտեղ իր հետախց հետազոտության մեջ Արտուղ Ի միջ պաշտ նա այն միտքն է հայտնում, թե Հայ չեզոք մեջ մտածված հետազոտությունը Հայ քաղկեդոնիկների գործն էր (հույսը նկատարում է և սկզբնական Անտոնյանը «Հունարան պատմության»): Միևնույնպես համայնի մեջ, բայց Հունարանությունը լինել կազում քաղկեդոնականության հետ իբրև հետևանք, ոչ իրական է, միայնակց անկող, համարում էր հետևանք թարգմանիչների հետադարձության, հակառակ քրիստոսության:

Անց հասնել է հետոց մի զրավոր ավանդություն, որ շատ համապատասխանում է Փարսեցու այս տեղեկության և հորենացու Պատմությունից իրող հետևություն: Ըստ այս ավանդության՝ հորենացին թարգմանից թարգմանից է եղել անհայտության մեջ Վաղարշապատի շրջակայքում, մի զուրուց՝ արդեն ծերացած հասակում: նրան որոնելիս են յնում, որոնում է և նրա աշակերտակից Գյուտ կաթողիկոսը: Սա մի անգամ զայիս իջնում է այդ զուրը, նրան դիմավորում են, պատվով ընդունում: Ճաշի ժամանակ, սեզանի վրա ամեն եկեր մի բան էր ասում կաթողիկոսի պատվին. «որսնան և մի օտարական ծերունու, որ ներկա էր այնտեղ, և ասալարկեցին, որ մի բան էլ նա ասել նա սկզբից հրաժարվեց, բայց երբ թարգմանեցին՝ զիջելով՝ հակապատաստից մի շատ զեղեկից ճառ ասաց քրիստոսական սեռով, երեք տեղից բազկացած, շարականի նման: Բոլորը ապշած մնացին: Այն ժամանակ այդ օտարական ծերունու աշակերտը զիջելով կաթողիկոսին հայտնեց, թե սա այն Մովսեսն է, որին զու փնտրում էիր: Կաթողիկոսը նայում է ծերունու կերպարանից, հիշում է նրա դիմածինը, ճանաչում է յուր վաղուց կորած աշակերտակից ընկրին, վեր է կենում, համարզվում է նրա հետ և յուր հետ տանելով, Քաղկեդոնից և Արշարունյաց եպիսկոպոս է ձևանալովում Եղեկի մահից հետո: Հետո նրանից խոչորում են զրել Հայոց պատմությունը, որ նա կատարում է հրաշայի հորինվածող:

Այս ավանդության կարևոր կետերն են, առաջին՝ Գյուտ կաթողիկոսը, որ ավթոր զրովից 461—471 թվականներին, ուսումն ասել է հուլյանական Հունաստանում, ուրեմն իուլյանական քաղկեդոնիկ էր, կամ զոնն հակառակոր չէր նրանց. երկրորդ կետն է Մովսեսի ձևանալովը Քաղկեդոնի և Արշարունյաց եպիսկոպոս, բանի որ այս բանը վկայվում է և մի տարբեր ազրյուրում, մի կանոնագրքում. «Վ սրբուն Գրիգորի Քաղկեդոնից և Արշարունից մի եպիսկոպոսի վիճակ կարգեալ էին մինչև ցվախանս Քրիստոսոսորս երանելուց Մովսեսի եպիսկոպոսը, ասալ զատուցեալս՝ Երրորդ կետն այն է, որ այս Մովսեսը Ղազար Փարսեցու հիշած փրիխսփոսն է, Մովսես հորենացին:

Վերոհիշյալների ամփոփելով՝ կարող ենք հորենացու կյանքի շարունակությունը արտասահմանից վերադառնալուց հետո այսպես ձևակերպել մտապարտապես: Հունարան լեզվի և մանավանդ քաղկեդոնիկ լինելու պատճառով նա արժանաբանների ու Հայածանքի ենթարկվեց, ազրատություն ու զրկանքներ կրեց մտու երեսուն տարի, և յոթնասուտեական թվականների սկզբում, երբ արդեն վաթսու տարեկան ծերունի

1 Չ. Ավրան, Այրարատ, էջ 56:

էր՝ նպիտակապես ձեռնադրեց, որով ոչ միայն վերականգնում էր նրա պատիվը, դազարում էին հարձակումները, այլև եղապատուօր պայմաններին ստեղծումով ձերտուն համար՝ իր սիրած գրական աշխատանքներին նվիրելու: Որ իրոք նա ձերբեկան հասակում հարգված և շատ հեղինակավոր անձնավորություն էր՝ երևում է նրա Պատմության շատ տեղերից: Այս ժամանակներն էր ահա, որ Մանչի Բազրատոսի իշխանը, նրա գիտության համբավը լսած լինելով, թեև անձամբ ոչ ծանոթ, դիմում է նրան՝ խնդրելով գրել Հայոց պատմությունը: Տառապանք հայ Բազավորների և նախարարական տաճերի ծագման պատմությունը: Այս գործը, որի մասին պիտի խոսենք, նա ավարտեց Ե զարի ութսուհակուս թվականներին, մտա 483—485-ին, երբ իր խորագրով «այս ձեր էր և հիվանդուս և անպարապ է թարգմանութեանս: նրա մահը տեղի ունեցավ հավանորեն նույն զարի իննսուներես թվականների սկզբին (անանք դնում են 493-ին), համեմայն զեպո Ղ. Փարպեցու թուղթը գրելուց ոչ շատ առաջ:

Մի շարք տարածված և շատ սխալ կարծիք կա բանասիրության մեջ, իբր թե նրա մահից հետո նրա ոսկորները գերեզմանից հանել են, չուրրն են թափել: Այս առասպելը կրկնում են ոչ միայն հին գրականության անձանոթ հեղինակները, այլ նույնիսկ բանասիրները, երբեքսցու թարգմանիչները, ինչպես էմիլը և Ստեփանեն: նրանք այս կարծիքը հիմնում են Ղ. Փարպեցու վերը բերված խոսքի վրա, թե «զուգուսն ի գերեզմանին հանել և ի գեա արկանել»: Սակայն նրանք մոռանում են, որ Փարպեցու թղթում՝ Մովսեսի հիշատակությունից հետո ձեռագրից մի թուղթ է բնկած, որի մեջ թվարկվում էին հայամանրի ենթարկված որսիչ մարդիկ, որոնցից վերջինիս է վերաբերում տեղեկությունը՝ ոսկորները գերեզմանից հանելու մասին, երբեքսցին, նպիտակապես ձեռնադրվելուց հետո, որ նշան էր հայ Տոգևորականության հաշտության նրա հետ՝ իր գիտական համբավի հետ վախճում էր նաև բնդհանուր հարգանք: Հենց միայն այս հանգամանքը, որ Բազրատոսյան իշխանը նրան էր դիմել Պատմությունը գրելու խնդրով՝ շատ պետք է բարձրացնել նրա պատիվը: Այսպիսի պայմաններում նույնիսկ անհասկանալի կլինեին մահից հետո նրա ոսկորները հանելը և զեպոս անելը: Ընդհակառակը, տեսնում ենք, որ Տոգևորականությունն աշխատում էր մոռացնել տալ նրա քաղկեդոնիկ լինելու հիշատակը, և յոթներորդ զարի բանական թվականներին (Հունի Մայրաքաղաքում մասնակցության) նրա անունով մի թուղթ կեղծեցին միաբանակների ոգով, որով ձգտում էին միանգամայն ոչնչացնել նրա երկարակալ լինելու իրողությունը, որ զույց

ավանգարտը զեա հիշվում էր տեղ-տեղ, և միևնույն ժամանակ այս կեղծված թղթով Մովսես երբեքսցու հեղինակությանը, կոպել մյուս երկարեակների զեմ: Ուստի բացերիցս պետք է հրատարակել այս սխալ ենթադրությունից, թե ոսկորները գերեզմանից հանելու տեղեկությունը երբեքսցուն է վերաբերում:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ: Մեր հին մատենագրության մեջ երբեքսցին միակ անձն է, որի արհեստը, ազդորական պարագուծները և զել է գրելը, մատենագրելը: Բազրատոսի իշխանից առաջարկություն ստանալով Հայոց պատմությունը գրելու՝ որսխուսթյամբ ընդունում է և ստում, թե զս սիրելի է իր ճաշակին և մանավանդ սովորությանը, Ուրիշ տեղ առում է. «Այր ձեր եմ և հիվանդուս և անպարապ ի թարգմանութեանս: Սակայն նրա գրածին ամբողջապես մեր ձեռքը չեն հասել: Անհետ կորել են նրա այս գրվածքները, որոնց մեջ էս, իր Տառանքի մոտ 30 տարիներում, մարտն էլ միաբանակների զեմ: Հայ Տոգևորականության խիստ պարսնությունը ոչնչացրել է նրա այս գրվածքները, թե՛ ուրիշ բնկերցողները չզայթակղեցնելու և թե՛ նրա անունը երկարեակության արտախց մարտին: համար. Մի բացանայտ վկայություն ունենք Փարպեցուց, թե Մովսեսը վախճանվելու ժամանակ կրով թողել է մի ահավոր եղովք հի վերս գիտարաց քահանայութեանց: որպես զոքս՝ ինքնին (= Վահան Մամիկոնեան) գիտէք տեղեկացնալ: ուրեմն մի նայուրի գրվածք, ասկայն այդ գրված եղովքը բոլորովին անհետացած է և միայն Փարպեցու թղթից գիտենք, որ նա երբեմն գոյություն է ունեցել: նույն բախտին արժանացած կլինեն նաև նրա քաղկեդոնական ոգով գրածները: նույնիսկ նրա Պատմությունն անցել է հայ Տոգևորականության խիստ քննության բովով և ուղղադրվել է:

նրա անունով մեր ձեռքը հասել են հետևյալ ինքնուրույն աշխատությունները.

1. Ներքալան Լոբիսիմյանց (երիտասարդ հասակում գրված)
2. Պատմություն Լոբիսիմյանց
3. ձեռ Վարդավաթի
4. Թուղթ առ Մանչի Արժունի
5. Պատմություն Հայոց

Բայց սրանք, բացի Պատմությունից, կասկածելի են՝ իբրև անհարգատ գրվածքներ՝ երբեքսցուն վերագրված: նրա թարգմանական աշխատությունն է Պիտրոց գիրքը, Բանասիրությունը մեծ համականությունը նրան է վերագրում թարգմանությունը կեղծ նույնիսկենիս Պատմությունը վարուց Աղեքսանդրի և Գրիգոր Նազյանցացու (Աստվածարևի) ճառերի մի մասի:

Նոր ձեռագրերներում նրան է վերագրվում Յանթ Այնաճացույցը, բայց վերջ ի վերջ պարզվեց, թե դա Անանիա Շիրակացու գրածն է յոթերորդ դարի երկրորդ կեսում:

Կան և ուրիշ մանր գրվածքներ քերականական բովանդակությամբ, որոնք ձեռագրերում վերագրվում են Խորենացուն, բայց զրանք չեն ասպարզված և բառագրված:

Կա վերջապես նրա անունով կեղծված մի գրություն միաբնակների սրբվ. որի մասին վերջ հիշեցինք (ասպարզված է Գիրք թղթացի մեջ, էջ 22—28):

Այս կերպով՝ Խորենացու անունով ասված մատենագրությունից անկասկած նրան են պատկանում Պիտոյից դրի թարգմանությունը և ինքնագիր Հայոց պատմությունը:

Պիտոյից գիրքը ճարտասանական ձևերով է. բաղկանում է տասը գլխից՝ Պետք (որից և ամբողջ զբոս վերնագիրը՝ Պիտոյից), Երաստ, Եղ-ժաման, Հասարակ տեղիք, Ներքուշյան, Պարսավ, Բազդաստություն, Բա-րաստություն, Արտասանություն, Իրությունն Յուրաբանչյուր գլխի սկզբում համառոտ ավանդում է թեոթիան՝ ինչ կանոններով պետք է գրել, և ապա գործնականը՝ 6—7 շարագրություն յուրաբանչյուրի համար: Վերջում իբրև հավելված գրված են երեք նոր օրինակ բարաստության, որոնք պատկանում են մի ուրիշ Մովսես Բերթոզի, որ վերջը դնում է նաև մի փորատարանության հորդորական՝ իր թեոդորոս աշակերտի համար: Այս կերպով Թեոդորոս Խորենացու աշակերտը չէ, ինչպես ընդունում է Գ. Զարգասեանյանը<sup>1</sup>, այլ այս հավելվածի հեղինակ Մովսես Բերթոզի, որ որսով շատ ստոր է Խորենացուց:

Պիտոյից գիրքը թարգմանություն է հունարենից և հավանորեն Խորենացու անգղաենիկ աշխատություններից է, գուցե հենց Ալեքսանդրիայում ուսանողության ժամանակ գրված. որովհետև հունարան լեզուն նրա մեջ շատ ավելի է նկատվում, քան Պատմության մեջ, որը Պատմահայրը գրել է Ալեքսանդրիայից վերադառնալուց մտա ըստասուն տարի հետո, երբ երկար կյանքը հայ միջավայրում, հայերեն գրքերի ընթերցումը, հայերի հետ շփումը շատ մեղմացրել և շափափօրել էին նրա երթման ժայռահեղ հունարանությունը:

**ԱՅՅՅՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,** Գրանք նրա գլուխգործոցին՝ Հայոց պատմությանը, որ խկապես անմահացրել է նրա անունը և մնացել է անմահ հիշատակարան հայ մատենագրության:

Այս գիրքը նա գրել է Սահակ Բազդաստունու խնդրանք, որ, ինչպես

բանասիրությունը ենթադրում է, այն Բազդաստունի իշխանն է, որին Վահան Մամիկոնյանը և նրա համարիտ՝ ընկերները ապաստանություն տալը-րում հայտարարեցին Հայաստանի մարզպան և որ մի ճակատամարտի մեջ սպանվեց մոտ 482 թվին: Իրավաբի ընթացքում հեղինակը համարիտ գիտն է իր մեկնեանիս, նրա խնդրանքների վերաբերմամբ այս կամ այն պատասխանը տալով. որից կարելի է եզրակացնել, թե Պատմահայրը իր գրածները մաս-մաս ուղարկում էր նրան, առանց սպասելու իր գործի ավարտին:

Պատմությունը բաժանվում է երեք մասի կամ հատվածի<sup>1</sup>, որոնք կոչվում են 1) Հայոց մեծերի մենագրանությունը, 2) Հայոց միջին պատմություն և 3) Մեր հայրենիքի պատմություն ավարտը:

Առաջին գիրքը կամ մասը պարունակում է 32 դրոսի, որոնցից առաջին յոթը գլուխները նախապատրաստական նյութեր են՝ Սահակ Բազդաստունու թղթի պատասխանը և նրա խնդիրը կատարելու խոստանո (ա). Ընտեսական արդյունքների նախապատմություն տալը (բ). Մեր նախկին թագավորների և իշխանների անխմաստասիր բարքը (գ). Ազգամի և մյուս նահապետների մասին արտաքին պատմիչների տարբեր պատմածները (դ). Նոյի երեք որդիների ազգաբանությունը մինչև Աբրահամ, Իհնես և Արամ (ե). Աբրաքին պատմիչների Ս. գրքին նման և նրանից տարբեր պատմածները և Ոլիմպիզորոս փիլիսոփայի անգիր զրույցները (զ). Աբրաքին հեղինակների Բել կոչածը, Ս. գրքի ներքովթն է (է). Ուլիբերոզ և իններորդ գլուխներում պատմված է իր զբաղմբ աղբյուրի՝ Մար Աբասի և ինքնոր, որ Վաղարշակի թղթով գնում է Արշակ Մեծի մոտ և նրանից թուլլավություն է ստանում քննել նիկիզի գրադարանը. այստեղ նա զբու-նում է մի գիրք հունարեն լեզվով, որի վրա մակագրված է Լեզու, թե այս մատչանը Աղեքսանդրի (Մեծի) հրամանով թարգմանված է քաղեկ-կանից հունարենի և պարունակում է բուն հեղինակի նախկին գրությունները: Այս մատչանից Մար Աբասը ըստում է Հայոց պատմության վերաբերյալ մասը հունարեն և ասորերեն գրով և բերում է Վաղարշակին: Սա մեծ ուրախությամբ ընդունում է Մար Աբասի բերած պատմությունը, հրամայում է զգուշությամբ պահել արքունիքում, իսկ մի մասը հրամայում է արձանի վրա գրեցնել: Սերջևի (պարզ չէ, արևանի վրա գրեց-մից, թե բուն գրքի) հեղինակը պատմական անցքերին փակեթանալով խոստանում է բավարարել իր մեկնեանի հարցասիրությունը և մեր բնիկ

<sup>1</sup> Հասած կամ հատված կարգված է հունարենի հետևողությամբ, նեմո հասունի կտրել բառից τόμος (տոս—TOM)— հատված, կտոր: Ավելի սովորական ձևն է հասոր:



Եւսիսարարների Հյուզպարտությունը հասցնել մինչև քաղցիացոց Ասորական պալ թագավորը:

Տասներորդ զինով սկսվում է բուն Հայոց պատմությունը, Հայկի պատերազմը Բիլի հետ (ժ, ժա), Հայկի հաջորդները (ժբ), Արամի գործերը (ժգ, ժդ), Շամիրամի պատերազմը Արաշի հետ և կառարած շինությունները (ժե—ժը), Երբայեցոց, Քաղցիացոց և Հայոց մեծերի ծննդաբանությունը մինչև Գավթի, Ասորականպալ և Սելալորդի (ժթ), Արայան Արա (ի), Հայոց առաջին թագավոր Պարույրը և նրա հաջորդները (իա, իբ), Արծրույայաց, Գնծույաց և Անգնդանս ծագումը և Աղմուշոց բողջը (իգ), Տիգրան Երվանդյան (իդ—լ), Տիգրանի հաջորդները (լա), Եզրական պատերազմը և Զարամայրը (լբ): Տիգրանի հաջորդներից վերջինն է Լգնի Վա՛ն, որ պատամբելով սպանվում է Աղբքանդը Մակեդոնացուց, (323 ՆՔ), որից հետո, մինչև Վաղարշակի թագավորելը (132 ՆՔ) հեղինակը ոչինչ չի պատմում Հայոց մասին, ասելով թե ստույգ բան չունի պատմելու, որովհետև ազմուկ և շփոթություն էր տիրում, և շատերը մքրած էին մեր աշխարհին տիրանալու համար, մինչև որ Պարթևների Արշակ Մեծն թագավորը հեղուտություն մտաք գործեց Հայասան և թագավորեցրեց իր Էդրոքը՝ Վաղարշակին:

Առաջին գրքից հետո առանձին գրված են երկու գլուխ «Պարսից աստապելներից», որոնցից առաջինում բերված են պարսից աստապելները Բյուրասպի Անդանակի և Լրուզինի մասին, իսկ երկրորդում՝ այդ աստապելների բացատրությունը, ճշմարտյալ պատմությունը: Հեղինակը հայտնում է թե ինքն առեղիգ ատում է, նույնիսկ զգում է մեկ անձին և անհամար աստապելներից, բայց գրում է՝ առիվում ձեռնասի թախանձանքից, միայն արծան չի համարել նրանց դեռանել իր Պատմության սրել մասում, այլ գրել է զատ, ասանձին:

Երկրորդ գիրքը բազկացած է 92 զինից, սկսվում է Պարթևների ասպատակությունից Մեղեկացոց դեմ (ա, բ) և Վաղարշակին Հայոց վրա թագավորեցնելուց (132 ՆՔ) (գ), և վերջանում Տրդատի մահով (318 ՆՔ), որին և պարտակում է Հայոց 450 ասրվա պատմություն: Այս մասում պատմական կարևոր շրջանների մասին պատմելիս՝ հեղինակը հիշում է այն ասրյուրները, որոնցից օգտվել է:

Մերթը գիրքը պարունակում է 68 գլուխ «հեղինակին ժամանակով մոտ կամ քիչ առաջ պատահած անցքերը», սկսած Տրդատի հաջորդ Խուրը Փորթից (319) մինչև Արշակունյաց թագավորության բարձրումը (428), այսինքն 110 ասրվա պատմություն (ա—զզ), արևոհեակ Սահակ կաթողիկոսի Պարսկաստանից հնա զառնայք Եմուկի հետ (կհ), Եմուկի անարժան գործերը (կզ), ս. Սահակի և Մկրտչի զախանձվելը (կե) և իբրև

վերջարան՝ «Որք՝ Արշակունյաց թագավորության վերացման և ս. Գրիգորի ստճմից բահանայապետության զարգանակ մասին» (կբ):

ՉՈՐԹՈՒՄ ԳՐԹԻ ՀԱՐՅԸ: Ժ գրքի հեղինակ Թովմա Արծրունին հիշում է հորինացու Պատմության մի Չորրորդ գիրք ես: Եսիսական հիշելով Սահակ կաթողիկոսին և Հայտներով, որ նա ապրեց 120 ասրի, արևոհեակ հիշում է Սահակ թագաւորունի օպարապետի մահը, որից մի բանի տուչ հետո շարունակում է. «Սահակն այս այն Սահակն է, որոյ հրամանալ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահաշակնայ ընթուին՝ զորքն Պատմութեան Հայոց մեծաց Տրաշազան յարինուսով, սկսելով յնկարայ մինչ ի կայսրն Զենոն, ուսչ ժամանակ կենաց անկա ձգելով ամա ճԻ ի և պարտաք ձերութեանը. որպէս գրեալ ասանդեցալ մեկ այս ի չորրորդ գրուագի խոտարանեալ պատմութեան Մովսէսի ետրեանացոյ: վերագործութեան ի վերայ երկնցույց գրուագեալ հասուսմին. զոր և երանելիս Կորնն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ արբորն Մկրտչույ յնրումն ստուգարանեալ պատմութեան գլաւասիկ մեկ հաստարանացուցանել» (ս. Պետերը, 1887, էջ 75—56): (—):

Գ գրքի գլուխթունը պետք է բացիրեաց մեծել, քանի որ ուրիշ ոչ մի հեղինակ այն չի հիշում, ոչ մի հեղինակ նրանից ոչ մի բազկածք չի անում, այլ բոլոր ասաշին երեք գրքից օգտվելուց հետո զիտմ են որիշ հեղինակների և նրանցից բազկածքներ անում, քանի որ ոչ մի ձեռագիր, ոչ իսկ գրքերի ցանկերը, նա պարտակում որևէ հետք այդ գրքի գլուխթան, իսկ Գ գիրքը իր անունով «Ասարատարանութիւն մերց հայրենաց» և վերջարանի Ողբով ապացուցանում են, որ Գ գրքով էլ վերջանում է Հայոց պատմությունը Արախս որ Ք. Արծրունու մի անգամ հիշած Գ գիրքը պետք է համարել կամ թուրիմացություն կամ ազգավազություն: (—):

ՊԵՏՄՈՒՄՅԱՆ ԱՐՅՈՒՆՈՒՆԸ: Խորհնացին ձեռնարկելով նոր՝ իր նմանը Հայաստանում շունեղոց գործի, այսինքն հորինելու Հայոց սխումեական պատմությունը նախնական ժամանակներից մինչև իր օրերը՝ բնականաբար կարել պետք է ունենար աղբյուրների Ենք քանիցս անգամ զանգուսում է, թե ձեռքի ասի չունի այս կամ այն կարևոր գիրքը կա՞ն ժամանակագրական ձեռնարկը, որանցից անհայտ կերպով հյուսել պատմական անցքերն ու ժամանակները: Եվ այս զանգուստը շատ հասկանալի է մի հեղինակի կողմից, որ զգում է, թե որքան մեծ ու պատասխանատու է իր սկսած գործը և որքան ինքը զուրկ է անհրաժեշտ միջոցներից, հեռու է լուսավորության կենտրոններից, ապրում է մի երկրում, որտեղ գիրքն ընդհանրապես հազվապես մի բան էր: Ուստի նա, զրական այս անապատում, մանանայի նման ընդունում է որևէ զրկածք:

որ գտնե մի նախադասութեամբ՝ մի ակնարկով կարող էր իրեն օգտակար լինել:

Նա գործ է ածել բազմաթիվ աղբյուրներ, որոնցից մի մասը հանգանե հիշում է, մյուսները չի հիշում: Բայց այս բոլորն էլ, բացի Մարտարայան աղբյուրից և ժողովրդական երգերից, Հայոց պատմության համար երկրորդական նշանակութուն ունեն և պահանջին չեն բավարարում:

Նրա հիշած աղբյուրներն են՝ Ս. դիրքը, Մար Աբուս Կատինայի պատմությունը, Հայտաման Պետոյից, հայ ժողովրդական առասպելները կամ երգերը, Հուլիոս Ափրիկանոս (Գ դարի), Եվսերիոս Կեսարացու Եկեղեցական պատմությունը (Գ դար), Հովսեփոս Փյարիոս (Ա դար), Լարուրես (Ղերուհա) Եղեացի (մոտ Գ դարում), Խոռոհրուս (Գ դար), Փերմելիանոս Եպիփանոս (Գ դար), Ալեքսանդրոս (Ե դարի երկրորդ կեսում), Հրոպոզիտոս (Գ դար), Մանսեթոս (Գ դար ԵԲ), Յոլյումպ բարձր (Ա—Բ դար), Արիստես Փեղզացի (Ա դար), Բարգածան (Գ դար), Բարսեմա (Գ դար), Արտիթես (Գ դար): Պոլիկատես, Եվալարոս, Ալեամազրոս և Փղեզանիոս շատ հույն հետաք հեղինակներ. նաև Համերոս, Հերոդոտոս, Պլատոն, որոնցից ցիտասներ է բերում կամ անդհնություն ստանում: Հիշում է նաև Բերսոս Բաղեացուն, Ալեքսանդր Բազմավային, Արյոզնեսոսին, Կեփագիանին, որոնց նա ծանոթ է Եվսերիոսի ժամանակագրության միջոցով և ոչ թե անմիջապես:

Նրա հիշած, բայց օգտագործած աղբյուրներ են՝ հայ հեղինակներից՝ Կորյուն, վկայարանություն և. Քաղոս առաքել, Փովստոս, իսկ օտարալեզու՝ հույներն Քարգանձված հեղինակները՝ Կղնիս Ալեքսանդրոսի, Դիոդորոս Մեկիլիսցի, Փիլոս Ներսիսի, Կրիզոր Նյուսացի, Կրիզոր Նազիանզացի կամ Աստվածարև, Եվսերիոսի ժամանակագրությունը, Սուս Կայրիթենեսի պատմություն վարուց Ալեքսանդրի, Սոկրատի Եկեղեցական պատմության և Մեղրեստրոսի Վարքի հայերեն Քարգանձությունը, Եղովպոսի Կեսարությունը:

Թե ինչու՞ և որտեղից աղբյուրներից մի մասը հիշում է, մյուս մասը ոչ՞ զիման է հիշում և սպասող պատասխան տալու հոսք չի կարող լինել այն մասին, թե նա կամենում է թարցնել իր գործածած աղբյուրները: Կորյունին, Եվսերիոսի ժամանակագրությունը, Փիլոսին, Դիոդորոսին հիշելը միայն պատիվ կարող էր բերել Պատմությունը և նրան ավելի արժանազավա դարձնել, շիշելը միայն կարող էր վնասել: Թվում է, թե Խորենացին ընդհանրապես չի հիշում այն աղբյուրները, որոնք շատ հայտնի և բարձրանուն հասկանալի են, ինչպես մեկը այժմ իբրև աղբյուր ցույց չկեր սալիս հանրագիտական բառարանները, կամ ժամանակա-

գրական աղբյուրները: Գարձայ չի հիշում այն աղբյուրները, որոնք չեն վերաբերում պատմության որոշ շրջանի, այլ որոնցից նա մասնավոր անցքի մասին որևէ տեղեկություն է բազում կամ բնօրինակն ու սասցվածքներ: Գարձայ չի հիշում այն զրգածները, որոնք ինքն է Քարգանձել, ուրմեն և մասամբ իր աշխատությունն է համարում: Բայց առանձին պարմանի մեջ է այտուց Փավստոսի Պատմությունը, սրից օգտվել է Խորենացին, բայց Քարցնում է այս աղբյուրը՝ նրա խոշոր պակասությունների պատճառով:

Վերահիշյալ ավելի քան քառասուն աղբյուրներից ամենակարևորներն և բանասերներին ավելի զբաղեցնողները եղել են Մար Աբասի Պատմությունը և հայ ժողովրդական առասպելները: Մյուս աղբյուրները մեծ մասամբ հայտնի են և ուսումնասիրված. մի քանիսն էլ բոլորովին անծանոթ են, որոնց մասին ուրմեն ոչինչ չի կարելի ասել:

**ՄԱՐԱՐԱՍՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ** Խորենացին ինքը պատմում է այս աղբյուրի ծագումը (Ա. ր. Բ): Եթե ստույգ լինեն ինչ որ Խորենացին պատմում է այս Պատմության ծագման մասին, այնինքն, որ Մարարայան աղբյուրը հանված է Ալեքսանդր Մեծի հրամանով թաղված հույներին Քարգանձված մի պատմությունից՝ ապա նա կիրեն ամենահին և ամենապատվական պատմական հիշատակարանը աշխարհի վրա (չհաղված բեկտադրի և հիերոգլիֆ արձանագրությունները): և սկզբներում այսպես էլ նախում էին այս աղբյուրի վրա: Բայց եկրպուական բանասիրական քննադատությունը հնազնուն երևան հանց այս աղբյուրի կեցածիքը. նրանց հետեցին և այս բանասերները: Բնագիտությունը գտավ, որ Ալեքսանդրի ժամանակ նիկիզ բազաբը չկար, փյատուկները կույս էր. և թե նույնիսկ բազաբը գոյություն ունենար՝ նրա մեջ մատյաններ էլին կարող գտնվել, այլ աղբյուրիների վրա զրոյված սեպագրություններ, որոնք հույարներով գրովիցին անցյալ դարում նիկիզի փրատակների պեղումների ժամանակ. բայց ամենազխավորն այն է, որ նիկիզի մատյանում կամ սեպագրությունների մեջ չէր կարող պարունակվել անպիտի պատմությունը, որի մեջ Բարբելոսի և Նիկիզի աստվածները (Բեչ, Տամիրամ) պարտավ կամ ամոթյալ զերի մեջ զուրս բերված լինեին, իսկ հայերը (Հայկ, Արա)՝ իբրև զյուցագուններ և առարկություն տիպարներ: Պեղումներից զուրս եկած սեպագրությունների մեջ պատմբված են քարեկայանների և առարեստեցիների փառավոր հաղթությունները միայն՝ քաղաքների ավերելը, երկրների խողալուրը, օտար թագավորներ սպանել կամ զերելը. բայց ոչ մի անգամ իրենց պարտությունը:

Մարարայան աղբյուրի կեցածիքը բացվելուց հետո հարց ծագեց,

Քն ո՞վ է կատարել այդ կեղծիքը և ի՞նչ իրական հիմք ունի այդ պատմությունը: Շատերը կարծիք հայտնեցին, թե Մար Աբաա անունով անձ առձանաարև չի եղել, նրան հետքն էլ ինքը հորենացին, ուրեմն Մար Աբաա և հորենացի նույն անձն է: Քայց վերջը այս ժայռահող կարծիքը մերժվեց, և այժմ ընդունված է, թե եղել է Մար Աբաա անունով մի մտնոց (հայ կամ ասորի՝ հայանի չէ): որ զոր է առել հայոց նախնական ժամանակին վերաբերյալ ավանդությունները և երանց վավերականությունը՝ բնծայելու նպատակով հետքն էլ նրա ծագումը՝ նիհովնի գրասենյոց: Իսկ հորենացին հավաստեցի էլ նրա պատմածին: Իսկ այս ավանդությունների հիմքը Մ. Գարագաշյանը համարեց՝ հայն մասնակազմների ասորեականացիների և պարսիկների մասին արած պատմությունները, որ մեծ մասամբ անվավի են նվերիտի ժամանակագրությունից և հարմարեցրած են հայերին ("):

Սակայն Մարաբայան աղբյուրը, մեր կարծիքով, ուրիշ հիմք ունի, որով նախկին հմայքը կորցնելուց հետո ուրիշ նոր հմայք է ստանում, իբրև հայ ժողովրդի հիշողությունների նախահայվական աշխիճ՝ ուրարտական ժամանակների Հայաստանի պատմությանը: Երբ արարական տիրապետության ժամանակի հիշողությունները հազար տարի ապրել են ժողովրդի մեջ Սասունցի Գավթի վեպով, ինչո՞ւ նույն ժողովուրդը չէր կարող նույնպես հազար տարվա հիշողություններ պահպանել իր երկրի հեռավոր պատմության մասին. եթե նկատի առնենք, որ այդ աղբյուրի մեջ գրածը անմեղից Քիչ Բարկլոնի աստված է եղել, Շամիրամի՝ Ասորեստանի աստվածուհի, Հայկի՝ Հայոց հին աստված, որի անունով կոչված է Օրիոնի համաստեղությունը, իսկ Աբաա մի անձան՝ ռդի (համապատասխան Իշտար=Շամիրամի սիրահար Աղոնիսին), Պլուտոնի հիշած հայ էրբ, ապա զյուրով կհամոզվենք, որ այս անունների տակ մարմնացել են մի կողմից Բարկլոնն և Ասորեստանը (Քիչ, Շամիրամ), և մյուս կողմից Հայաստանը (Հայկ, Աբա), և Քիչ ու Շամիրամը արշավանքները Հայաստանի վրա՝ ապա հիշողություններ են Բարկլոնի և Ասորեստանի մղած դարավոր պատերազմներին ուրարտական թագավորների զեմ: Հիշողությունները նույնիսկ պահպանել են այս պատմական տեղերին հաջորդականությունը:

Բարկլոնի անբեղատ, որտից դար շարունակվող արշավանքները, ինչպես վկայում են սեպագիր արձանագրությունները, ապացույց են այդ արշավանքների անհաղթելիության, որ հայ ժողովրդի հիշողությունների մեջ արտահայտվել է Քիչի սպանվելով աղեղնավոր Հայկից: Իսկ Ասորեստանի արշավանքները, որոնք հաջողությամբ պսակվեցին Ուրարտուի նվաճումով, արտահայտված են Աբաայի սպանվելով Շամիրամի

զորքերից: Հետաքրքրական է, որ հիշողությունները պահպանել են Շամիրամ աստվածուհու թնորոջ գծերը՝ ազգականություն և վավաշատություն:

Այսպես ուրեմն, Մարաբայան աղբյուրի մեջ պահված են այս վաղեմի պատերազմների հիշողությունները, մինչդեռ հորենացին, որ այդ պատերազմները նկարագրում է ըստ Մար Աբաաի, հակացողություն անգամ չունի նրանց իսկական նշանակության մասին և վանի շինությունը, ուրարտական թագավորների բեռնագիր արձանագրությունները վերագրում է Շամիրամին:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ հորենացու Պատմության առաջին գիրքը մտնողպես Մարաբայան աղբյուրից չէ, այլ մի մասը միայն՝ մյուս մասերն անվավի են ուրիշ աղբյուրներից, Բերոսյան Սիրիլայից, «ի բանից արանց իմաստնոց և յայտասիկ քաջախոհաց» (Ա. ՏԻ), որոնց ստուգության մասին այնքան էլ վստահ չէ, և հատկապես Տիգրան Երվանդյանի պատմությունն առել է մեզ անձանթ՝ «Հիստորիան Պիտոնից» կոչված գերթվածից, որից պատահաբար 3—4 տող պահպանված է հայ հին քերականների մեջ:

«Եւ արց ներգործեալ ի մյուս երկիր առ խորհուրդս փողարին մեծապոյ Տիգրանայ զնոյնին Տիգրանուհի, իւր ներգործեալ զկուշարան, նաև ողջամիտ աշխարհածուի, որ վերազգովում է Դավիթ Անհաղթին:

ԱՒԱ ՏՈՂՈՂՈՂԱԿԱՆ ԱՌԱՊՅԵՆՆԵՐԸ. հորենացին հաճախ պատմական նյութ է քաղած ժողովրդական երգերից և ավանդություններից, որոնց նա զանազան անուններ է առլիս՝ երբ վիպասանաց, երբ Թուլիսաց, վիպասանք, երբարանք բանավորք, ցոյցք, բանք, առասպելք: (Սրանց մասին տե՛ս ծանոթ. 8): Այդ ժողովրդական բանահյուսություննց նա շատ անգամ բառացի բերում է հաստատներ, իսկ երբեմն բերում է նրանց կարճառատ բովանդակությունն իր խոսքերով: Այսպես՝ նա վահագնին վերաբերյալ հաստատ բառացի մեղերիցուց հետո շարունակում է. «չխո որոյ և ընդ վիշապաց ասկին յերգին կուռլ նմա և յաղթել և կարի իմն նմաեզդուն զՂերակլեայ նահասակութիւնս նմա երգիլին: Այլ և ասն զսա ստովածասեցալ, և սնդրի ի վրաց աշխահին զտար շափ հասակին կանցնելալ պատուովն զուհերս (Ա. լա.)»: Այսպես նաև Արտուրիների ծագման մասին կարճառատ հիշում է առասպելք. «Թողում զառասպելաց քաջազանս որ ի Հաղամակութոյն պատուի—

1 Տե՛ս Միսրան (Գ. Տեր-Մկրտչյան) հորենացու ուսումնասիրության, Վազաղագրագրագ, 1896 թ. կշ 57—58:



մանկան ներհույ անձրն և արև հակառակաւ, և հովանի թռչոն՝ պատանայն թափացելոյ» (Ք. է), նույնպէս՝ «Է պարսից աստապիաց» վերնագրի տակ առաջին գլխում շատ կարճ բերում է Բյուրասպի Աժդահակի մասին աստապելները: Բողոնելով Հայկի, Արամի, Արաշի և Տիգրան Երվանդյանի պատմությունները, որոնք ժողովրդական ծագում ունեն, բայց հորենացի ձևերն անցել են գրագոր սարչությանով, ինքն անմիջական ժողովրդական բանահյուսությունը օգտվել է Վահագնի, Վարդգի Մանկան, Տոքր Անգղեզի, վիշապազունների, Բյուրասպի Աժդահակի, Երվանդի, Սանատուկի, մանավանդ Արտաշես Բ-ի և Արտավազդի մասին գրելիս: Արամի պատմությունը դեռ չէր ձևափոխված՝ եւս իր մեկնությանի հայտնում է, թէ Արամի մասին պատմվում են շատ քաջություններ ու հաղթություններ: «Բայց զընդարձակութիւն պատմութեան սորս և զգործս քառութեան... թէ կամիցես՝ արտաքոյ յայտնից զորոց կարգեցանք և կամ թողցուք, ապա թէ ո՛ր ի սմին» (Ա. ժք): Շատ աստղերնակ է թվում, որ հորենացին հումարություն է հայտնում իր պատմությունից զօրս ոչցելու այնպիսի պատմություն, որ շատ թանկեղան արեք է համարվեր, մանավանդ այնպիսի հին ժամանակի և նահապետի վերաբերմամբ: Բայց հանձնելով շուտով պարտություն է Արամի պատմության վերջում հորենացին ասում է, թէ այս պատմությունը բուն թագավորական մատյաններում չէ եղել, այլ «ի փորձոց անասն և յաննշանից արեց ի զուսանակակնն այս գտանի ժողովակ ի զիվանի սարունեաց» (Ա. ժք. Սե. բնութի Մար Արասի Մծորանայն էլ չունի Արամի պատմություններից և ոչ մեկը, այլ միայն անունն է՝ հիշում): Արտաշես Բ-ի թագավորության մասին հայտնում է. «Արտաշեսի վերջոյ գործը՝ բազում ին: յայտնի են ընդ ի վիպասանացն, որ պատմելի ի Գողթան — շինել զբազարն և խնամությունն ընդ Ալանս և մծուկոց զարմին և նրբ արհանք Մաթինկայ ընդ վիշապազունս՝ աստապելաբար... մարտ ընդ ճուս և քաշալումն ինչ՝ իրանութիւնն և սպանումն նոցա և ճրկելութիւն շինուածոցն և նախած իրանոց Արտաշեսի և զգրգութիւն ընդ միմեանս ի մէնս կաննեցն» (Ք. խթ): Այս խոսքերից նրկում է, որ Գողթան վիպասաններն ընդարձակ պատմական տեղեկություններ էին պարունակում Արտաշեսի գործերի մասին, որոնցից հորենացին օգտվել է: Նույնը տեսնում ենք և Արտավազդի վերաբերությունը, որի կյանքի գծերն ու գործերը. սկսած մեռուցից, նրբ «վիշապազունք զոգացան դանտունի Արտավազդ և զն փոխանակ եղին», մինչև մահը, երբ քաղերի ձևերով բանասրկվեց ազատ Մասիսի վրա և սպանումն է, որ մի որ զուր կզա և աշխարհս կոտիս՝ այս բոլորը նշոթ է եղել ժողովրդական բանահյուսության: Ուստի սխալ չի լինի ենթադրել, թէ այս երկու թագավորների կյանքն ու գործունեությունը ծայրահայտ

պատմվելիս և երգվելիս են եղել հայ աշուղներից, բայց հայտնի չէ, իբրև մի ամբողջական միակտուր վեպ, թե մանր անգամ երգերով: Ավելի հավանական է առաջինը: (Համեմատել Գավթի և Մհերի վեպի հետ):

Հորենացին ինքնուրույն եղանակ ունի ժողովրդական բանահյուսությունից օգտվելու: Նա ժողովրդական վեպը՝ աստապելը համարում է այլարանություն, այսինքն այնպիսի մի պատմվածք, որ արտաքին նյութական բովանդակության տակ թաքցրած ունի ներքին բովանդակություն, իրականը, կարևորը, ինչպես տառիների մեջ: Այսպես՝ եւս պարսից աստապելների մասին իր արձամարձանքն է հայտնում ասելով. «Մի՛ արեք յունեական պերն և ողորկ աստապելքն իցեն հանդերձ պատճառաւ, որք զճշարտութիւն իրացն այլարանաբար չիբրեանս ունեն թագուցեալս: Նույնպես Արտաշես Բ-ի մասին վիպասանների բովանդակությունը հիշելով ասում է. «Այս ամենայն, որպէս ասացուք, յասնի են ընդ յերգս վիպասանեացն, բայց ինչաստանեացը և մեր կարճառուտիք և յայլարանութիւնն ճշարտեսցուք» (Ք. խթ): Այսպիսի հասկացողության բնական հետևանքն այն է եղել, որ հորենացին երբ կամ աստապելը կարճառուտ բնկելով՝ ինքը նրան մեկնում է, այսինքն՝ այլարանությունը բացատրում է, կամ, ինչպես ինքն է ասում՝ «Ճշմարտում էս: Եվ ինչ, որ մենք հորենացու մեջ կարգում ենք իբրև պատմություն Արտաշեսի, Արտավազդի և ուրիշների մասին, որոնք ծագում են ժողովրդական վեպից՝ իսկապես նույն ինքն հորենացու մեկնությունն է, ժողովրդական վեպի այլարանությունից» երա ստեղծած «Ճշմարտեալ պատմությունը»:

Ուտի ազալում եմ քո տերությունը, որ հրամայես արքունական դիվանը բանալ քո հզոր տերության նեղակայացող այդ մարդու առաջ, որպեսզի քո եղբոր և որդուն ցանկայի (պատմությունը) գտնելով՝ փութով բերն: Հավատացած եմ, որ մեր բավականությունը, որ կունենանք (քո) կամքը կատարելով, թեզ ես ուրախություն կլինի: Ողջ եղիք, աստվածների մեջ բնակությունը երևելի՞ զո:

Արչալ Մեծն ընդունելով Մար Արաս կատինայից գրությունը, մեծ հոժարությամբ հրամայում է առաջադիել նրան արքունական դիվանը, որ ներկվումն էր, միանգամայն ուրախանալով, որ այսպիսի մտադրություն ունի իր եղբայրը, որին հանձնարարել էր իր թագավորության կեսը: (Մար Արասը) աչքի անցկացնելով բոլոր մատչանները՝ գտնում է մի մատչան հունարեն գրված, որ ունի, որ ասում է, այսպիսի վերնագիր.

### Մատչանի սկիզբը

Այս մատչանն Աղեքսանդրի<sup>36</sup> հրամանով քաղզեարեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հնդերի և նախնիքների պատմությունները:

Որի սկզբում, ասում է, նշանակված են եղել Չրվանը, Տիտանը և Հայգետոսթեն, և այս երեք նախարարական մարդկանց սերունդներից բոլոր նշանավոր մարդիկ յուրաքանչյուրն իր տեղում զսասավորված երկար տարիների ընթացքում:

Մար Արաս կատինան այս մատչանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրեթով՝ բերում է Մծրին, Անգարազի թագավորին<sup>37</sup>: Եվ բարեկամ ու քաջ արհղանավոր, արի Վաղարշակը, կործախոսն ու հանձարիքը, բնգունելով այն՝ համարելով առաջինն իր գանձերի մեջ՝ հրամայում է մեզ զգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից հրամայում է արձանի վրա դրոշմել: Որից մենք հավաստի տեղեկանալով գրույցների կարգին՝ կիրկենք այժմ, քո հար-

ցապիտությունը (զոհանգնելով), հասցնելով մեր բնիկ նախարարությունները մինչև քաղղեացոց Սարգանապալը և զեռ ավելի մոտ:

Պատմությունն այսպես էր սկզբով:

Վասովածներից առաջինները աճել էին և երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բողմատարություն սկիզբ: Մրանցից առաջ կկան հսկաների սերունդը, անհեթեթ, հաղթանգամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությունը հղանալով մնան աշտարակաշինություն ամբարշտ խորհուրդը, որը և մեռնարկեցին իրագործելու: Աստվածների ցաստից ինչոր ահազին և աստվածային հոգով փչելով կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ ազմուկ և շփոթություն է բնկնում: Մրանցից մեկն էր և Հայգետոսթյան Հայկը, անվանի և քաջ նախարարը, հաստ աղեղով և հզոր նեռածիր:

Բայց մենք կդադարեցնենք զուրացարանության այս կարգը, որովհետև մեր եղադասանն է ոչ թե պատմությունն ամբողջությամբ զրել, այլ աշխատել ցույց տալ մեր առաջին և բուն հին նախնիքներին: Արգ՝ նույն մատչանից սկսելով կասեն. Հայգետոսթեն, Մերոզ, Սիրոսթ, Թալլալ, որ են Հարթթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ: Որից հետո նույն մատենագիրը շարունակելով ասում է կարգով Հայկ, Արամանյակ և այլն, որանց մասին արգեն հինջի ենք:

### Ժ

### ՀԱՅԿԻ ԱԳՍԱՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս Հայկը, ասում է, վայելչակալով էր, թիկնավեա, խիստ զանգուր մազերով, վառվառն աչքերով, հաստ բաղակներով: Սա քաջ և երևելի հանրեացավ հսկաների մեջ, ղիմարդոլ այն բոլորներ, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և զուրացունների վրա տիրապետելու: Սա խորխուսակալով ձեռք բարձրացրեց Բելի բանավորության զեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնություն վրա, բազմամբոր հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելազարված, սուրն բնկերի կողն էր կոխում, ձգում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահամբ հաջողվեց բանալ և բոլոր երկիրը զրավել: Որին Հայկը զկամենալով հեռագնել, Բարեկրտում Արամանյակ որդին ծնելուց հետո, շվեց զնաց Արարագի<sup>38</sup> երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, զուտարեթով և որդիների որդիներով, որ զորա-

վոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի: և որիչ ընդգծիներե՞րով<sup>25</sup>, երան հարած եկվորներով և բոլոր տունտանեղով<sup>26</sup>: Գնում բնակվում է մի լեռան սարսուռում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավա-  
թիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայից երանց իրեն հնազանդեցե-  
լով՝ աշխտեղ կազմածում շինում է բնակության տուն<sup>27</sup> և տալիս է ժա-  
տանգություն կազմուսին, Արամանյակի որդուն: Աս արգարացնում է տա-  
ված անգիր հին գրույցները:

Իսկ ինքը, ասում է (Մար Արասը), իր մնացած մարդկանցով և տունտանեղով շարժվում է զեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնա-  
կում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարթ, այտինը թե այտեղ ընտելոցները հայրեր են Քարգամի տան տերունցին: Երևում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հալիաշեն, Այտեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնահիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավթիվ մարդիկ, որոնք կամօվին հնազանդվել են դուռազգիին: Այս էլ արգարացնում է ասված անգիր գրույցները:

## ՓԱ

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲԵՆԻ ՄԱՀԱՆ ՄԱՐԿՆ:

Խոսքը շարունակելով (Մար Արաս) ասում է, թե իբր Տիտանյան Քիչը<sup>28</sup> իր թագավորությունն ամենից վրա հաստատեց, ապա իր որդի-  
ներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կող-  
մը Հայի մոտ, որ նա հնազանդության դա և խաղաղությանը ապրի: Երբ ցուրտ սառնամանիքների մեջ ընկվեցին, ասում է, սակայն տա-  
քացրու և մեղմացրու՝ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդելով խաղաղ ապրի՝ որտեղ որ կհասնես իմ երկրում  
բնակության տեղ ընտրելու: Հայից Քիչը պատգամավորներից հետ է գարձնում խառուցվամբ պատասխանելով: Ուղարկված (պատգամավորը)  
վերադառնում է Բարելուն:

Այն ժամանակ Տիտանյան Քիչը զորք է ժողովում նրա զեմ և հե-  
տևի զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարտղի երկրքը, Կալմուսա տան մոտ: Կալմուսը փախուսում է տալիս Հայիի մոտ, իրենից առաջ արագակցան (մարդիկ)՝ ուղարկելովը՝ Երեսանց եղից, ասում է, ո՞վ մեզից դուրսգալուներին մեզ, որ Քիչը զեմում գալիս է քո վրա հավերժական բաշերով և երկնից հասակով՝ արքայ հանդեսներով: Եվ ես լսելով, որ նա մտախել է իմ տանը՝ փախա և ահա տաքնապած գալիս եմ թեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես:

Իսկ Քիչը հանդուգն և անճանի ամբոխի գործիքամբ, ինչպես մի հեղեղ, որ գահավայրից ներքև է վիժում, շատգում էր հասնել Հայիի բնակության սահմանները, գտա՛ւ: Ինչևի՞զ գործգոր մարդկանց արտե-  
րի և անճեղի վրա: Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հակառ, խիստ գան-  
գուր մաղերով, վաճառում ուշերով, շատագով հավարում է իր որդիներին և թոռներին, բայց և աղեղնավոր մարդկանց, թվով շատ եմվող, և որիչ մարդկանց, որ ձեռքի տակ տներ, զեմո՛ւ հասնում է մի ձովակի ափ<sup>29</sup>, որի շրերն աջ են և մանր ձկներ են պարունակում: Եվ իր զորքերը կան-  
խալով ասում է նրանց. «Երբ մենք զուրս կանք Քիչի ամբոխի զեմ, աշ-  
խարհը այն տեղին պահել, որտեղ կանցնած կլինի Քիչը՝ քաղերի խուռն բազմություն մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխր Քիչի ժա-  
տայություն տակ ընկնի, կամ մեր ժառանգի հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք»:

Եվ ամբողջ առպարեղներ<sup>30</sup> զեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձ-  
րագույն լեռների միջև մի դաշտան անդ: Եվ շրերի հոսանքի աջ կող-  
մում՝ բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գրոխները վեր բարձրացնելով տեսնում են Քիչի բազմաթիվ ամբոխի անկարգ հրասա-  
կը, որ հանդուգն հարձակումով ջրուղուց վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Քիչը, մեծ ամբոխով հանգարտ կանցած էր ջրի ձախ կողմում մի ըլրակի վրա՝ իրեն դիտանալու: Հայից ճանաչեց սպառա-  
զիկնավ ջեկատի խումբը, որտեղ Քիչը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա և ամբոխի մեջ: Նա կրում էր երկաթե դիտանոց, նշաններ կրող վերքերով՝ թիկուսի և շանչի վրա պղծեմ ասխառակներ, որտեղների և Քեների վրա պահպանակներ, մեքեր կապեղ էր դառն, որից ձախ կողմից կախված էր երկաշարի սուրը. աջ ձեռքում զանել էր հակալական երկաղի, իսկ ձախում՝ վահանը, նրա աջ և ձախ կողմում ընտիր (գորակաաններ): Հայից տեսնելով այնից ստատուհիված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայր-  
ներով առ կողմը՝ Կալմուսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, արովհետև աղեղ և սուր (գործածելու մեջ) կարգի մարդիկ էին, ինքը կանգնեց աղեղի և մյուս բազմությունը կանգնեցրեց իր հետևում, գա-  
նավորից մտաավորապես ետանկելունի ձևով և հանգարտ առաջ շարժվեց:

Երբ երկու կողմի հակառակ իրար մոտ հասան, երկրի վրա ահա-  
գին դիրքում բարձրացրին իրենց զրոհներով և իրար վրա ահա սար-  
սուց էին դառն իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից աչ սակավ հաղթանակում մարդիկ սրի թերանի հանդիպելով թավալվում

ընկեամ էին զեախն, և կոխն (անորոշ էր մեռւմ), երկու կողմերն էլ տեպարտեղի մեալով: Այս անպարտեղի տարակուսական զիպվածը տեսնելով՝ Տրամանյան արքան զարհուրեց, և Տեա բազմելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամբանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորտ անգամ ճակատամարտ սարքի: Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ բաշտում է լայն-նայրձն աղբը, երկրֆէյան նեադ դիպցնում է նրա կրծքի տախտակին, և այսբը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, զեախն է խրքվում, այս կերպով՝ ճոխացած Տրամանյանը կործանվում, ընկեամ է զեախն և շուրջը փռում է: Իսկ ամբոխն այս բաբոթյան ահազին զործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը գործարած կողմը, Այլըստեր բավական լինի այս մասին:

Բայց ճակատամարտի տեղը շենցնում՝ զարձնում է զաստակներս և անուրը զնում է Հայք, հաղթական պատերազմի պատճառով, որտեղց զավանն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր: Իսկ այն բլուրը, որտեղ Ռենը ընկավ բաշ զորականների հետ՝ Հայկը կոչեց Գերկմանք, որին այժմ ասում են Գերկվանակ: Բայց Բիլի զիպից, ասում է (Մար Արաս), զեղբորով գմտանալով՝ Հայկը հրամայում է ասնել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:

**ԺԲ**

**ՀԱՅԿԻՆ ՍԵՐՎԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՆՐԱՆՏԻՑ ՅՈՒՐԱՎԱՆՉՈՒՐՆ ԻՆՉ ԳՈՐԾԵՑ**

(Մար Արասի) մատչանում քրանց հետո ուրիշ շատ բաներ են պատմվում, բայց մեք կշարունակենք այն, որ պիտանի է մեր հավարման համար:

Մրանից հետո, ասում է նա, Հայկը գտնում է իր բնակության տեղը, իր կազմու թողին, շատ ջան է պարգիւնով պատերազմի ավարտից և անվանի մարդիկ իր ընդոծիներէրց: Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը զնում զաղաբարում է Հարք կազմած դաշտում: Սա տարիներ ապրելով՝ Արամանյակին ծնավ Բարկրտում, ինչպես վերն ասացինք, դրանից հետո զարձայ ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռնում է, ամբողջ ազգը հանձնելով իր Արամանյակ որդուն:

Սա իր կարգաբերիցը Երկուսին, Խողին և Մանավազին, իրենց բոլոր

աղխով թողնում է Հարք կազմած տեղում, ինչպես նաև Մանավազի որդուն Բազին: Մրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բաղը, ժառանգում է աղի ծովի արևմտյան հյուսիսային ափը և զավանն ու ծովը կոչում է իր անունով: Ասում են, որ քրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնեւայց լաւապետութունները, նաև Որդունի կազմածը, որոնք վերջերս, ասքը Տրգատից հետո, մեկը մյուսին ոչնչացրին պատերազմով: Իսկ Խողը բազմանում է հյուսիսային կողմերում, շենք է հիմնում, և, ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ շարունակում է Խողառուններիցից քեղի մեծ նախարարությունը, բաշ է անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են:

Իսկ Արամանյակը բոլոր բազմութունն աննելով շվում է զեպի հյուսիսային արևելք և զնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաշատահ գետ էր անցնում արևմտյան կողմից, և գիշերը կարծես թերված էր զեպի արևելք և երկարությամբ ձգվում էր արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում էին բազմաթիվ ակնանկիտ աղբյուրներ, որոնք միանալով, զեախ կազմելով, հեղաբար հոսում են նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և զաշտի ափերով, որպես թե պատանիներ չբեկն կրիտասարգուհիների մոտերը: Իսկ հարավային արեղակնանծ լեռը, սպիտակափառ զագաթով, ուղիղ բուսն էր երկրից՝ պինդ գոտնորված մարզու երեքորչա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հեազհետև որվում էր զեպի վեր, իսկպպես մի ձերունի լեռ՝ երիտասարդագամ լեռների մէջ: Արամանյակն այս խոր դաշտում բնակելով՝ նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արաղած, իսկ կալվածը՝ ոտն Արաղածո (Արաղածի ստորոտ):

Բայց քրանելի մի բան է ասում պատմագիրը, թե շատ տեղերում ցերտյան բնակվում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր ընկի նախնի Հայկի գալուստը:

Արամանյակը տարիներ ապրելուց հետո ծնավ Արամայիսին, որից հետո էլի բավական տարիներ ապրելով մեռավ: Նրա որդին Արամայիսը իր բնակություն համար տուն է շինում զգետի ափին մի բլուրի վրա և իր անունով կոչում է Արամվիր, իսկ զնոր կոչում է Օրտայ՝ իր թուան Օրաստի անունով: Իսկ իր որդուն, բազմագագան և շատակեր Շարային՝ ամբողջ աղիով ուղարկում է մի մերձակա արագավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արաղածի թիկունքում, որտեղ շատ քրեր են հոսում, նրա անունով, ասում են, զավարտ կալվեց Շիրակի Ուտու, թվում է, թե արգաբանում է զուղաղների մեջ զործածվող առաքը, պիտ, ասում են,

Շարանի որդորն ունև, բայց մենք Շիրակի ամբարները շունկերը Այս Արամայիւր տարիներ ապրելով ծնավ Ամասիային, որից Նետո էի տարիներ ապրելով մեռավ:

Ամասիան Արամայիւր բնակվելով տարիներ անցնելուց Նետո մտում է Գեղամին և Գեղամից Նետո արի Փառոսին և Յուլակին: Մրանց մեկուց Նետո զեան անցնում է, մտնելում է Տարալային լեռան: Այստեղ, լեռան ստորոտում, խորշերում, խորշ ծախերով շինում է երկու տուն, մեկը զեպի արևելք, լեռան ստորոտից բեռը աղբյուրների պեղեկների մոտ, իսկ մյուսը՝ այդ տեղից զեպի արևմուտք, երակից Նետո՝ Նետակ մարդու կես օրվա ճանապարհով երկար օրում<sup>60</sup>: Այս տները նա ավելից մասնագրվելուն իր երկու որդիներին, արի Փառոսին և կայստա Յուլակին, որոնք արևտեղ բնակվելով՝ իրենց անունով կոչեցին այդ տեղերը, Փառոսից՝ Փառաստո և Յուլակից՝ Յուլակերտ: Իսկ լեռը Ամասիան իր անունով կոչեց Մասիս<sup>61</sup> և Նետո նորից Արամայիր դառնալով կարճ տարիներ ապրեց և մեռավ:

Իսկ Գեղամբ տարիներ անցնելուց Նետո Արամայիւրով ծնավ Հարամային. նա Հարամային թողեց Արամայիւրով բնակվելու իր որդիների Նետ, իսկ ինքը զնաց արևելյան Նյուսիսում եղած մյուս լեռան Նետի կողմը, մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շենեքը Գեղաբունի, ինչպես կոչվում է նաև ծովը: Այստեղ նա ծնավ իր Միսակ որդուն, որ մի սեղ ու թեկնակն, վայելչակազմ, կորովաստ, զեղեցիկ աղեղնավոր էր: Երան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իրեն մտառ<sup>62</sup> և երա մասնագրվելու սաճան է կորում ծովից զեպի արևելք մինչև մի դաշտ, որտեղ Նրասիի, սեպացած լեռները ճեղքելով, երկար ու եղ ձորերով անցնելով, աճարի շառայունով թափվում է դաշտը: Միսակն այստեղ բնակվելով, իր բնակության սաճանները լցնում է շինություններով և աշխարհը իր անունով կոչում է Մյունիք: Բայց պարսիկների ավելի ճիշտ կոչում են Միսական, Վերջերը Վաղարշակ, Հայոց առաջին թագավորը պարթև ջեղից, գրանելով սրա սերունդներից անվանի մարդիկ՝ այս աշխարհին անը և նշանակում, որ Միսական ջեղն է. Վաղարշակ այս անուն է պատմությունից իմանալով. թե ինչպե՞ս այս եղավ, իր սեղունը կպատմենք:

Իսկ ինքը Գեղամբ նորից գտնում է Շրշյալ գաշար, և նույն լեռան ստորոտում, մի ամուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամբ, որ Նետո նրա թոռան՝ Գառնիկի անունով, կոչվեց Գառնի Վերջերը, Վաղարշակի թոռան՝ Արտաշեսի մամանակ, սրա սերունդներից մի պատանի է եղել Վարսած անունով, եղբորունների, այլոյանների և

Վարազների որսերում Տառղակ, ումեղ և ճիշտ նեամակը: Մրան (Արտաշեսը) նշանակում է արքունական որսերի վրա և շենք է պարզում Հրազդան կոչված զեպի ափերին: Մրանից, ասում են, առաջ է եկել Վարսանյանաց տունը: Այս Գեղամբ, ինչպես ասացինք, տարիներ ապրելով ծնավ Հարամային, որից Նետո էի ապրելով մեռավ և իր որդուն՝ Հարամային հրամայեց Արամայիւրով բնակվել:

Այս է Հայկը, հայ ազգի նախնին, որ Թորգոմի որդին էր, սա՞ Քիրասի, սա՞ Գամբի, սա՞ Հարթի, և այս նե նրա ջեղերն ու սերունդները և երանց բնակության աշխարհը, ԱյնուՆեան, ասում է (Մար Արաքը), նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել:

Հարաման տարիներ ապրելով ծնավ Արամին:

Արամի մասին պատմում են, թե շատ բաշ գործեր է կատարել հազարակն պատերազմներում և ընդարձակ է Հայաստանի սաճանները բուրդ կողմերից, որի անունով էլ բուրդ ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես Նույնից՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ: Բայց սրա ընդարձակ պատմությունն ու քաղցրության գործերը, թե ի՞նչպես և ո՞ր մամանակ կատարվեցին՝ եթե կամենաս՝ այս գրքից դուրս կգտեղեցր, կամ բաց կթողեցներ, իսկ եթե ոչ՝ կգտեղեցր Նեկց այստեղ<sup>63</sup>:

ԺԳ

ԱՐԵՎԵՆԻՆԵՐԻ ԼԵՏ ԳԱՆԵՐԱԶՄԻ ԵՎ ԼԱԳՑՈՒՌՅԱՆ ԵՎ ՆՅՈՒՆԱՐ ՄԱԿՆԻՄ ՄԱՆՎԱՆ ՄԱՍԻՍ

Եվ որովհետև մեզ հանելի թվաց քո հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, բան ուրիշներեց (սահաբարկված) սերտություններն ու կիրախումը, ուստի համաձայնեցին կարճատև մեկ րեքի քրոյցները Հայկայն Արամի վարսած պատերազմների մասին: Մա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, բան տեսնել, թե ի՞նչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սաճանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա:

Այս Արամը նիսոսի Առաքեստանին և Նիկեմիս տիրելուց ինչ տարիներ առաջ, շրջակա ազգերից եկվելով՝ ժողովում է բնասանի բաշ և աղեղնավոր, շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, քրտոս և պատերազմելու հմտուս նա պատահում է Հայոց սաճաններին մաս



մեղացեց ճիշտասարգներին, որոնց առաջնորդում էր մի ումն Նյուբար Մարգն<sup>50</sup>, մի հպարտ և պատերազմասեր մարդ, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը: Որ մի անգամ բուշուհների նման ասպատակելով (ձիբրի) ամբակներով ոսնակոխ արավ Հայաստանի սահմանները և երկու առաքի իրեն ծառայեցրեց: Արամը հանկարծակիորեն նրա վրա հարձակվելով արևը ծաղկուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամբարներ և իրեն՝ Նյուբարին էլ, որ Մաշնա էր կոչվում, ձերբակալ անելով բերեց Արամվիբ և այնտեղ պարսպի աշտարակի ժայռին հրամայեց պատին վարակել, կրկնակ ցից միելով ճակատի մեջ, ի ցույց զինելով անցորդներին և բույր եկվորներին, իսկ նրա աշխարհը, մինչև Չարասպ կոչված լեռը, իրեն ծառայեցնելով հարկատու դարձրեց մինչև Նինոսի թագազավորին Ասորեստանի և Նինովիի վրա:

Իսկ Նինոսը Նինովեում թագավորելով՝ մտրուճը պահած ուներ իր նահանգի՝ Բելի վրեժի հեշտասակը, զրույցներից լսած լինելով, և Երկար առաքիներ մտածում էր վրեժխնդիր լինել, գլխելով ու սպասելով նպաստավոր ժամանակի, որպեսզի բաշ Հալկի սերունդներից սերմանված ամեն մի ճեռ ոչնչացնե: Բայց կասկածելով, թե այսպիսի ձևերակութվորներ կարող է նրա թագավորության կրտսյան պատճառ դառնալ, իր շար խորհուրդը թարցնում է. (Արամին) հրամայում է առանց կասկածի իր իշխանությունը վարել, իրավունք է ապխա մարդարտե վարակալ կրել և իր երկրորդը կոչվել: Բայց բավական լինի այդպես սպաժք, որովհետև մեր առաքիկա զործը թույլ չի տալիս երկար կանց անել մեր պատմության սկզբում:

**ԺԿ**

**ԱՍՈՐԵՍԱՆՆՈՒՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՒՎ ԵՎ ՀԱԳՓՈՒՅՈՒՄ ԵՎ ԳԱՅԱԿՈՍ ԲԱՆՂԱՅԻ ՄՐԱՆԻ, ՆԱԿՎ ԿԵՍԱՐՈՍԻ ԵՎ ԱՍՈՍԻ ԵՎ ՄԹՈՍ ՀԱՅՔԵՐԻ ՄՐԱՆԻ**

Կարևորտ խոսքերով հեշտասակներ ինչ որ նույն ժամանակում պատմվում է նրա բաշության գործերի մասին Արևմուտքում, և առաքեստացիների հետ կոնվեր, զնպարի պատճառ ու նշանակությունը միայն հայտնելով, իսկ գործի բնկարծակալությունը համառոտ խոսքերով բացատրելով:

Նույն այս Արամը, արևելյիների հետ նակատամարտը վերջացնելուց հետո, նույն գործովամբ շարժվում է Ասորեստանի կողմերը. այնտեղ ևս գտնում է մի ուրիշ ապականել: Իր երկրի, Բաբլամ անունով, հսկաների ղեկից, շորս բույր պատասխան հեռականելով և հինց հազար հետ,

լայնելով. նա խիստ հարկերով սատակ նեղելով անապատ էր դարձրել բույր շրջակայքը: Արամը պատերազմով նրան ընդհարվելով՝ հալածում է նրան Կորդոքի միջով մինչև Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով: Բաբլամն էլ նրա զինակիրների առաջը պատահելով սպանում է: Այս Բաբլամին ասորիները երկար ժամանակ ստովածացրած պաշտում էին նրա բազմաթիվ արիական գործերի պատճառով: Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամը հարկատու ծառայության մեջ պահեց երկար ժամանակ:

Իսկ ինչ բաշության գործ որ սա կատարեց արևմտյան կողմը Տիտանյանների հետ, մենք զեռ պետք է պատմենք: Սա զեռի արևմուտք շարժվելով, առաջինի վրա շորս բույր հետևակ և երկու հազար հեծյալ (ազիկացիներով), հասնում է կապագրվկացաց կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիան է կոչվում: Որովհետև նա արևելյան և հարավային (ազգերը) նվաճելով և հանձնելով այս երկու ցեղերին, արևելքը Սիսակյաններին և Ասորեստանի կողմերը Կազմուսի անս հաջորդներին՝ այլևս ոչ մի տեղից շփոթության կասկած չունեք՝ ուստի երկար ժամանակ մեաց արևմուտքում: Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանյան Պայազան Բաազյան, որ բռնացիկ զրավել էր սատանուցյունը երկու մեծ ժողովրդի միջև, այսինքն Պոնտոսի<sup>51</sup> և Ովկիանոսի: (Արամը) նրան ընդհարվելով վաճում է փախցնում է մի կղզի ասիական ժովում. այնտեղ աշխարհի (պահպանության) համար թողնելով Մշակ անունով մեկին իր ցեղից և մի բույր զորք՝ ինքը վերադառնում է Հայաստան:

Բայց այդ աշխարհի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն, այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկրումսար կոչում են Պոտոսի Արմենիան<sup>52</sup>, որ թարգմանվում է Առաջին Հայք: Իսկ այս դատակերտը, որ Արամից կողմնապետ նշանակված Մշակը շինեց իր անունով և փոքր պարսպով պատեց՝ այդ աշխարհի հին մարդիկ կոչում էին Մամար, կարծես չկարողանալով ճեշա արտասանել. հետո նա ուրիշներից ազիկի ընդարձակ շինվելով կոչվեց Կեսարիա: Մինևույն կարգով այս տեղերից մինչև բուն երկրի ասորեստանի շատ անբնակ տեղեր բնակիչներով լցրեց, որոնք կոչվեցին Երկրորդ և Երրորդ Հայք, նաև Չորրորդ (Հայք)<sup>53</sup>, Այս է բուն և ճշմարտ պատճառը՝ մեր արևմտյան կողմը՝ Առաջին և Երկրորդ, այլև Երրորդ և Չորրորդ Հայք անվանելու: Իսկ ինչ որ այլապես է պատմվում հունական կողմերում՝ մեզ ընդունելի չէ, ուրիշներն ինչպես կամենան:

Սա այսպես հզոր և անվանի դառնալով՝ նրա անունով մինչև այսօր մեր աշխարհն անվանում են մեր շրջակա ազգերը, ինչպես ամենքին

հայտնի է: Սա արդի շատ բարձրիան գործեր էլ ունի կատարած, բայց ինչպան որ առաջինը՝ բազմական ենք համարում:

Բայց թե ինչու այս բաները թագավորների բուն մասուններում կամ մեհնական պատմություններում չհիշատակվեցին, թող այս մասին ոչ որ շատ ակադի, կասկածի չհասնա՞նք որ այս ժամանակը նրանոսի թագավորությունից առաջ է, նրբ ոչ որ այնպիսի բաների հոգ չէր տանում, երկրորդ՝ որ նրանք հարկավոր է՝ կարներ չէին համարում տար ազգերի, հետագայ աշխարհների հիմ լուրերն ու նախնական դրոշմները իրենց թագավորների կամ մեհնական մատյաններում գրել, մահավաճող որ պարծանք և պատիվ չէր աստոր ազգերի բարձրությունը և արհավան գործերը հիշատակել: Բայց թեպետ և (տրանք) բուն մատյաններում չկան, սակայն, ինչպես Մայր Աթոս կաթողիան պատմում է, փոքր և աննշան մարզկանց ձևերով զուտանական (երգիչից) ժողովման են արքունի դիմանում: Մի արիջ պատմաւ էլ թերում է նույն մարզը, թե ինչպես խնայա, նինոսը հպարտ և աննշան մարզ լինելով և կամենալով միայն իրեն ցույց տալ իրեն սկիզբ աշխարհակալության, աճեն տեսակ բարձրության և կատարելության՝ հրամայում է այրել բազմաթիվ մատյաններ և նախնայց մասին դրույններ (որ վերաբերում էին) գանազան սեղերի և առանձին մարզկանց բազմության գործերին, իր ժամանակ եղածներինը դադարեցնելով (գրել) և որև միայն այն՝ ինչ որ իրեն է վերաբերում: Բայց այս կրկնելն ավելորդ էլ էր:

Այս Արամը տարիներ ապրելով ծնավ Արային, որից հետո էլ շատ տարիներ ապրելով մեռավ:

Գրականագիտական և պատմագիտական հարցերում զուտանական պատմությունը ինչպես մեռավ և կարող է լինել միայն ժողովրդի մեջ կարող է լինել:

### ՓԵ

#### ԱՐԱՅԻ ԵՎ ԵՐԱ ԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ ԳԱՍԵՐԱՆՄԻ ԲՆԷ

Արան նինոսի վախճանվելուց թե՛ տարիներ առաջ ինքամակալ դարձավ իր հայրենիքին, նինոսից նույնպիսի չեղորէ՛ն արժանանալով՝ ինչպես և իր հայր Արամը: Բայց այն վաղաշուտ և անուսակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա զինվորական մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել: Իսկ նինոսի վախճանվելուց կամ Կրեան փախելուց հետո, ինչպես համոզված են, Շամիրամ իր այնոր համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մաս պատգամավորներ է ուղարկում թե՛մաներով և եղբրներով, և շատ աղաչանքներով և պարսկների խնայումով խնդրում է դառ նիսով իր մաս, և կամ իրեն կին աննել և բոլորի վրա թագավորել, կամ նրա

ցանկության կամքը կատարել և մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ:

Նրբ պատգամավորները շատ անգամ երթնելույնուց կատարեցին և Արան համարանից՝ ապա Շամիրամը ստատիկ շարանալով, պատգամավորությունը դադարեցուց հետո, անուն է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայաց երկրի՝ Արայի վրա, բայց որքան զենքի կարելի էր գտալակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հարածել, որքան նվաճել կամ իր ձեռքը գցել, որպեսզի իր ցանկության կամքը կատարել. որովհետև մուլեզին ցանկությունից՝ նա ստփանելով սիրահարվել էր (Արայի) մասին եզամ պատմություններին՝ որդես թե նրան տեսնակու լիներ, Փոխթով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրան անունով կոչվեց Այրարատ: Ճակատ պատարաստելիս նա իր զորակալներին պատվեր է տալիս, եթե զենքը բերի, քանալ կենդանի պահել Արային: Կուրի ժամանակ Արայի զորքը շարժվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կործանակից: Հաջթությունից հետո տրեկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակներով մեջ փնարելու իր ցանկալի տաքիսածուրի: Արային գտնում են մեռած քաղաքատեղիների մեջ: Հրամայում է նրան տանել զենի ապարանքի վերնատունը:

Նրբ հայաց զորքը պատրաստվում էր ետից պատերազմելու Շամիրամ սկիզբուց հետո, Արայի մահվան վրեժն անելու համար (Շամիրամն) ասում է. «Ես իմ առավածներին հրամայեցի նրա վերաբեր լինել և նա կկենդանանա»: Միևնույն ժամանակ նա հույս ուներ կատարողական գյուծությունը Արային կենդանացնելի, ստփական ցանկությունից ցնորված: Բայց երբ դիակն սկսեց նեխել, հրամայեց գցել նրան մի մեծ վիշտի մեջ ու ծածկել, իսկ իր սիրեկաններից մեկին զարդարելով ու ծածկել պահելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Ասավածներն Արային լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափաքն ու ցանկությունը կատարեցին, ուստի այսուհետև նրանք ավելի ես արժանի են մեղանուց պաշտելու և փառավորվելու, իրեն մեղ ուրախացնողներ և մեր կամքը կատարողներ: Նաև մի նոր արձան է կանգնեցնում ասավածների անունով և մեծամեծ զուճերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թե ասավածների այս զորությունը կենդանացրեց Արային: Այսպիսի լուրեր տարածելով Հայաց աշխարհում և բոլորին համոզելով՝ հուզմանքը խաղաղեցնում է:

Արայի մասին այսպանը բովական է կարճատես հիշատակել: Նա տարիներ ապրելով ծնավ Կարգուրի:

**ՔԵ ԻՆՉՊԵՍ ՇԱՐԻՐԱԲԸ ԱՐՈՒՅ ԻՄԱԼԻՏ ԼՅՈՏ ԸՆՆՈՒՄ Է ԶԱՊԱՔԸ ԵՎ ԳՆԻՏ ԱՐՔԱՐՏԱԿ ԵՎ ԻՐ ՏՈՒՆԸ**

Այսպիսի հաջող գործերից հետո Շամիրամը սակավ օրեր մնում է այն դաշտում, որ Արաբի անունով կոչվեց Ալքարառա. բարձրանում է երկրի հարավարևմտյան ընկած լեռների զապազ, որովհետև ամառային եղանակ էր, կամենալով հոգիներանձր և ծաղկավառ դաշտերում գրտնել: Եվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օգի մարտիկները, բխող մարբուր աղբյուրները, կարկաշատն ու բարեգիսեց գետերը՝ նա ստում է. «Պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մարբուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինել, որպեսզի տարվա շրջանի մի շրջորդք մասը, այսինքն ամառային եղանակը, ամենատեսակ վայելչություններ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օգի զո՞վ ժամանակը, կյանք վայելենք ինչպիսի՞նք:

Շատ տեղերով անցնելով՝ գայիս հասնում է Ազի ծովակի մոտ արևելյան կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնությունը ձգվում էր դեպի արևմուտք, հյուսիսային կողմում մի փոքր քերտվածք. իսկ միջօրեական (հարավային) ուղղահայաց զնայի երկինք բարձրացած, գառնիվայր ապառաժ: Մթանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտաձև երկայնաձև հովիտ, որ լիսն արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, բնագրամակ և գեղեցիկ ձորի ձևով. նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր լեռներից իջնելով, ծմակներից և հովիտներից ծորելով, որոնք լիսների ստորտանիքի մոտ միավորվելով՝ ծավալվում, զեղեցիկ գետեր էին կազմում: Հովտաձև ձորակի մեջ ոչ սակավ շինեք կային, ջրերի առ և ձախ կողմերում գտեղեղված: Այս հասնելի բլուրից դեպի արևելք կար մի փոքրահաս լեռ<sup>24</sup>:

Այս տեղի վրա աչք զննելով՝ այրասիրտ և վազմաշուր Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս անդերից փափագած տեղը բերել շուր բլուր և երկու հազար անարվեստ զործավորներ և իր քնտրյալներից մեջ հազար արվեստավոր զործավորներ<sup>25</sup>, որոնք կատարելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի զործի արհեստում: Հրամանն ստածին պես կատարվում էր. բերվեցին անարվեստ բանվորների և բազմաթվառ հանճարեղ զարդատների բազմությունները: Եվ հրամայում է նախ գետի ամբարտակը շինել ապաստան իռոշոր բարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն և բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է: Գետի այս ամբարտակի անդրվածքներում այգանգի մարդիկ, ինչպես լսում են, փախչում ամ-

բանում են ասպատակությունների և զաղթականությունների ժամանակ, որպես թե ամբանակալ լինեին ապաստան լեռների զազաթներին: Եվ էթև մեկը կամենա փորձել՝ նա չի կարողանա ամբարտակի շինվածքից պուկել թեկուզ մի փոքր քար՝ պարստաթիկ համար, որչափ էլ աշխատի: Եվ երբ մարզ նայի քարերի շուրջը եղած կրի ձեփին, նրան այնպես է թվում, թե հարյուր է ամած այնտեղ: Այսպես երկար ասպարեզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցնում է քաղաքի համար որոշված տեղը:

Այստեղի հրամայում է բազմությունը շատ զաւակր բաժանել և ամեն մի դասի վրա զեկավար նշանակել վարպետներից քնտրներին, և այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ ընչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի շինվածքը, ամուր պարսեպներով ու պղնձից շինած գոնեղով: Փաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ բնօրի ասպարանքներ, կրեաշարի և եռաշարի, զարգարված տեսակ-տեսակ գլուխըզույն քարերով, և ամեն մեկում պատուհաններ բառ հարմարության Քաղաքի կողմերն էլ որոշում է գեղեցկագույն և բնագրամակ փողոցներով: Երևում է նաև շքեղ և զարմանելու արժանի բաղնիքներ, համապատասխան քաղաքի դիրքին և պիտույքներին: Գետի մի մասը (ստունների) բաժանելով՝ անց է կացնում քաղաքի միջով ամեն տեսակ պիտույքների և րուրաստանների ու ծաղկանոցների ոռոգման համար. իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակից առ և ձախ ափերով՝ քաղաքի և բլուր շրջակայքի ոռոգման համար: Փաղաքի բլուրը արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է զատակներով, վարսապեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տեսնում է բազմաթիվ ամբարտակներ և գինեբեր աշիններ: Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու ճշակավոր է զարձնում և մեղը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմություն:

Իսկ քաղաքի (վերին) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում և պատմելու հնարավորություն չկա: Այդտեղ զազաթի շուրջը պարսիսպ թաշելով՝ ներքը շինում է զժժար մտնելու և զժժար գուրք գալու ինչ-որ ծածուկ և ահուկի արքայախեռ շինվածքներ: Գրանց շինության որպիսությունը մենք ոչ որքի նշուրթյամբ չենք լսել, ուստի հարմար չենք գտնում մեր պատմության մեջ հյուսել: այս բան կասենք, թե, ինչպես լսել ենք, որանք բլուրը թագավորական զործերի մեջ առաջին և վեհագույն են համարվում:

Իսկ քարածալի դեպի արեգակը զարձած կողմը, որտեղ այժմ է ոչ մի գիծ կորող է մարզ գծել երկաթով, այսպիսի կարծր քարի մեջ զանազան սենյակներ, ննջարաններ, զանձարաններ և երկար վիշեր՝ հայտնի չէ ինչ բանի համար հրաշակերտաց: Իսկ բարածալի բլուրը

երկու հարթիւով, ինչպէս գրեով հարթում են մեղրամամբ<sup>65</sup>), վրան շատ գրեք գրի տվեց, որոնց տեսքը միայն բոլորի կարմայնում է<sup>67</sup>, եւ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և եռյակ գրեով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում եռյակ գրով սամաններ էր հաստատում:

Անս առաջինը ինչ գործեր որ Շամիրամը կատարել է Հայաստանում:

### ԺԷ

#### ՇԱՄԻՐԱՄԻ ՄԵԱՍԻՆ, ՔՍ ԻՆՉ ՊԱՏՄԱՆՈՎ ԿՈՏԱՐԻՆ ԻՐ ՈՐԿԱՆՆԵՐԻՆ, ԳՐԱԿԱՆՑ ՄՈՂԻՑ ՓԱՆՈՎ ԱՆՅԱՍԱԿԱՆ ԵՎ ՄԵՈՎԱՎ ԻՐ ԿՆԻՎԱՍ ՈՐԿՈՒ ՉԵՈՒՔՈՎ

Սա շարունակ ամառային եղանակին, երբ գալիս էր հյուսիսային կողմերը, Հայաստանում շինեմ իր ամառանոցի քաղաքը՝ կողմնաշէտ և Ասորեստանի և Եփեսոսի վերակացու էր թողնում Զրադաշտ մոզին, մարաց նահապետին: Եվ այսպէս երկար ժամանակ վարվելով՝ նրան համաձայն է իր իշխանութունը վարել:

Եվ հաճախ իր որդիները հանգիմանվելով իր սաստիկ վազառու և տեստակ վարքի պատճառով՝ նրանց բոլորին կոտորում է. ազատվում է միայն ամենափոքրը, Եփեսոսը: Նա իր բոլոր իշխանութունն ու գանձերը բարեկամներին ու սիրելիաններին պարգևելով՝ որդիները մասին ամենեկին հող չի տալու: Որովհետև նրա ամուսինն էլ, Եփեսոսը, ոչ թե, ինչպէս ստվում է, մեռավ ու թաղվեց նրա ձեռքով Եփեսոսում, արքունիքում, այլ դիտակելով նրա ախտանքի և շարտեր վարքը՝ թողեց թաղավորութունը և փախավ գնաց կրեան: Իսկ երբ որդիները շափահանա և ինչպէս գարձան, նրան այս բոլորը հիշեցրին, կարծելով թե նրան հետ կկացեն ղեմական տոփաներից, և նա իր որդիներին կտա իշխանութունն ու գանձերը: Մրա վրա ավելի կը բարանայով՝ (Շամիրամը) կոտորում է բոլորին, կնկզան է մնում միայն Եփեսոսը, ինչպէս վերն առաջինը:

Իսկ երբ Զրադաշտը տիկնոջ դեմ մի սխալանք գործեց և մեշտեղը հակառակութուն րեկավ, Շամիրամը նրա զեմ պատերազմ է սկսում, որովհետև մարացին մտազրկել իր ամենքի վրա բռնանալու, Սրբ պատերազմը սաստկացավ, Շամիրամը փախուտու տվեց Զրադաշտից և ղեմնց Հայաստան, Այս ժամանակ Եփեսոսը վրեժխնդրութիւյան համար ժամանակ գանկելով՝ մորն սպանում է և ինքը թաղավորում է Ասորեստանի և Եփեսոսի վրա:

Անս Շամիրամի մահվան մասին էլ առաջինը, թե ինչից և երբ պատահեց:

### ԺԸ

#### ԱՆՏ ՄԵԱՍԻՆ, ՔՆ ԱՆՅԱՍԱԿԱՆ ԿՆՈՎ ՏԵՂԻ ԵՎ ՈՐԿԱՆՆԵՎ ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՏՄԱՆՈՎ ԶՆԿԱՆՑ ԶՆԿԱՆՑԱՆՈՒՄ ԵՎ ԱՆՏՈՎ ԿՆՈՎ ԱՆՅԱՍԱԿԱՆՈՒՄ

Սա նկատի ունեմ Կեփազիոնի պատման էլ, որպէսզի շատերին տեղիք լսում մեզ ծագրելու, որովհետև նա ուրիշ շատ բաների թվում խոսում է նախ Շամիրամի ծնունդի մասին, հետո դեմ է Շամիրամի պատերազմը Զրադաշտի հետ և նրան հաղթելը և արդեն վերջը դնում է Հեզիաստանի պատերազմը: Բայց մեզ ավելի հավանական է թվում Մար Արաւ Կատիւնայի կատարած քննութունը քաղցնական մտաշունչների, բան այս, որովհետև տեղին է պատմում և պատերազմի պատճառն էլ հայտնում է: Բացի սրանից՝ մեր աշխարհի առասպելներն էլ արգարացնում են բազմաշարուտ ասորուն, թե այստեղ էլ պատահել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախելը, ծարափելը, ջրի պատակելը, շուր խնկելը, այն՝ սուրբավորների մեղքնաշինա հուռութիւնը ծովը նետելը և նրա սասմ խոսքը՝ Ուլունք Շամիրամի ի ծովը: Բայց և թե առասպել սխտեթում և՛ Շամիրամը Եփեսոսից առաջ քար գործավ<sup>68</sup>:

Արգ՝ այսքանը բավական է. մենք գտնանք հաջորդ անցքերին:

### ԺԹ

#### ԻՆՉ ՈՐ ՊԱՏՄԱՆՑ ՇԱՄԻՐԱՄԻ ՄԵԱՍԻՆ ԱՆՏՈՎ

Ամեն ինչ հարմարեցնելով ևս այս գրութմ կնշանակեմ մեր ուզգի ավագազուն մարդկանց ու նախնիներին և ինչ որ նրանց յուրբարանչութի մասին գրույցներ և գործողութուններ կան, շմտցնելով որս մեջ ոչ մի ինքնահար կամ անպատշաճ բան, այլ ինչ որ (հավաքեցինք) գրքերից և սրանց հետևողութիւնը՝ իմաստուն և այս հարցերում լավատեղյակ անձները, որոնցից հավատարմութամբ քանացինք հնագրութիւնները հավաքելու: Եվ մենք ստում ենք, որ մենք այս պատմութիւն մեջ արգարախոս ենք եղել մեր դիտավորութիւն և ուղղամտութիւնը. իսկ ինչ (աղբյուրներից) որ հավաքել ենք՝ այդ Աստծուն է հայտնի. նրանք գովելի՝ են թե պախարակելի, այդ մեզ չի վերաբերում, մենք՝ հետո ենք դիտեցինք: Բայց պատմանների համաձայնութիւնը, և պատանիների հյուզարութիւն մեջ թվերի հավասարութիւնը ցույց են տալիս մեր աշխատարարութիւն հշմարտութիւնը: Արգ՝ այս այսպէս կարգավորելով, կամ՝ բոլորովին հավասար կամ փոքր-ինչ ճշմարիտ, շեղվելով, կրկնեմ թեզ այսուհետև եղանակներ պատմել Պիտոնից Հլուաման պատմութիւնների:



Արդ՝ Շամիրամի մահից հետո՝ որ տեղի ունեցավ Արային սպանելուց հետո իր Չամեսուս որդու ձեռքով, որ ինքը նիկեփան է, պատմութիւն կարգը հաստատ այսպիսի պէտք է գիտենանք: Նիկեփան սպանելով իր հեշտասեր ժորը, թագապետ է ինքը և խաղաղ կյանք է վարում: Արա ժամանակ լրանում են Աբրահամի կյանքի տարիները:

(ԱՅՈՒ ԱԶԿԻ ԵՑՈՒԱԿԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՅԵՑՑՈՑ ԵՎ ՔԱՂՎԱՆՑՈՑ ԵՑՈՒԱԿԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՆԵՎ ԱՄՐԱՆԱԿԱՅԱՌՈՒՄ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ ԷՐ ԹՈՂՈՍ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒՄ)

50 Երբայեց	Քաղեացոց	Հայոց
Բահանկ	Արիսո	Արայան Արա*
Հակոր	Առայիսո, որ է Ամշուսո	Անուշափան
Ղեկ	Քեբրքեսո, որ և Բազենս	Պարեոս
Պահամ	Առամարիթուսո	Աբրակ
Ամբամ	Բեկորոս	Ղափակ
Մովանս	Բալեսո	Փառնակ
Հեսու**	Աղտազոս	Սուր***
Գոթանիկ	Մաթիթոս	Հափանակ
Ավովզ	Մասրազեսո	Վաշտակ
Բարակ	Մփերոս	Հայկակ****
Գեղեոն	Մամիզոս	Ամպակ
Աբրիակիբ	Սպարթեսո	Առնակ
Թովզա	Ասկատազեսո	Շափարշ
Հայեր	Ամինանս	Նարայր

\* Սա մեր Արայի որդին է, որին Շամիրամը Արա կոչեց և մեր աշխարհի վերակազմելու գործը նրան հաճատող, երանից սերվեցին:

\*\* Արանից առաջ (տիրում ին) ոչ թե ըստ ցեղի, այլ ըստ տաղաղման, որովհետև բոլորն էլ Աբրահամից լինեցին: Երբ սա բանաստեղծներին կատարեց, որանք զնոյն Բաբելոս հափելով սնցան Արասո, և այս հայտնի է սփրիկներին: Աշխարհում արձանների վրա զրոշված արձանագրութայնից, որ մինչև այժմ կա (հետևալ բովանդակութայն), ավեր բանաստեղծները կտեսարարեն զոչ Հատեց փառելով Ակար պատեղ բնակիչնա: Արանից է և մեր պատմական Քեկիզարը՝ Հայտատեսում, իմ մենք ստուգելով Նարատա ինտանք, որ Գեթանիկների ջեկն սեռատարիչա որակեցի է սերված, և այս ցեղի շարքը ծուլց է տարն, որ բանաստեղծ են:

\*\*\* Սա ժամանակն էր այդում Հեսու Մովանս:

\*\*\*\* Սա մասին ստամ են, թե այդու է Քեկիզար ժամանակ և մի անհրա խաղաբլան Նարազելով նրա մեջ մեռել է:

Երբայեց	Քաղեացոց	Հայոց
Եփթայի	Բեկորոս	Վասամ
Նեերովն	Բաղդատոնս	Կարճ <sup>1</sup>
Նեզովն	Վամպադեսո	Գոռակ
Վարզոն	Սուսադիս	Հրատո
Մամփոսն	Ղամբաթիս	Ընձար
Հնիզ	Պանիթան	Գակ
Մամուկ	Սոսամոս	Հորո
Մավուզ	Միթնես	
Գավթի և հաչորգները	Տեսամոս	Ղարմայր*
	Տեսնոս	Պերճ
	Թրինես	Աբրան
	Գեկուշուլոս	Բազուկ
	Ուլպազմոս	Հոյ
	Ղափտաթեթիս	Նոսակ
	Պեթիթազեսո	Կայպակ
	Ուփուստիս	Սկալորդի
	Փուստիթիս	
	Ակուպանիս	
	Սարգանսպալոս	

Բ

ԱՐԱՅԱՆ ԱՐԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՍՐԱ ՈՐԳՆԻ ԷՐ ՍՈՍՈՒՎԵՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԸ

Իսկ Շամիրամը զնո իր կենդանության ժամանակ Արայի որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նվարդից և տասներկու տարեկան երեխա էր մեռացել Արայի մահվան ժամանակ, զնոյն Արա Գեղեցիկից աւանտ գործով պատճառով՝ նրա անունով կոչում է Արա և նշանակում է մեր աշխարհի վերակազմ, մտերմարար նրան վստահացած լինելով. և ստամ են, թե նա պատերազմում Շամիրամի հետ մեռավ:

Բայց (Սար Արասը) պատմութեանը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ, թողնելով արուզափակ՝ գործով հորը, խաբազ հանձնարից Անուշափան Սոսանվորին, որով՝

\* Սա Տեսամոսից օգնական ուղարկեց Պրիմասին կազմական գործի հետ և մեռավ հեղեղացոց զանրից:

հետև նա (կրոնական) պաշտամունքի համաձայն նվիրված էր կրոնական կազմի ստեղծմանը Արմավիր քաղաքում, որտեղ տեղիներին հանգրաւանակա՛ն ստանդի շարժվելուց, նախելով քամու ուժին և ուղղութեամբ մեր Հայրենիք աշխարհում սովոր էին գուշակութուններ անել երկար ժամանակ:

Այս Անուշավանը բավական ժամանակ արժամարձանը կրելով Յու՛մեանոց, առաւելում է արքունի դուանը. հետո բարեկամներին օգնութեան գտնելով ձեռք է բերում մեր աշխարհի մի մասը՝ խնամելու համար իբրև հարկատու, վերջը նաև ամբողջ աշխարհը:

Բայց շահագանց շատ կլինեք, եթէ մենք այս գլխում վեր հնչված մարդկանց բոլոր գործերն ու պատմութիւնները գրենք՝ ինչպես արժան է:

## ԱՄ

### ՍՊԱՆՈՐՈՒՅ ՄՆԱՆ ՊԱՐՈՒՅՐՆ ԱՆՍՈՒՆ ԱՆՊԱՆ ՔԱԳԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՕԿՆԱՅԱՆ Է ԸՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՎԱՐՔԱԿՈՒՄ ԱՍՐԱՆԱԳԱՄԻՏ ՔԱԳԱՎՈՐՈՒՄՅՈՒՆՎ ԿԵՐՏՆԵԼՈՒ

Բայց թողնելով գիպրերից ոչ կարեւորները, ստեղծ ինչ որ հարկավարն է, վերջինն այն մարդկանցից, որ եղել են ստորեւսանցիների թագաւորութեան ժամանակ, Շամիրամից կամ Նեխոսից հետո, մեր Պարսիայն եղավ Սարգանսագալի ժամանակ: Սա ոչ փոքր օգնութեան է ցույց տվել մարացի Վարդանիսին՝ թագաւորութիւնը Սարգանսագալից վերցնելու:

Ահա այժմ են զգարճանում են՝ ոչ փոքր ուրախութեան զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագաւորութեան ստանձանի են հասնում: Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ պատանակա՛ն ճարտ գրել, որոնց հիմունքը մենք ինքներն արժանացանք կարգալու իմաստուն, իմաստունների մէջ իմաստնազուն և բազմարդուն հեղինակի շորս հազներդութիւնների մէջ:

Որովհետև Վարդակեսը, ծննդավոր մեղացից, այս ամբազուն աշխարհի ծայրի աննշան կողմերից, կենցաղավարութեան մէջ շատ խորամանկ, կոխիների մէջ խիզախ, գիտնալով Քանոն Կոնկորդետի տարադի բնավորութիւնը և հեշտասեր ու թույլամբ ծուլութիւնը՝ իր սիրելի վարժուողով ու սաստանձնեալութեամբ ալիկացնում է իրեն բարեկամներ այն բազ ու պիտանի մարդկանցից, որոնց ձեռքով այն ժամանակ մեծ հաստատութեամբ հայտնապես կառավարվում էր Ասորեստանի աշխարհակալ պետութեանը, իր կողմն է զբաղում նաև մեր քոչ նախա-

բար Պարսիային, խոտանալով նրան թագաւորութեան պատիվ և ձև: Գու՛մարում է նաև արի մարդկանց մեծ բազմութեան, որոնք հաջող էին իրական, աղեղ և սուր զորքածնու՛մ մեջ: Այս կերպով Սարգանսագալից թագաւորութիւնը զբաղվելով՝ տիրում է Ասորեստանին և Նիվոզին: Բայց Ասորեստանի վրա վերակաշուններ թողնելով՝ թագաւորութիւնը փոխազրում է Մարաստան:

Բայց եթէ այս բանը ուրիշների մոտ տարբեր է պատմում, մի գարճանար: Որովհետև ինչպես որ մեր (պատմութեան) առաջին գլուխներում մեղադրեցինք մեր հին նախնիների անխնաստանք բարբն ու ճաշակը, նույնք պատահում է և այստեղ: Որովհետև ինչ գործեր որ կատարվել են նարդրդոնասորի հոր կողմից, զրի են առնված նրանց հիշատակագրների ձևերով, իսկ մերոնք, որովհետև այսպիսի բան շատանցինք, (նրանց գործերը) նշանակվեցին վերջերս<sup>62</sup>: Բայց եթէ հարցնես, թե որտեղից մենք այսպես գիտենք մեր նախնիների անունները, այլև շատերի գործերը՝ կպատասխանեմ. բաղդեացիների, սասորեստանցիների և պարսից ինչ ղեկաններից, որովհետև մեր (նահապետները) նրանց գործակալները և նրանցից մեր աշխարհի վրա նշանակված վերակաշուններն ու մեծ կողմնակալները լինելով նրանց անուններն ու գործերը մտածվել են արքունի գրքերի մէջ:

## ԻԲ

### ՄԵՐ ՔԱԳԱՎՈՐՆԵՐ ԿԱԳԸ ԵՎ ՆԵՐՆՏ ՔԱԳԱՎՈՐՆԵՐ ՀՈՐԻՏ ՈՐԿ

Այժմ են կանցնենք թագաւորութեան մեր մարդկանց, մանավանդ թե թագաւորներին, մինչև պարթևների տիրութեան (հաստատվելը): Որովհետև մեր թագաւորների մէջ ինչ այս մարդիկ են պիլիկ, իբրև բնիկներ, արլունակիցներ և խոյակա՛ն հարապատաներ<sup>63</sup>, Նս շատ կփոփոխուին, որ այն ժամանակ Փրիկիչն եկած և ինչ գտած լինեք, որ նրանց ժամանակ են աշխարհ եկած լինեք, նրանց տիրութեամբ զգարճանայի և այժմյան գտանցները խոտափում լինեք: Բայց շատ վաղ մեղանից այդ գրութիւնը փոխալով, զուցե նաև վիճակը: Բայց ես այժմ օտարների թագաւորութեան ժամանակ ապրելով՝ նրանց (թագաւորների) հետ միասին պիտի է նշանակեմ մեր թագաւորների կարգը, որովհետև մեր աշխարհի բնիկ պատմագրներն այն մարդիկն են, որոնց անունները Ներքեր կորոշմենք:

Եվ որ այդ ժամանակները մեր ազգը թագաւորութեան ունե՛ր՝ սրան վկայում է երեմիա մարգարեն իր մարգարեութեան մէջ՝ Բարեկալնի ղեմ

պատերազմի հրավիրելով. «Հրաման սուր, ստամ է նա, Արքայառայան թագավորութանը և Արքանազյան զորին»<sup>54</sup>. Մա ազատույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն:

Բայց մենք (մեր թագավորների) ցուցակը կկազմենք, մտաբերենք զանազան Մարաց թագավորներին:

Մարաց առաջինը  
Իսկ մեր առաջինը, մարացի Վարակեցի թագավորը

Վարակես  
Մարակես  
Պարույր, Սկալորդու որդին.  
Հրաչյա»

Մարաց  
Հայոց

Մուսարես  
Առաիկա  
Գեովկիս  
Փավորոսիս  
Կվաքարես  
Ամրահակ  
Փառնավագ  
Պանույն  
Գուռնակ  
Փավոս  
Մյուս Հայկակ  
Նրվանդ Սակավակյաց  
Տիգրան

Որովհետև նա հավանական եմ դուռում, որ սրանց անունով կոչված են վերջին Նրվանդն ու Տիգրանն ըստ Նույսի, ժամանակը շատ հեռու լինելով՝ մեկը հիշած կլինի այս անունները:

\* Սա Հրաչյա է կոչվում առավելագույն պաշտոն կրող և բոցավառ աշխարհում առաջինը: Համարե՛ք ասում են, թե որս ժամանակ է ապրել Նարեկոզդեստը, որ հրեաների գերեզմանում առում են, որ սա Նարեկոզդեստի խնդրեց զերված կրթությունների զիտմանը մեկին՝ Շամբթ անունով և քրեց մեր կերպում յնուկեքեք մեծ պատվով: Պատմաբանները ասում է, թե սրանից սերվեց Բագրատունիների ցեղը, և այս ստույգ է: Բայց թե ինչպիսի շահեր գործ դրին մեր թագավորները՝ նրանց առիվելու, որ կուրորք պաշտան և թե նրանցից թանխար և ովքեր առավածապատվամբ վերջացրին իրենց կյանքը՝ հետո կարող կպատմենք: Որովհետև մի քանի անգամանակի մարզիկ ասում են, ըստ իրենց ներթափանցման, բայց ոչ հշմարտություն, իբր թե Բագրատունիների թագադիր քեզ մագում է Հայկից: Ուստի նա ասում էմ, աշխարհի հիմար խոսքերի մի՛ հավատար, որովհետև ոչ մի հեռք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց հեշմարտությունը: Որովհետև Հայկի և հեռանների մասին է ավելուում են վարիվորն և անկաջ հիթարով: Բայց սրաթիք, որ Սմբատ անունը, որ Բագրատունիները համար առաջին և պատմաբաններին, իսկպուս Շամբթն է նրանց հին՝ կրթական լեզվով:

ՍԵՆՏԵՐԻՄԻԻ ՈՐԿՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԹԵ ԱՐԹՐՈՒՆԻՆԵՐԸ, ԳՆՈՒՆԻՆԵՐԸ ԵՎ ԱՂՋՆԱՏ ԲԿԵՇՈՒ ԿՈՉԱԿՍԸՆ ԿՐԿԱՆՏԻՑ ԵՆ ՍԵՐՎԱՏՈՒ ԿՈՒՅՆ ԳՂՈՐՈՒՄ ԿԱՎԷ՛ ԹԵ ԱՆԳԵՂ ՏՈՒՆԸ ՊԱՍԵՐԱՄԻՑ Է

Բայց նախքան ձևանարկներ Մեծ Տիգրանի մասին եղած պատմություններին, որ մեր ընդի թագավորներից իններորդն էր, հուժկու, անվանի և հաղթող այլ աշխարհակալների շարքում, պատմենք ինչ-որ անհրաժեշտ է մեր պատմության կարգը պահպանելու համար: Մենք կարծես մոռացության տվինք Սենեքերիմի մասին (հոսսի): Որովհետև նարեկոզդեստի թագավորությունից ութսուն, թե՛ ավելի կամ պակաս տարի առաջ՝ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավոր է եղել, նա, որ նրուսպիմը պաշարեց հրեաների Նուրիստա առաջնորդի ժամանակը: Նրա որդիները, Աղրամեղքը և Սանասարը, նրան սպանելով, փախան Եգիպտոս:

Մրանցից մեկին, այն է Սանասարին, մեր քաջ նախնի Սկալորդին բնակեցնում է Նույն Ասորեստանի սահմանների մաս, մեր աշխարհի սրբաժայռի հարավում: Նրա սերունդն անկելով ու բազմանալով լցրեց Մեծ կոչված լիտը: Իսկ նրանցից ակնավորն և զինավոր մարզիկ վերջերս գործնում հասվաառամություն ցույց տալով մեր թագավորներին՝ սրբանացան այդ կողմերի թոգնությունն<sup>55</sup> սասանալու: Իսկ Արգանուզանը<sup>56</sup> բնակվեց Նույն կողմի արևելյան հարավում: Պատմագիրն ասում է, թե սրանից սերվեցին Արթուրիներն ու Գեուսիները: Այս էր պատճառը, որ մենք հիշեցինք Սենեքերիմին:

Բայց Անգեղ տան մասին Նույն պատմագիրն ասում է, թե սերված է մի ոմն Պարամից, Հայկի թոռից:

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՆ ԵՐ ԱՐԹՐՈՒ ԲԱՆՈՒՄ

Անցնենք այսուհետև զրեու Տիգրանի և նրա զործերի մասին, որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոճան էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աշակից եղավ Մարաց իշխանությունը առաջախու, հույներին էլ ոչ թե՛ ժամանակ նվաճելով իրեն հաղանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակա-

կիցներին նախանձնի եղով, իսկ Հետո եկողներն ցանկալի թե՛ ինքը  
և թե իր ժամանակը:

Եվ ո՞ր իսկական մարզը, որ համարում է արիական բարքի և խո-  
հականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա  
նման մարզ լինել: Ես տղամարդկանց դուռն կանգնեց և ցույց տալով  
բացաթղուն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ (օտարների) լծի տակ  
կենք, զարթոնք շատերին լուծ գնողներ և հարկապահանջներ, միթերներ  
սպիտակ արձաթի, և պատմական քարերի, և զգեստների, և զառաքան քոյ-  
ների, և գործվածքները՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասա-  
րակ բազմացրեց, որոնցով աղեղներ գնեցիցիկների նման սրաներին էին  
երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ գլուցազունների  
էին նմանում: Հետևակ կողմերը ծիարող գարձան, պարտերով կր-  
վողներն հոտող ազնվաժողներ, կողպեներով կողմերը գնեցիցի սրե-  
րով և տեղավոր նիզակներով, մերկեր<sup>97</sup> պատապարդեցին ժահնաներով  
և երկաթե զգեստներով: Եվ էր նրանք մի տեղ հավաքվեցին, միայն  
նրանք արտաքին տեսքն ու նրանց պահպանակների և դեմերի փայլ-  
մանքը բավական էին թշնամիներին հայտնելու և վանելու: Ես խաղա-  
ղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուզով և մեղքով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս փարտ-  
յալ և մաշկի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունձը կրեճով,  
բազրը նայվածքով, ուժեղ սրուրներով, գեղեցիկ ունենքով, վախելա-  
կազմ և թիկնազմա, կերակուրների և բույրեցիների մեջ պարզելու, ուր-  
խաթությունների մեջ արիքավոր. որի մասին մեր հեռքը, որոնք փառեցի-  
ներով երզում էին, ասում էին, թե մարտի ցանկություններն մեջ էլ  
շափավոր է կելել, մեծիմաստ և պիճուխոսն և չի բոլոր (հասակություն-  
ներով), որ պիտանի են մարզուն, Եվ այս գրքում Ի՞նչ կա ինձ ավելի  
սիրելի, քան սրա մասին եղած զովեստներն ու պատմությունը երկա-  
րի: Ես ասուն բանի մեջ արգարազատ և համատարասը չէր որոնեա-  
լով՝ ամեն մեկի կյանքը կզուտ էր իր մարի լուսով: Էր նախանձում  
լավազույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր  
բնզանբույս ասնների վրա առարձու: Իր ինձամի զգեստը<sup>98</sup>:

Ես սկզբում դաշնակից լինելով Աղգաստին, որ մարաշի էր, նրան  
կեն է ասլիս իր Տիգրանուհի քույրը, որին թախանձանքով խնդրում էր  
Աղգաստը Ուրովհետև (Աղգաստը) մտածում էր՝ այսպիսի ազգակա-  
նություն շնորհիվ կամ հաստատուն սեր պահպանել Տիգրանի հետ, կամ  
այս կերպով հեշտությունը զավանստորեն սպանել: Ուրովհետև նրա  
միտքը կասկածի մեջ էր, երբ մի անպատկեր մարգարեությունը նրան  
ցույց տվեց առաջիկայում նրան պատահելիքը:

ԻՆ

ԱՅՊԱՀԱՆ ԵՐԿՈՐԻ ԵՎ ԿԱՍԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՑՈՐՈՍԻ ԵՎ  
ՏԻՊԱԿՆԻ ՍԻՐՈ ԵՎ ՄՈՒՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՆՈՎ

Բայց երա այս մտածումների առիթն էր մտնումսկան դաշնակ-  
ցությունը, որ Կյուրոսն առաջարկեց Տիգրանին, և շատ անգամ էր  
Աղգաստին այս բանը հիշում էր, բունը հարչում էր նրանից, և անդա-  
պար նա խորհրդակցիցներին այսպիսի հարց էր տալիս. «Ինչպիսի՞ հնար-  
ներով մենք պիտի կարողանանք քանդել սիրո կապը պարսիկի և բազ-  
մարյութավոր հայի միջև: Եվ այսպիսի շփոթ մտածումներերով ժամա-  
նակ առաջիկա զեպրերը նրան հայտնվում են երազի մեջ մի նախատես-  
ությունը, այս կերպ, ինչպես ասում է պատմությունը:

ԻԶ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅՊԱՀԱՆ, ԿԱՍԿԱՆՆԵՐԻ ՄԵՉ ԼՐԱՆՈՎ, ԻՐԵՆ, ՊԱՏՃԱՆՈՎ  
ԳԻՊՎԱՍԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՎ ՍԵՆԱՆՆԵՐԻ ԵՐԱԶՈՎ

Այդ օրերում, ասում է, ոչ փոքր վտանգ էր սպասվում մարաշի Աժ-  
գաստին Կյուրոսի և Տիգրանի միարանությունից: Ուստի և մտքերի  
սաստիկ անկեղծությունից՝ գիշերը քնի մեջ տեսիլքով երևաց նրան այն,  
ինչ որ արթուն ժամանակ ոչ աչքով էր տեսել երբևէ և ոչ ակնազով լսել:  
Ուստի քնի վեր թռչելով՝ չի պատում խորհրդակցության ժամին սո-  
վորական կարգով, այլ իսկույն, մինչգեռ գիշերվան բավական ժամը  
զեռ կային, կանչում է խորհրդակցիցներին և արտում երեսով, գեթին նա-  
խելով՝ սրտի խորքերից հասույանք է արձակում: Երբ խորհրդակցիցները  
պատենուր հարցնում են, ես ժամերով ուշացնում է պատասխանը և  
վերջապես հեծկատանքով սկսելով՝ բաց է անում արտում ծածուկ պահած  
խորհրդերն ու կատակածք: Ես արաւաճիկի անկերը:

Ո՞վ սիրելիք, ասում է նա, (երազումս թվում էր), թե ես մի անձա-  
նաթ երկրում եմ գտնվում, մի լուսն մտո, որ երկրի վրա երկար բարձ-  
րացած էր և որի զագաթը թվում էր սաստիկ անուամանիքով պատած,  
և կարծես ասլիս լինելի, թե այս Հայկազանը երկրումն է: Եվ էր ես  
երկար նայում էի այդ լուսն, մե՞ ծիրանազգեստ կեն երեսը ինձ երկա-  
զույն բողով, բարձր լուսն զագաթին նստած, խոշոր աչքերով, բարձ-  
րահասակ, կարմիր այտերով, որ բնված էր մեծոր երկուերով: Երբ  
ես երկար նայում էի այս երևույթին — հիացման մեջ էի, հանկարծ  
կենք երկր (զավակ) մեջ, կատարյալ դուրյազուններ հասավով և քնու-



Քյամբ: Առաջինն առյուծ հեծած՝ պահում էր զեպի արևմուտք, երկրորդն ինձ հեծած զեպի հյուսիս էր զինում, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշավակի մեր սերտության վրա էր հարձակվում:

Այս խառն երպանների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած եմ իմ սրբունի (այգարանքի) վրա, տեսնում էի նրա կտուրը բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պատկոզ ստամբաններին հրաշալի տեսքով արնտեղ կանգնած, և ինձ՝ մեզ հետ միասին նրանց զոհչեղով ու խնկերով պատվելիս: Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա որ այն վիշապ հեծած մարդը, կարծես արժիքի թևերով պանախով՝ վրա հարձակվեց և մտանշտով ուզում էր աստվածներին կործանել: Իսկ ես, Աժդահակը, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի, սրանչի՛ր զյուզյուզը ինձ հետ կռվի բռնվելով: Ետև երգակների տեղերով իրար մարմինները խոցողովով՝ արյուն փտակներ վար հուռեցրին և այգարանքի արեգակի նման փայլող երեսը արյան ծով զարձրին: Հետո ուրիշ զիններով (կռվեցինք) ոչ սակավ ծամեր:

Բայց ի՛նչ օգուտ է խոսքս երկարացնել, որովհետև գործի վերջը իմ կործանումն եղավ: Տազնապից աստտիկ բրախերը կոխեց, և բունս փախավ, և այլևս կենդանի չեմ թվում: Որովհետև այս երեսույթների նրազը ուրիշ բան չի նշանակում բան այն, որ Հալիպոլյան Տիգրանի կռվմից բունի հարձակում պիտի կատարվի մեզ վրա: Բայց ո՞վ մեզանից, աստվածների օգնությունից հետո, խոսքով ու գործով մեզ բարեք խորհելով չի հուսա մեզ թագավորակեց լինելի:

Եվ խորհրդակիցներից շատ օգտակար առաջարկություններ լսելով՝ շնորհակալությամբ պատվում է նրանց:

**ԻԷ**

**ՈՐՈՇՐԱՆԻՏՆԵՐԻ ՈՍԱՆԵՐԸ, ՀԵՏՈ ԵՎ ԻԲ ՄՏԱՆԱՅ ՄԻՋՈՇԸ ԵՎ ԱՆՐԵՊԱՆԱՆ ԳՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

«Ձեզանից, ո՞վ սիրելիներ, ասում է (Աժդահակը), շատ հանձարեղ և իմաստուն բաներ լսելուց հետո՝ կասեմ և ես, ինչ որ, աստվածների օգնությունից հետո, մասնում եմ իբրև օգտակար միջոց: Որովհետև թշնամիներից զգուշանալու և նրանց մտազրույթուններին ծանոթանալու համար ոչ մի բան այնքան մեծ օգնություն չի բերում, բան էրբ մեկը (Քշեանուն) կորուսա պատրաստի՝ սիրտ միջոցով նրան զավելով: Եվ այս բանը մենք այժմ հնարավորություն չունենք կատարելու ոչ զան-

մերի միջոցով և ոչ պատրուզական խոսքերով, այլ միայն այլ կերպով, որ ես մտազրու եմ գործարկել: Իմ խորհուրդը կատարելու՝ որովայն արբելու միջոց է՝ նրա րուչը Տիգրանունին, գեղեցիկագույնն և խոհեմը կանանց մեջ: Որովհետև այսպիսի խնամեական ազգակառնությունները, համարձակ երթնելույթյան միջոցով, ընդարձակ հնարավորություն են ստեղծում թաքուն կերպով զավել լարելու, կամ նրա մտերիմներին գտնվելու ու պատվով խոստանալով հրամայել՝ նրան հանկարծանի սպանել սրով կամ թուշի միջոցով, կամ նրա մտերիմներին և կուսակալներին գանձերով նրանց բռնանել և այս կերպով նրան, իբրև մի անզոր ազալի, մեր ձեռքը գցելու:

Բարեկամներն այս խորհուրդն ազուր համարելով, գործի են ձեռնարկում: (Աժդահակը) իր խորհրդակիցներից մեկին մեծ զանձ առյուծ ուղարկում է (Տիգրանն մտա) մի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ունեի:

**ԻԸ**

**ԱՌԳԱՀԱԿԻ ԹՈՒՂՐԸ, ՏՈՒՂԱՆԻ ՀԱՄԱՆԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՒՂԱՆՈՒՆՈՒ ՄՐԱՆԱՏԱՆ ՈՒՂԱՐԿԻԸ**

հարվեցին, բայց շուտով փախչում էին մյուս կողմը: Այլուցեղ Երվանդի  
զույնը և Միջագետքի զորքերը ասրապուլի կտորոտմ կրեցին, նրան  
ճակատների իրար խառնվելիս Արտաշեսը դեմ են գալիս՝ տաճրացի  
թուժ մարդիկ, որոնք մահ՛ն այնքան անոճ՝ Երվանդին խոստացնում էին,  
թե Արտաշեսին կպանեն: Մտանց հետոնս պատահում է Գիսակը, Ար-  
տաշեսի ծածուր որդին, և մեջ մտնելով նրանց սպանում է և հաղթու-  
թյուն է տանում, որի ժամանակ նրա երեսի կեն էլ սրով կտրում են և  
մեռնում է այս գործի վրա: Մնացած զորքերը փախուստի են դիմում:

Իսկ Երվանդը մեղ շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից  
մինչև քաղաք հաստատած իջևաններում նոր-նոր միեր հեծնելով փախ-  
չում էր անընդհատաբար: Ամբաստ էլ նրան հնամաստ լինելով՝ ասա-  
կապեն հալածում էր գիշերով մինչև քաղաքի գուռը: Իսկ Մտաբց զորքերը  
Երվանդի գնդի կողմն անցնելով՝ մթնոթյան մեջ բանակ էին դնում գիակ-  
նելի վրա: Արտաշես էլ հասնելով Երվանդի խորանին, որի շուրջը նա  
կաշու և կտավի առաքատներով պարիսպ էր քաշել, իջավ և գիշերը  
նրա խորանում մնաց: Իսկ նրա լուսացավ, նա տիրաբար կարգադրելով  
հրամայեց սպանվածներին թաղել: Այն հովիտը, որտեղ (Մտաբ) գոր-  
չերը գիակների վրա բանակ դրին, կոչեց Մտաբց մարդ, իսկ ճակատա-  
մարտի տեղը կոչեց Երվանդավան, իբրև թե այստեղ վանեց Երվանդին,  
այսպես էլ կոչվում է մինչև այսօրվա օրս: Այսպ լվեց գնաց Երվանդի  
քաղաքը, կենթից առաջ Երվանդի դատասկիսքը հասնելով՝ զորքին  
հրամայեց, որ միասին բարձր ազգակցին՝ «Մար մատա», որ թող-  
մանում է «Մարը եկավ», որտեղ հիչեցնելով այն վերաժողաբերը, որ  
նրա մտքին ազարկում էր Երվանդը Պարսից թագավորին և Ամբաստին,  
նրան Մար կոչելով: Հենց այս ձայնով էլ այն դատասկիսքը Մարմեռ  
կոչվեց, համարորեն Արտաշեսի կամար, որպեսզի Երվանդի անունը նրա  
գրայից վերանա: Այս է պատճառը այդ դատասկիսքի անվանակոչության:

Բայց Ամբաստը գիշերով Երվանդի հետնից զալով փորթաթիվ վաչ-  
ուով՝ քաղաքի գուռը պահում էր, մինչև որ Արտաշեսը և բոլոր զորքերն



րկան: Եվ կբ բաշերն սկսցին ամբողջի զեմ կողնէ՝ ամբողջի մարդիկ անձնատար եղան և բազարի գուտ բացին, Ջինգորներնց մեկը մտնելով՝ վազրով Երվանդի գլխին խփեց և ուղկըր տան հասակի վրա ցրվեց. այսպես ջախջախվելով վախճանվեց քսան տարի թագավորիտոց հետո: Բայց Արտաշէս հիշելով, թէ Երվանդը Արշակունչաց ցեղի խոտոնորդ էր, հրամայում է թաղել և մահարձան գնել:

## ԽԵ

### ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱԳԱՎՈՐԵԼ ԵՎ ԻՐ ԵՐԱՅՈՍԱՎՈՐՆԵՐԻՆ ԲԱՐՈՒՆԵՐ ԱՆԵԼԸ

Երվանդի մահից հետո Ամբատը մտնելով խուզարկում է արքունական գանձերը: Սանատրուկ թագավորի թագը գտնելով, գնում է Արտաշէսի դուռը և թագավորիցնում է բոլոր Հայոց աշխարհի վրա Պարսեց Գարն: Թագավորի քսանեկնեկերըդ տարում: Արտաշէսը թագավորութունն տանելով՝ պարզեմներ է տալիս Մարաց և Պարսից զորքերին և արևակում է, որ գնան իրենց աշխարհը: Նույնպես տալիս է բաշ և նակիթ-վավոր Արղամին նրան խոտոացած երկրորդական զահը, նաև հակիթ-նեկով դարդարված պտակ, երկու ակնաշնեկին գինգեր, մի ոտքին կարմիր ազանկիթ, (իրավունք) գործածելու սուկե զգուլ և պատառարաղ և սուկեղն գավաթներով (գինի) խմելու, եվ այս պատիվներից ոչ պակաս տալիս է իր դաշակ Ամբատին, բացի երկու գինգերից և կարմիր կաշիքի: Եվ բացի նրա հայրենական թագազուգ սուգնությունից և արևմտյան զորքի իշխանությունից՝ նրան է համատում Հայոց բոլոր զորքերը, մեր բոլոր ներկի գործակալները և ամբողջ արքունական տունը: Իսկ Ներսեսին, իր ձեռք Գիսակ որդու որդուն (նախարարական) ցեղ գարձնելով՝ այլ (ցեղը) կրչում է Գիմարայան՝ նրա հոր բաշագործությունների անունով, որովհետև, ինչպես ասացինք, նրա զեմի կեսը սրով վեր բերին, կբ ևս Արտաշէսի համար կազում էր:

Պատմվում է, թէ (Արտաշէսը) նույն օրերում (նախարարական) ցեղի է վերածել տասնեկնց պատանի, Տուրի որդիներին, կուկով ցեղը նրանց հոր անունով Տիրուկի, ոչ թէ որևէ արիական զորքի համար, այլ նրանց հոր լրտեսության համար, որ կատարում էր (Երվանդի) թագավորի անից Ամբատին (սուղեկություններ ուղարկելով), որովհետև Երվանդին մտերիմ էր, որ և նրանից սպանվեց այս պատճառով:

## ԽԸ

### ԵՐՎԱՆԻՆ ՍԳՆԵԼԸ ԵՎ ԻՅՈՒՍ ԲԱԳՎԱՐՆԸ ԵՎՆԵԼԸ, ԵՎ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱՐԿԱՏՈՒ ԳԱՐՆԱԼԸ ՀՈՒՍԹԱՅԵՑՆԵՐԻՆ

Սրանից հետո (Արտաշէսը) հրամայում է Ամբատին գնալ Բագարան ամրոցը, որ Ախուրյան գետի վրա էր, Երվանդի թագաթին մոտ, և սպանել Երվանդի կերորը, Երվալին: Ամբատը նրան բռնելով՝ հրամայում է նրա շնորհից մի երկանարար կապել և նեռել գետի մի պատույտի մեջ, նրա սեղ բազիկների վրա նշանակում է մի երազանս մողի աշակերտի, որ մտերիմ էր Արտաշէսին, որին այդ պատճառով Մոզզպառն էին ասում: Հետո ամբատ է անում Երվալի գանձերը և ինչը հարյուր հողի ծառաներ<sup>14</sup>, նաև մեհյանների գանձերից քնտրները և բերում է Արտաշէսին: Արտաշէսը Ամբատին է պարզում Երվալի ծառաները, իսկ գանձերը հրամայում է տանել Պարսից Գարն: Թագավորին, իր գանձերից էլ վրան ակնաշնեկով, շնորհակալության և պատվի համար, իբրև իր հոր և օգնականի:

Այն ժամանակ Ամբատը Երվալի ծառաներին, որ գրել էր Բագարանից, տանում բնակեցնում է Մապրի թիկունքում (իր) ձեռակերտում, որը մինեույն անունով կոչից Բագարան: Հետո անցնում գնում է Պարսկաստան, քեծաները Գարնին տանելով, հոռամայնցիների տերության նկատմամբ անմոխթ լինելով: Իսկ կբ Ամբատը գնում է Պարսկաստան, Հայոց սահմաններն են զալիս կայսեր հարկանաները ծանր զորքով: Արտաշէսը հարկերը կրկին վճարելով և աղաչելով հաշտեցնում է: Այս բանը մեզ հաստատության պատճառ է Հանիի Սելյուսի<sup>15</sup> բուրբը, որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մեկը պատմելու ենք, որին վկայում են նաև պարսից մատյանները և հայոց վիզյապանների հիշգրտը:

## ԽԹ

### ԱՐՏԱՇԵՍԻ ԶԱՎԱՐԵ ԵՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՍԻՆ

Արտաշէսի վերջին զորքերից շատ բան հայտնի են բեղ այն վիպտաններից, որ պատմվում են Գոզթնում, ինչպես բազար շինելը, խնամությունն այսաների հետ և Մաթենիի իբր թէ սիրահարությունը անասպիլական վիշապազուններին, այսինքն Ածղասակի սերունդներին, որ գրաված ունեն Մասիսի ամբողջ ստորոտը. կոիվը նրանց հետ, նրանց

իշխանութիան քայքայումը, կրանց սուլանությունը և շինվածքների հրկիզումը և Արտաշեսի որդիների նահապետը և իրար զեմ գրգռվելը կանանց միջոցով: Այդ բոլորը, ինչպես ասացինք, թեղ հայտնի են վիպասանների երգերից, բայց մենք ևս կարճատև կ'իշխատակենք և ալլարանությունը կ'շնչարտենք<sup>165</sup>:

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և արևոտը բուրբին հազանելով, բազուր է շինում և իր անուկով կոչում է Արտաշատ, Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուտի առանց զմվարություն և արագ շինելով՝ արևոտը մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը՝ և բոլոր հայրենական կուռքերը, Բայց Ապոզոսի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհին մոտ: Երվանդի քաղաքից զուրս է բերում հրեա զերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նաև այնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի բոլոր վայելչությունները, ինչ-որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ-որ հենց ինքն էր շինել՝ բերում է Արտաշատ, և աճելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ (այդ քաղաքը) սարքավորում է իրեն արքայանիսա քաղաք:

Ե

**ԱՄԱՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՄԵՆ ԳՐԻ ԵՎ ՊԵՐՏՈՒՔՅՈՒՆԸ:  
ԱՐՏԱՇԵՍԻ ԽՆԱՄԻՔԱՆՈՒՄԸ ԿՐԱՆՑ ՀԵՏ**

Այս ժամանակներն այսնները բոլոր շեանականների հետ միարանելով, վրաց աշխարհի կենն էլ իրենց կողմը ձգելով մեծ բազմությունը գալիս սփոփում են մեք աշխարհում: Արտաշեսն էլ ծագվում է իր զորքերի բազմությունը և տեղի է ունենում պատերազմ Երկու քաչ և ազգանավոր ազգերի միջև: Այսաների ազգը փոքր-ինչ հետ է նահանջում և մեծ կուր զենն անցնելով՝ բանակ է դնում գետի ափին հյուսիսային կողմից: Արտաշեսն էլ գալով բանակում է գետի հարավային կողմում. գետը բաժանում է երկուսին:

Բայց որովհետև Հայոց զորքերն այսանների թագավորի որդուն բռնելով Արտաշեսի մոտ են բերում, այսանների<sup>167</sup> թագավորը հայտնություն էր խնդրում, խոստանալով այս Արտաշեսին՝ ինչ-որ ուզե, առաջարկում էր նաև երգումով գաշիքը անել, որ այսանների երիտասարդներն այնուհետև շատպատակեն Հայոց աշխարհը: Երբ Արտաշեսը չի համաձայնում պատանոտն հետ ալլ, պատանու բուրբ գալիս է գետի ափը մի մեծ քարքարավանդակ և թարգմանների միջոցով՝ ձայն է տալիս Արտաշեսի բանակը:

«Թեղ եմ ասում, քաչ տղամարդ Արտաշես,

Որ հաղթեցիր այսանների քաչ ազգին.

Ե՛կ լսի՛ր այսանների զեղաշյա զտեսերս խոսքերին  
Եվ տուր պատանին:

Որովհետև օրենք չէ՝ որ բնին համար դուրացադուսները

Ուրիշ դուրացան դարձրի կենդանությունը շնչեն

Կամ իբրև ծառա տարուկներ կարգում պահեն.

Եվ երկու քաչ ազգերի մեջ

Մշանչենավոր թշնամություն հաստատեն»:

Արտաշեսն այս իմաստուն խոսքերը լսելով զնայ զնտի ափը, և ասանելով զեղեցիկ կույտին ու լսելով նրանից իմաստուն խոսքեր, նրանց կանկարգով: Կանչում է իր դուստկ Սմբատին, բայց է անում իր սրտի փափաքը՝ ինն ասնել այսանների արքայական օրիորդին, դաշինք և ուխտ զենն բաշերի ազգի հետ և պատանուն խաղաղությունը արձակել: Սեմբատը հավանություն է տալիս և մարդ է ուղարկում այսանների թագավորի մոտ, որ այսանների արքայազն օրիորդ տիկին Սաթենիկին կնության տա Արտաշեսին: Այսանների թագավորն ասում է.

«Եվ ս՛րտեղից քաչ Արտաշես պիտի տա

Հաղար հաղարներ ու բուր բուրբը

Քաշերի սերունդ այս կույտի՝

Այսանների արքայազն օրիորդի համարս:

Վիպասանները երգելիս այս տեղն առասպելաբանում են ստեղծ.

Հեծավ արի Արտաշես արքան զեղեցիկ սե ձին<sup>168</sup>,

Եվ հանելով ոսկեզոծ շիկափոկ պարանը,

Եվ անցնելով դեռն իրրև սրաթև արծիվ,

Եվ նետելով ոսկեզ շիկափոկ պարանը,

Չգեց մեկըր ալանաց օրիորդի,

Եվ շատ ցավեցրցն փափուկ օրիորդի մեջքը,

Արագաբար իր բանակը հասցնելով»:

Բազան այսպես է եղել: Որովհետև այսանների մոտ հարդի է կարմիր մորթը, (Արտաշեսը) բավական լայրս և շատ սոկի է տալիս վարձանք և ասում է տիկին օրիորդ Սաթենիկին: Այս է, որ ասում են սոկեզ շիկափոկ պարան: Նույնպես հարսանիքի մատին երգում են առասպելաբանելով.

«Ոսկի տեղ էր տեղում  
Արտաշեսի փեսայության ժամանակ.  
Մարգարիտ էր տեղում  
Սաթևեիկի հարսնության ժամանակ»:

Որովհետև մեր թագավորները սովորություն ունենին՝ իբրև փեսա գահինի գլուխ հասնելիս հրամաններ շարժելով համայնցիներին հյուպատոսների նման. նույնպես և թագուհիները առաջագոսի սենյակում՝ մարգարիտ: Երգի իսկական իմաստն այն է:

Այս Արտաշեսի կանանց մեջ առաջինը դառնալով՝ ծնում է Արտավազդին և ուրիշ շատ զավակներ, որոնք այստեղ թվել կարևոր շնամարեցիներ, այլ կ'իշխեն հետո, երբ մի գործի կհասնեն:

**ՄԱ**

**ԱՐԿԱՄԻ ԵՎ ՆԵՍ ԲՈՒԿՆԵՐԻ ՍՊԵՆՈՒՅՈՒՆԸ**

Արտավազդը, Արտաշեսի որդին, չափա՛սա դառնալով, գրեթե եկամտի մի քան, ինքնահավան և հպարտ մարդ: Նա ծնրուրի Արգամի նախանձնելով՝ պատրանքներով իր հոր զայրույթը շարժեց Արգամի դեմ, իբրև թե նա մտածում է բուրի վրա թագավորն: Այս կերպով նրան պատվեց զցելով՝ ինքն է առնում երկրորդական գահը: Մրանից հետո, երբ Արտաշեսը ճաշի է գնում Արգամի մաս, ինչոք կասկած է ծագում, իբր թե գիտավորություն ունեն թագավորին զավելու, ուստի թագավորի որդիները ազմուկ են բարձրանում և հենց ճաշի ժամանակ բարձր են Արգամի ախոք մտղերը: Արտաշեսը, աստիկ շփոթված վերադառնում է Արտաշատ և իր Մաման որդուն մեծ փեղով ուղարկում է, հրամայելով Մարացյան ցեղից շատերին սպանել, Արգամի աղաքարներն աչրել և նրա հարձին, որ շքնազ գեղեցկություն ուներ և շնորհալի բալլվածք և կռվում էր Մանգու, բերել իրեն իբրև հարձ: Երկու աստի հետո (Արգամին) նորից հնազանդության բերելով՝ հրամայում է նրա զույրը վերագարձնել, բացի հարձից:

Իսկ Արտավազդը չբավականանալով նրանով, որ երկրորդության պատիվն առել էր նրանից, խուճ է նաև նախնավաճար և բուրջ գլուխերը նրախից զեպի հյուսիս, և նրանց մեջ եղած ապարանքներն ու բերքները իրեն ժառանգություն է զարձնում: Արգամի որդիներն այս բանին համարելով՝ նրան դիմադրում են, բայց արքայություն, հաղթելով, կոտորում է Արգամի բուրջ զավակներին իրենց հոր հետ, ինչպես և բուրջ

երեկի մարդկանց Մարացյան ցեղից, և գրավում է նրանց գլուխերը և նրանց բուրջ իշխանությունը: Նրանցից ոչ ոք չբերվեց, բացի մի բանի աննշան ու կրտսեր մարդկանցից, որոնք փախան Արտաշեսի մոտ և նրա արտոնքում փրկվեցին: Այս Արգամն է, որ առասպելի մեջ կռվում է Արգաման և այս է Արտավազդի հետ պատերազմի պատճառը:

**ՄԲ**

**ՔԵ ԻՆՉՊԻՍԻ ՄԵՐՉ ԷՐ ՍԵՄԱՏԸ ԵՎ ԻՆՉ ԳՈՐԾ ԿՈՍՏՐԵՆՍ ԱՎԱՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ ԵՎ ԱՐՄՏԱՐՈՒՄ ԲՆԱԿՈՒՅՈՒՆԻ ՀԱՍՏԱՅՈՒՆԸ**

Ինձ սիրելի է խոսել նաև քան Սմբատի մասին, որովհետև նա, համաձայն առասպելին, որ շատ հեռու էլ ճշմարտությունից, ունի իր բարոյական համեմատ հասակ և անզամներ, իր առաքինությունը որսում էր հողիներ, վաճելացած էր գեղեցիկ ախոք մաղերով, աչրելով մեջ արլուրի փորձիկ նշանով, որ փայլում էր, ինչպես զրահոստիկոն (ակնք)՝ ոսկու և սնուցարտի մեջ (աղուցված). արագաշարժ և փութկոտ անձի է մարտնի հետ նա միտածանակ զգույշ էր ամեն բանում, և բուրջ մարդկանցից ազելի հաշողության շնորք ուներ պատերազմների մեջ: Այնպես բաշտործություններից հետո նա Արտաշեսի հրամանով զորքով գնում է Այսնների աշխարհ՝ Մաթևեիկի եկրորդ օգնության: Որովհետև Մաթևեիկի հայրը մեռնելով՝ մի (կողմնակի) մարդ բռնությունը թագավորել էր Այսնների աշխարհի վրա և հայածում էր Մաթևեիկի եկրորդ: Սմբատը նրան հայածեց հեռացրեց, Մաթևեիկի եկրորդ տեղ դարձրեց իր ազգին և հակառակորդների երկիրն ազերեց, որտեղից բուրջին գերի վերցնելով, մեծ բազմությամբ բերեց Արտաշատ: Արտաշեսը հրամայում է նրան բնակեցնել Մասիսի հարավ-արևելյան կողմում, որ կռվում էր Շաղաբաշկան դավաճ, (այս անվան հետ) պահպանելով նաև ինկի Արտաշատներ, որովհետև միշտ այսպե էլ Արտաշ էլ կռվում այն աշխարհը, որտեղից նրան գերվեցին:

**ՄԳ**

**ԿՈՍՏՐԵՆԻ ԵՐԿՐԻ ԱՎԱՐՈՒՄԸ ԱՐՄՏԱՐՈՒ ՁԱՎԱԿՆԵՐԻ ԳՐԿՈՒՆԱԿՆՈՒՅՈՒՆԸ ՍԵՄԱՏԻ ԳԵՄ ԵՎ ԻՐԵՐ ԳԵՄ**

Պարսից Արշակ վերջին թագավորի մահից հետո մեր Արտաշեսը Պարսից աշխարհի վրա թագավորելնում է իրեն համանուն Արտաշեսին, նրա որդուն: Բայց նրան շխամեցան հնազանդել այն լեռան բնա-

կենքեր, որ իրենց լեզվով կոչվում է Պատիժահար գազառ, որ Գեղում-  
ներին<sup>50</sup> յետն է, նույնպես և ծովեզրերի բնակիչները և զեն ավելի այս  
կողմն աղբորենքը, Ուտի Արտաշեսը նրանց վրա է ուղարկում Մմբատին  
Հայոց բոլոր զորքերով, ինքն էլ յոթն հոսեր զնում է՝ նրան մահա-  
պար: զենլու համար: Մմբատը զեալով բոլորին հնազանդեցնում է, բայց  
Կարսից երկիրն ավերելով՝ Մմբատն Արտազի գերիներինց ավելի շատ գերի  
է բերում Հայաստան, որոնց հետ նուն նրանց Չարգմանոս անունով թա-  
զավորին: Ուտի Արտաշեսը նրա մտառյալություններն արձանագեսն (գնա-  
հատելով), նրան է պարզում Բողոթնի գյուղերում եղած արքունական  
հողերը և Ուղտի անունները, և բացի սրանից, նրան է թողնում ամբողջ  
ավարը: Արտազազն այս բանին նախանձելով՝ կամեցավ Մմբատին  
պատանի, բայց նրա դիտավորութունը բացելի և այս բանը մեծ վնաս  
պատճառեց նրա հորը: Իսկ Մմբատը տեղի առավ՝ զնաց Ասորեստանի  
կողմերը, իր կամքով թողնելով Հայոց զորքի իշխանությունը, որի վրա  
աչը էր անկել Արտազազը: (Մմբատը) Արտաշեսի հրամանով բնակու-  
թյուն է հաստատում Տնորքում, որ այժմ կոչվում է Կորզրի, և բազ-  
մամիով գերիներին նսանցնում է Արկիում: Որովհետև նա մեռության հա-  
տակում կին էր առել այդ կողմերի ասորեստանցիներից և նրան շատ  
սիրում էր, այդ պատճառով այդ կողմերում բնակվեց:

Իսկ Արտազազը Մմբատի զնալուց հետո հորից ստանում է բոլոր  
զորքերի իշխանությունը, որին փոխարժու էր: Սրա վրա նրա կերպու-  
րներն սկսեցին նախանձել, իրենց կամեցեցից զրզովելով: Ուտի Արտա-  
շեսը Վրոյսին, որ իմաստուն և բանաստեղծ մարդ էր, նշանակում է  
հազարապետ և նրան է հավատում արքունական տան բոլոր զորքերը,  
իսկ Մամանին նշանակում է Անիում:<sup>50</sup> Արտազազի կտորի բրտապետ  
Չորքի իշխանությունն էլ շուր մասն է բաժանում, արևելյան կողմի  
զորքը թողնում է Արտազազին, արևմտյանը առյիս է Տրքանին, հարա-  
վաչինը հավատում է Մմբատին և հյուսիսայինը Չարհհին: Չարհհը զու-  
ռոզ մարդ էր, երևների որսի մեջ խիզախ, բայց պատերազմների մեջ  
երկուտ և զանգաղկատ: Այս բանը ֆիրմով գիտելով մի ոմն Քարձավ,  
Վրաց թագավոր, ապստամբեցնում է այդ երկիրը և Չարհհին բռնելով  
բանտարկում կոպկատում: Բայց Արտազազն ու Տրքանը նրա հետ պա-  
տերազմելով՝ իրենց կորքը հետ են գարձնում, մեծ տղից<sup>51</sup> հանելով:

**ՊԱՏԵՐԱՅՐ ԲԱՅԱՆՈՒՄ ԿԱՄԵՏԱԿՆՈՒՄ ԶՈՐՔԵՐԻ ԼՅՑ**

Արևմուտքում ինչ-որ հուզումները են ծագում. սրա վրա գուսա-  
նալով՝ Արտաշեսն ապստամբում է հռոմայեցիների սերոթյան զեմ և  
հարկ չի վճարում: Դոմեստանոս կայսրը սրա վրա դաշրանալով զորք է  
ուղարկում Արտաշեսի վրա: նրանց գալիս հասնում են Անտարիայի կող-  
մերը, Տիրանին արևմտյան զորքի հետ առջ խանած ըշում բերում են  
մինչև Բասանի մեծ և ընդարձակ նովխոր մեծ տաղանավոյ Ալատեղ Ար-  
տազազը արեելյան և հյուսիսային զորքերով, թագավորի բոլոր որդիներ  
հետ միասին, նրանց զեմ է զուրս գալիս, բայց պատերազմի ժամանակ  
շատ նեղե են ընկնում: Պատերազմի վերջին վրա է հասնում Մմբատը  
հարավային զորքերով և մեջ մտնելով վտանգից ազատում է թագավորի  
որդիներին, հաղթություն է ստանում և վերջ զեմն պատերազմին: Որով-  
հետև նա, շնչելով իր մեռության, երիտասարդի պես կազմակերպեց և  
ճակատամարտը մղեց, և հռոմայեցիների զորքին հետամուտ լինելով  
հալածեց մինչև Կեսարիայի սահմանները:

Առասպելներում այս բանը երգել կամենալով՝ ասում են, թե կիսմ  
է եղել մի ոմն Դոմեան<sup>52</sup>, որ ինքը Դոմեստանոս կայսրն է, բայց ոչ թե  
ինքն է եկել այս կողմերը, այլ նրա հրամանն ու զորքերը ալլարանելով  
(առասպելները) նրա անունով են կոչել:

Բայց Արտաշեսի բախտից՝ այդ ժամանակ Դոմեստանոսը մեանում  
է Հռոմում, նրանից հետո ներքառ թագավորում է ոչ ավելի, քան մի  
տարի: Այս բանից հպարտացած՝ Հայոց և Պարսից զորքերը նույնիսկ  
ասպատակութուն կատարեցին զեղի Հուստատան: Սրանց օրինակով  
եգիպտացիները և պաղեստինցիների կողմերը նույնպես դազարեցրին  
հարկ տալը:

**ՏՐԱՅԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՅՈՒՄ. ՄԱՃԱՆԻ ՄԱՃԷ  
ԵՎԱՅԱՐՆԵՐԻ ԶԵՆՈՒՄ**

Այս ժամանակները հռոմայեցիների վրա թագավորում է Տրոյա-  
նոսը: նա ամբողջ Արևմուտքը խաղաղեցնելուց հետո զիմում է երգից-  
տացիների և պաղեստինցիների վրա, նրանց նվաճում է իր ձեռքի տակ  
և շարժվում պարսիկների վրա: Արտաշեսն անապարհելով՝ մեծ ընծաներով



երա առաջն է կենում, հանձն է առնում իր հանցանքը, անցած տարիների հարկերն էլ երա առաջն է դնում և նրանից ներումն ստանալով՝ վերադառնում է Հայոց աշխարհը, Իսկ Տրայառնը Պարսկաստան անցնելով և բուրբ իր ցանկացածը կատարելով՝ հետ է դառնում Ասորիքով:

Երա առաջն է զարխ Մամանը և կարայրների վրա մատուցելուն է անում: «Փրօցիք, առում է, ո՞վ թագավոր, եթե Արտավազգին ու Տրանին երկրից դուրս չլինե և Հայոց գործերը Չարհի՛ն չհավատաս»՝ հարկերն ասանց զվարտության չեն հասնի բեզս: Մամանն այս արգով բնն պահած լինելով՝ Սմբատի համար, որովհետև իրեն էլ ես էր սնուցել, մինչույն ժամանակ ես կամենում էր Տրանին էլ հեռացնել, որպեսզի ինքը միամամանակ թե բռնապետ լինի և թե արևմտյան (գորբի) սպարապետ: Տրայանոսն ուշաքթություն չդարձնելով՝ նրան ձեռնուռնայն հետ է դարձնում: Իսկ Արտավազգն ու Տրանը նրա այս զարգ լսելով՝ որտե մամանակ դարև սարքեցին և սպանելին Մամանին, և տարև թաղեցին Բաղնայ ավանում (Բաղավանում)՝ իրեն բռնապետի: Իսկ Արտաշեսն այդ ժամանակից սկսած անխափան հարկ վճարեց Տրայանոսին և նրանից հետո Աղբրանես կայսեր՝ մինչև իր կյանքի վերջը:

## ԾԶ

### ԹԵ ԻՆՉԻՍ ԱՐՏԱՆԵՍԸ ԻՐ ԱՇԽԱՐՀԸ ԲԱՆԱԲԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱՆԱԲԱՆԻՐ ՀԱՍՏԱՆԵՑ

Բոլոր առաքինական գործերի և բարեկարգություններից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ավազակների սամաններ որոշել, որովհետև ես մեր աշխարհը բազմամարդացրեց շատ ազգեր (ուրիշ երկիրներից) բերելով, որոնց բնակները լեռներում, հովիտներում ու գաղաղերում: Մամանների համար ես նշաններ սամանեց այսպես. հրամայեց տաշել բառակուսի ձևով բարք, մեղերը պետիկ եման փոսցնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել բառակուսի կոթողներ՝ գեանից բիշ բարձր: Սրա վրա ետխանելով՝ Պարսից Արտաշիք (Թաղավորը), Սառանսորգին, հրամայում է Պարսկաստանումն էլ նրանց տեսակ անել և իր անունով կաշել: որպեսզի Արտաշեսի անունը չհիշվի:

Բայց առում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ո՞չ լեռնային և ոչ դաշտային, այնքան շինադրել էր երկիրը:

## ԾԷ

### ԱՐՏԱՆՈՒՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առում են, թե որս ժամանակն է կելի Ամատունիների ցեղը Արայոց աշխարհի արևելյան կողմերից: Բայց արտեք բնիկ հրեաներ են, մի ոմե Մանուկի, որ մի ուժեղ և մեծահասակ որդի ուներ Մամսոն անունով, ինչպես հրեաների մեջ սովորություն կա՝ նախնիների անունը գնել ըստ հայրի՞ն: Բայց այս նշարիքն էլ, ինչպես այժմս էլ եկատվում է Ամատունիների սերնդի մեջ, որ նրանք հողթանգամ, վաշելակազմ և ուժեղ մարդիկ են, ամեն բանում պատշաճ: Մասեր տարված են եղել Արշակի ձեռքով, որ պարթևական ցեղից առաջինը թագավոր դարձավ, և ստաշաղթվելով՝ Արայոց աշխարհումն էլ պատգի հատան Ամատանի կողմերը: Իսկ թե ի՛նչ պատճառով նրանք մեր աշխարհն կհան շղթան, միայն թե Արտաշեսից պատվիրել են գտնում գյուղերով ու գյուղակերտներով և կոչվում են Ամատունիներ, այսինքն եկվորներ: Իսկ պարսիկների մի մասը նրանց Մանուկյան են կոչում, նրանց նախնիի անունով:

## ԾԸ

### ԱՐՏԱՆՈՒՆԵՐԻ ՏՈՒՄԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՏԱՐԻՑ Է ԱՅՉ ՏԵՂԸ ՍԵՐՎԵԼ

Սրա որերում (սառչ կեան) Առավելյաններն ես, այսնների ազգից, որոնք Մաթենիի մերձավորներն էին և նրա հետ զավթ՝ մեր աշխարհի նախաարտությունների շարքը դասվեցին ցեղով, իրեն մեծ թաղուհու հարսպատները: Տրգատի հոր խոսքով ժամանակ նրանք խեամբացան բասիների գաղթականներից մի բաշի հետ:

## ԾԹ

### ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՆԵՍԸ ԺԱՄԱՆԱԿ

Որովհետև Արտաշեսի ժամանակ շատ գործեր կատարվեցին, ուստի մենք շատ զլուխների բաժանեցինք, որպեսզի խոտեր երկայնությունը ձանձրախ չդառնա բնիկացուների, այն վերջին գլուխն էլ նրա համար էլ: որ հիշատակենք Արտաշեսի ժամանակ կատարված մյուս գործերն էլ, Որովհետև թեկուս մեր նախորդ գլուխներում հիշատակված կարգերն ու փեղեցիկ սովորությունները սամանվեցին Վաղարշակից և ուրիշ հին

Քաղաքներին, բայց նրանք մեծամեծ արվեստներից ու գիտություններից զուրկ էին մնացել, ավելի կոչողությունների և ասպատակությունների հանկուժով իսկ այնպիսի գիտությունների կամ անփութ էին կամ ձևոնհաս էին, ինչպես շարաֆներ, ամիրաներ, տարփան շրջաններ (սահմաններ)։ Նրանք այսպիսի բաներ չգիտեին, զորք էին ածում արիչ ազգերին։ Նույնպես և չկար ճավազացողություն մեր աշխարհի ծովակների վրա, ոչ էլ ճանապարհորդություն գնուկերով, ոչ ձկնորսության գործիքներ, նախիկ երկրագործություն ամեն տեղ տարածված էր, այլ թի՛ տեղերում՝ նրանք չլուսխոսյին ազգերի նման ապրում էին հում ժամօվ և օրս նման բաներով։ Այս բոլորը սահմանվեցին Արտաշեսի ժամանակ։

#### ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՎՈՒՆ ԻՄԱՆՆ

Գեղեցիկ է պատմում և Արիստոս Փեղզացին<sup>154</sup> Արտաշեսի մահվան մասին։ Որովհետև Նրանների ապստամբ էին հռոմայեցիների Ագրիանոս թագավորից և պատերազմեցին Ռուփոս եպարքոսի հետ, առաջնորդվածք մի ավազակ մարդու, որ կոչվում էր Բարբորա, այսինքն ասաղի որդի։ Նա մի շարագործ և սպանող մարդ էր, բայց մեծ-մեծ շարժում էր պարծենալով, թե ինչքան երկնից ծագել է նրան փրկիչը, հեղձված ու զենված (ազգայիններին)։ Նա պատերազմն այնքան սաստիկացրեց, որ նրան նայելով իսկ Առաքիլը, Միջագետքը և ամբողջ Պարսկաստանը հռոմայեցիներին հարկ տալուց հրամարվեցին, մասնավորապես որ լսել էին, թե Ագրիանոսը վարակվել է ուրվություն անտառով։ Բայց մեր Արտաշեսը համառաքիմ մնաց նրան։

Այս այս ժամանակներն էր, որ Ագրիանոսն Եկամ Պազնատին, ապստամբների կտորեց՝ նրանց մի փոքր թաղաքում պաշարելով, ծրուսալեծի մտու։ Նա հրամայեց, որ բոլոր հրեա ազգը ընեն հեռուստի հայրենի աշխարհից, այնպես որ շատ հեծվից էլ չկարողանան նրուսազեմը առնել։ Իսկ ինքը վերադառն շինեց Նրուսազեմը, որը ավերել էին Վապտիստոսը, Տրուսը և ինքը և ինքը և իր անունով կոչեց Հեդիա, այսինքն արեգակ, ինչպես կոչվում էր ինքը Ագրիանոսը։ Այնտեղ նա բնակեցրեց հեթանոսներ և քրիստոնյաներ, որոնց եպիսկոպոսն էր մի ոմն Մարկոս։ Այս ժամանակները նա մեծ զորք ուղարկեց Ասորեստանի կողմերը, մեր Արտաշեսին էլ հրամայեց իր գլխավոր մարզապետով գնալ Պարսկաստան նրա հետ՝ էր գտնվում իբրև քարաուղար այս մարզը (Արիստոսը), որ

այս պատմությունը մեկ տվեց, նա Արտաշեսին հանդիպեց Մարսում<sup>155</sup>, Մահունց կոչված տեղում։

Արտաշեսը հիվանդացավ Մարսից, թակուրակներ աճանում, նա Արիզյանների տոհմի ետնապես ոմն Արեզոյի, որ մի ճարտիկ, շղթարթի և հանդախոս մարդ էր, հենց նրա խնդրով, ուղարկեց Յնդույաց զավառ, Երիզա, Արտեմիոսի մեհյանը, որպեսզի կտորեց թշուրվուն և երկար կյանք խնդրե (թագավորի համար)։ Նա զեռ հետ շարժված՝ Արտաշեսի մասը փրկ է հասնում։ Եվ (Արիստոսը) գրում է, թե մրջան բազմություն մեծավ Արտաշեսի մահվան ժամանակ՝ նրա սիրելի կանայքը, հարճերը և մտերիմ ծառաները, և ինչպես բազմաառանակ շքեղ պատվեմեր մատուցին գիտկին, քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման։ Նրա զագաղը, ասում է, սովորեն էր, գա՛ր է անկողնից թե՛նգից և մարմինը պատռոց պատմունքը սովորել, զուրք թագ գրած, սակայն զենքն սողնը։ Գա՛ր շրջապատում էին որդիներն ու ազգականների բազմությունը, և արանց մտա գինորական պաշտոնյաները, նահապետները, նախորատական զեղերը և թե՛հանրապետ զորականների վաշտերը, ամենքը գիտված, որպես թե պատրաստված են պատերազմի, առնինց պղծվե փոզեր էին հնչեցնում, իսկ հետեցին սնազգեստ ձախերկու կույսեր և լալկան կանայք<sup>156</sup>։ Բոլորից վերը՝ ռազմիկների բազմությունը, եվ այսպես առնելով թագեցին։ Նրա զեղեզմանի փրկ կամավոր մահը էր լինում, ինչպես վերն առաջինը։ Մա թագավորից քառասուն և մի տարի, այսպես սիրելի լինելով մեր աշխարհին։

#### ԿԻԼ

#### ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱԳԱՎՈՐՆԷԼ ԻՐ ԵՂՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՄԵՐԻՆ ԼԱԿԱՆԷԼ ԵՎ ՆՊԱ ՄԱՐԸ՝ ԱՍԿԱՆԱՆՈՒԹՅԱՄԸ ՀԱՆԿԵՐՑ

Արտաշեսից հետո թագավորում է նրա Արտաշատից որդին և Ալլարատից բուր Նորայրներին հայտնում է Աղաթիս և Արերբանի զավառները, որպեսզի Ալլարատում, թագավորի կալվածում, շաղրեն։ Միայն Տիրանին պահում է իրեն փոստանոց, որովհետև ինքը որդի չունի։ Նա ինչ որքան թագավորույց հետո էր սնված անցնում էր Արտաշեսու թագարի կամուրջով՝ Գինա ակունքների մոտ կիններ և վայրի էշեր որսալու, հանկարծ ինչ-որ ցնորից-չփոթված խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում անհետանում է<sup>157</sup>։ Նրա մասին Գուլթիի երգիչներն այսպես են առասպելաբանում.

Արտաշէի մահան համանակ, Տեթնասական սովորութիւնք, շատ կտարածներ էին լինում. սրա վրա, առում են, Արտավազը նեղանում է և առում է Նորը.

«Երբ զու գնացիր,  
Ու բոլոր նրկերը բեզ չես տարար,  
Եւ այս սովորակներն վրա  
Ինչպէ՞ս թողա՞րեմ»:

Արա համար Արտաշէնը նրան անիծելով այսպէս է առում.

«Քէ զու Տեծնէս որսի գնաս  
Ազատն ի վեր, դեպի Մասիս,  
Քաշերբը բեզ բունէն տանէն  
Ազատն ի վեր, դեպի Մասիս.  
Այնտեղ մնաս, լույս չտեսնես»:

Պատահները սրա մասին գրուցում են, թէ արգելված մնում է մի բարանավի մեջ, երկաթէ շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա բանք է անում զուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, առում են, զարբիներէ կանաճատութեան ձայնից կայտններն ամբանում են: Ուստի զևս մինչև այժմ էլ զարբիներէ շատեր, առաջ-պիսին Տեսնելով կերակի օրերը նրեք կամ շորս անգամ (կտանով) խփում են սալին, արպեպի, առում են, Արտավազի շղթաներն ամբանան: Բայց իսկական իրողութիւնն այնպէս է, ինչպէս վերն ասացինք:

Բայց անձ որ առում են, թէ Տեց որս մտնելու ժամանակ մի պատահար է հանդիպել, և կարծում են, թէ Աժդահանի սերունդով կանաք նրան կախարհել են, որի պատճառով Արտաշէնը նրանց շատ շարշարեց: Այս մասին նույն երգիչներն ասասցինք մեջ այսպէս են առում.

«Վիշապազունք մանուկ Արտավազին զոգացան,  
Եվ նրա տեղ գրին դե»:

Բայց ինձ Շլմարիտ է թվում այն լուրը, թէ նա մենդից ի վեր ժուրութեամբ է ապրել, մինչև որ նույն ժուրութեամբ մեռել է: Քաղաքորութիւնն անում է նրա Տիրան եղբայրը:

Հայց զյս թագավորում է Տիրանը, Արտաշէի որդին Պարսից Պեթրոզ Առաջինի երրորդ տարում: Արա մասին ոչ մի բաշտութեան գործ չի պատմվում, այլ միայն որ հաճատարմութեամբ հպատակ մնաց հոռմաշէ-ցիւներին և, ինչպէս առում են, անձնատուր եղավ որսի և գրասաններին: Նա երկու մի է ունեցել, Պեղատուրի<sup>156</sup> ավելի թեթևաշարք և անշարժ արագգլուց, այնպէս որ համարում էին, թէ նրանք ոչ թէ դեռնի վարով են դնում, այլ օդագնաց են: Բզեռուցայն էր անձ իշխան Դատարն ինորեց այդ (միերը) Տեծնէլ, և պարծնեում էր, թէ թագավորից ավելի հարուստ է:

Արա մտ կկան Արշակունցայց ցեղից իր հին ազգակիցները, որոնք ապրում էին Հաշայանքի կողմերում և առում են. «Շեղարձակի՛ր մեր ժառանգութեան (Նոզերը), որովհետև մենք շատ բազմացանք և մեզ նեզ է գայիս (եղածը)»: Նա էլ հրամայում է, որ նրանցից մի քանիք դնան ապրելու Աղիոփխ և Անորեքանի գավառներում: Արտար ավելի սաստիկ բողոք բարձրացրին, թէ մեր տեղն ավելի նեզ է, բայց Տիրան ուշադրութեան չգործրեց, այլ հաստատապէս վճռեց ոչ մի նոր (Նոզ) շտախրանց մշտանդութեան, այլ որ նրանք ինչ որ ունեն, հաճատար իրենց մեջ բամանեն: Հողը մարգավճով բամանելիս զուրս եկավ, որ Հաշայանքում բնակվողների ժառանգութեանը պակաս է, աստի նրանցից շատերն կկան Աղիոփխ և Անորեքանի գավառը:

Առում են, սրա ժամանակ եղել է Անձնացայց ցեղից մի պատանի Երախնավու անունով, ամեն բանում սեզ. նա կին է առել Արտավազի կանուցից վերջինին, որ բերել էր ավելի Հունաստանից: Եվ որովհետև Արտավազից զավակներ ունեցավ, աստի թագավորը Երախնավունին թողեց Արտավազի բայր տուրք նա, առում էին, ընտիր մարդ է եղել, ամեն բանում հոռմեստ և մարմնական ցանկութեան կողմից էլ օրինավոր: Քաղաքը երան սիրելով նրան է ասլիս երկրորդական գա՛ր, որ զրավում էր Արտավազը, նույնպէս նրան է հաճատար արևելյան գորքի Նոզերը և նրա մտ է թողնում Դրվապա անունով մի պարսիկ, որ իր մտերիմն էր և իմաստիցած էր Վաստորակունի նախարարների հետ: Թագավորը նրան էր ավելի Տառտուր տվանը ազարակներով հանգրծ և այն միակ այլին, որի մեջ էր սնունդ Գայլատվա ծովից<sup>157</sup> հունամ մեծ առում: Իսկ ինքը թագավորը դեպի Եկեղայց կողմերը և արբուները հաստատեց Չրմես ավանում: Նա խաղաղութեամբ վարեց իր թագավորութեանը քսան և մի տարի, և մեռավ Հանապարհին՝ ճյան հլուսի տակ մեռլով:

ՏՐԳԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԻՄԱՐՈՒ, ԵՎ ԿՐԱՆ ԵՑՊԻ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Բազրատունչաց ցեղից կար մի ոմն Տրգատ, քաշ Սմբատի Սմբատուհի գտներ որդի, մի սրտառ և ուժեղ մարդ, կարճ հասակով և գծով կիրպարտեցով: Երան Տիրան Քաղաքավոր իրեն փեսայացրեց, իր Երանչակ գտները երան կնուխյան տալով: Գինը շարքի իր մարդուն, Տրգատին, բամբուրում էր երան, հաները կհրում, շարունակ իրեն վայ էր տալիս, որ իր նման շինող ու ազնվագույն կհեն ստիպված է մի տղից և հասարակ ծագողին մարդու հետ ապրել: Մրա վրա գալարանալով Տրգատը մի որ սաստիկ ձեձուձ է նրան, կտրում է նրա ձեկ մազերը, փեսամ է խաղապիրենը և հրամայում է քաշեքաշ նրան սենյակից դուրս գցել: Իսկ իրեն սպրտամբերլով զնաց Մարտասանի ամուր կողմերը: Երբ նա հասավ Սյունյաց աշխարհը, աչտուղ նրան հասավ Տիրանի մամուլան (ուրբ, ուստի աչտուղ էլ մնաց:

Մի որ Սյունյաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրավիրեց: Երբ զինով ուրախություն էին անում, Տրգատը տեսավ մի կին, որ շատ զեղեցիկ էր և նվագում էր ձեռներով, անունը Նուգինիկ: Տրգատը նրան քանկացավ և սասց Բակուրին: Այդ վարձակն<sup>100</sup> ինձ տուր: Նա պատասխանում է. «Չեմ տա, որովհետև իմ հարնն է»: Իսկ Տրգատը այդ կինն իր մտա քաշելով սեղանակիցների անայ զգված համբուրում էր նրան սիրաժարված անպուսպ կրտսևարդի նման: Բակուրը խանդաղելով վեր կացավ, որ կինը նրա ձեռքից լալի: Բայց Տրգատը ստիկ Լինելով ծագկամանն իրեն զներ գործադրեց, սեղանակիցներին էլ սեղանից զանց: Կարծես մի նոր Ողիսես էր<sup>101</sup> առաջ եկի, որ կտարում էր Պեննիպոլիսի սիրտարներին, կամ Լապիթանների և Լուչիպագրիկների կիսից էր տեղի ունենում Պերիթոսի հարսանիքում: Այսպես իր կացարանը հասնելով, իսկույն մի հեծավ և հարնի հետ միասին Սպիր գնաց: Բայց իսպապես ավելարդ էր պատանի այդ քանկահար մարդու քաշազործությունը:

Բայց գիտցիր, որ Բազրատունչաց ցեղի մարդիկ իրենց հայրենի կրանը Քաղնիկն սկզբում օտարտաի անուններ սկանցին կրել, ինչպես Բյուրատ, Տրգատ<sup>102</sup> և այլ այլաբնի անուններ, զրկվելով իրենց նախնական անուններից, որ կրում էին ուրանալաց անաչ, ինչպես Բալագախ, Տուրխա, Սենեքիտ, Ասուլ, Սուփատիտ, Վալարիտ, Ենանուր: Եվ ինձ թվում է. թե Բազրատունիների այժմ գործածված անուններից Բազրատը Բազրագիտ է, Ասուրը՝ Աշուտ, Նույնպես և Վալարիտան (զարնի է) Վարալ, Եամբառը՝ Սմբատ:

ՔԵ ԻՆՉՊԵՆ ԷՐ ՏԻԳՐԱՆ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ ԻՆՉ ԳՈՐԾԵՐ Է ԱՐԵՆ

Տիրանին հարտրում է նրա կցրայրը, Տիրան Վերջինը, որ Հայաց վրա Ֆալագորեց Պարսից Պերոզ Ֆալագորի շարքով տարում: Նա կրկար պարքի, քառասուններեւ տարի, բայց ոչ մի արխության գործ քայց չավեց, որ արժանի լիներ հիշատակելու, բայց մի հուշն աղջկանից կալանավորվեց այն ժամանակ, կեր վախճանվեց հոռմայեցիների Տիտոս Երկրոզ Ֆալագորը<sup>103</sup>, որ կուլվեց Անտանինոս Ավգուստոս, և Պարսից Պերոզ Ֆալագորն արշավեց հոռմայեցիների իշխանության վրա, որի պատճառով Պերոզ կուլումն ստացավ, որ նշանակում է հարթոց, որովհետև նա ստաշ հունարեն լեզվով կոչվում էր Վաղեղանո, իսկ թե պարսկերեն ինչպես էին կոչում: *ԱՐՄԵՆԱԿԱՆ ԳՐԱՆԳՐԱՆ*

Արք՝ նոր Անթուրի Ասորիքի վարալով առաջատակում էր պագետիսցիների կողմերը, նրա պատճառով և նրա հրամանով մեր Տիրանն էլ սպառտակեց Միշերիցայրը, որտեղ և կալանավորվեց մի աղջկանից, որ իշխում էր այդ կողմերում, մինչ Դուսիխանոս կեսարը<sup>104</sup> Աթենքում շինում էր մեհյանը, Սա Պերոզի մեռնելուց հետո մեծ զորքով Միշերիցայր գալով նվաճեց Հայաստանը և արժակեց Տիրանին: Նա Տիրանին կին ավեց իր մերձավոր Ծոփի կույսը, որին (Տիրան) Հայաստան զառնակա արձակեց իր մոտից, իսկ նրանից ծնված չորս պատանիներին նախարարական ցեղի վերածեց, նրանց մոր Ծոփի անունով Ռոփայան կոչելով, որդեկսի Արշակունի շղիզվեց, իսկ նրանցից առաջինին այդ նախարարության նահապետ նշանակեց:

Իսկ կրտսեր նախարարական ցեղերը թե՛ այստեղ մեզ մտա և թե՛ Կորսներում հաստատում է այդ Տիրանը այն մարդկանցից, որտեղ հեծելազորով աննշան էին<sup>105</sup>, բայց անձամբ երևելի , և նրան փրկելու համար հույների հետ պատերազմեցին, անձամբ Կորսներից և անձամբ մեր կողմից, ևսորս վերաբերում է Վճեններին մերձավոր հին ցեղերին<sup>106</sup>, Հայկազանց սերունդներից, ինչպես և մի քանի եկվորներին: Մենք անուն տա անուն շներ պատմի նրանց մասին, և անամբ՝ որովհետև մեզ հայտնի չեն, և մասամբ խույս տալով զժամբ աշխատանքից, և կրքորգ՝ որ շատերի անհաստատ լինելը կթելազրեր բուրն էլ հետագուտել: Այս պատճառով էլ մենք ոչինչ չենք գրի Տիրան Վերջինից հաստատված ցեղերի մասին, ինչպես շատ անգամ էլ քա համար աղաչես<sup>107</sup>, այլ կրքորգ միայն Տիտոս հաստատվածները, որոնց մասին համաստի գիտելուց: Բրովհետև մենք՝ որքան հեար էր, խուսափեցինք ավելորդ ու պաճուճված



խաբերից և ինչ որ անհավաստի զօրծ կամ կարծիք կար, միայն հետև-վելով արգարն ու ճշմարտոր գրելու, ուրիշներից (ազավելով) կամ մե-զանից՝ որքան կարողութուն ունենիր, Այստեղ էլ նույնպես վարվելով՝ խաբիս ընթացքը կանգնեցնում եմ, երբ անպատշաճություն եմ նկատում կամ հավաստիության կողմից կասկածելի մի բան: Եվ բեզ էլ, ինչպես շատ անգամ, այժմ նա ազատւմ եմ, մեզ մի՛ շարկադրիր ավելորդ բաներ գրելու: (միգուցե) այդպիսի թիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավաստի ամբողջ աշխատությունն անպետք ու ավելորդ մի զօրծ դառնա, որ հավաստապես գտանկ է և ինձ, և բեզ:

## ԿԵ

### ՎԱԿԱՐՈՒ ԲԱԳՎԱՐՔԱՆՈՒ ՄԱՍԻՆ, ՔԱՍԵՆԻ ԱՎԱՆԸ ԾԽԵԼԸ, ԿՈՒ ՔԱՎԱՔԸ ՊԱՐՄՈՊՈՎ ՊԱՏԵԼԸ, ԽԱՋԵՐՆԵՐԻ ՀՅՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆԱԿ ՄԱՇԸ

Տիգրանի մահից հետո թագավորում է նրա որդին, Վազարը իր համանուն Վազարի, Պարսից թագավորի երեսունհինգուորորդ տարում: Մա ավան է շինում այն տեղը, որ նա ճանապարհին ծնվեց, երբ նրա մայրն Այրարատ ձմեռանցից զնայու ժամանակ հանկարծ երկուցորդ բռնեց և նրան ճանապարհի վրա ծնեց, Բասեն զավատում Մրուց և Երասխ գետերի խառնուրդի մոտ: Այս ավանը շինելով՝ իր անունով կոչեց Վազարշավան: Մա պարսպով պատեց նաև Վարդգեսի հզոր ավանը, որի մասին տասնպնեներն ասում են:

«Վազթական դեպ Վարդգես մանուկը  
Տուհայց զավտոց, Բաստիս գետի մոտ,  
Եկավ ու նստավ Երեչ բրբի մոտ,  
Որսիմեղ քաղրի, Քասուի գետի մոտ,  
Երվանդ արքայի զուր թափելու»<sup>108</sup>:

Այս երվանդը առաջինն է, Սակավակյացը, Հայկազուններից, որի բրտը Վարդգեսը կին առնելով՝ այս ավանը շինեց, որտեղ և Արշակունի Տիգրան Միջինը նստեցրեց հրեա զեթիների կետք, որ և վաճառաշատ քաղաքադուլ զարձավ: Այժմ Վազարը պատեց նրան պարսպով և ամրո պատվարով և կոչեց Վազարշավան, որ (կոչվում է նաև) նոր քաղաք:

Մա բանն տարի թագավորելով մեռավ: Ուրիշները լով ապրել են, բայց ես ասում եմ, որ սա մահից հետո էլ ապրում է իր բարի անունով

բան շատերը թույլ թագավորներից: Որովհետև սրա ժամանակ հյուսիս-սային ազգերի բազմությունը, խաչդրներից և բասիլներից<sup>109</sup> բազկացած, ճորս զոհեց<sup>170</sup> դուրս են գալիս, իրենց առանցքում և թագավոր ունենալով մե ան Վեասեղ Մուրհասի, և զայնս անցնող են Կուր գետի այս կողմը: նրանց զեմ է զորս զայնս Վազարը մեծ բազմությունը և բաշամարտիկ մարդկանցով, նրանց բազմությունը կրտորելով՝ զիսկները ստեղծ դաշտի երեսին, և երկար տեղ նրանց հաշմանելով անցնում է ճորս կապանով: Այստեղ թշնամիները նորից ճակատամարտ կազմեցին. թեպետ Հայոց բաշերը նրանց փախուստի զարձրին, բայց Վազարը մեռավ կրտուի ազդեղավորների ձեռքից:

Թագավորությունն առնում է նրա ետսրով որդին Պարսից Արտավան թագավորի երրորդ տարում: նա իսկույն Հայոց զորքերը միացնելով անցնում է մեծ լեռը, իր հոր ժահվան վրեժն առնելու: նա սրով և զեզարզով վաճում է այլ հզոր ազգերին, բոլոր պիտանի մարդանցից հարյուրից մեկը պատանդ է վերցնում և իբրև իր տերության նշան մի արձան է կանգնեցնում հունարեն գրով, որպեսզի հայտնի լինի, թե ինքը հեազանդում է հոռոմայեցիներին:

## ԿԶ

### ԹԵ ՈՐՏԵՂԻՆ Ե ՊԱՏԵՐՈՒՄ ԱՅՍ ԲԱՆԵԼԸ

Մեզ այս բաները պատմում է Բարդսանը<sup>171</sup>, որ Եգեանիայից էր: Որովհետև նա վերջին Անտոնինոսի ժամանակ պատմադրի հանգիստացավ, նա առաջ հետևում էր Վաղևեսիանոսի ազանցին, որը նա հետո անաղթեց, ստությունը երևան հանելով, սակայն ինքը ճշմարտության չհանգեց, այլ միայն նրանից զատվելով՝ իրենից նոր ազանդ հարեց: Բայց պատմության մեջ շատեց, սրովհետև հզոր էր խոսքով: նա նույն-իսկ համաձայնեց թուղթ գրել Անտոնինոսին, շատ բան գրեց մարկիս-նայոց ազանցի և ճակատադրի զեմ և մեր աշխարհի կուրբերի պաշա-ստուցի մասին:

Որովհետև նա մեր կողմերն եկավ, հուսովով թե կկարողանա հե-տևողներ գտնի վայրենի հեթանոսներին մեջ: Բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոքը, կարողաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը: նա իր կողմից ավելացրեց իր ժա-մանակի անցքերը, բոլոր փոխադրեց ասորի լեզվի և այսպես նրանցից հու-

արանքի, Բակ ձառյանում՝ մեհենական պաշտամունքի վերաբերմամբ պատմում է, թե Հայոց Քաղաք Տիգրան Վերջինը պատվով է իր կերբը՝ Մաման բրմապեաի գերեզմանը Բազաձառում, Բազրանց զավառում, գերեզմանի վրա բազին շինելով, որպեսզի այդտեղի գոհերից վախելն բոլոր անցորդները և չյօտրի թեղունվեն զիշերելու նամար, Հնուս Վազարչն այդ տեղում ժողովրդական տնն սահմանեց նոր ստաբա սկզբրին, նազասարգի ամսագրիին: Մենք այս պատմութիւնից առանք ու գրեցինք թեզ Արտավազգի Քաղաճորութիւնից մինչև հասարմի արձան (Կանգնեցնելը)<sup>172</sup>:

## ԿԷ

### ԹԵ ԻՆՉԳԵՍ ԱԳԱՔԱՆԿԵՂՈՍ ԼԱՍՏՈՒՑ ՊԱՏԵՑ

Ինչոհն ստացինք, Վազարչից Քաղաճորութիւնն անուն է նրա որդին՝ հասարմը, սուրբ Տրդատ Մեծի չափը: Նրա և նրա տոհմակիցների մասին փոքր-ինչ նամատտ պատմում է Տրդատի չափը քարտուղար Աղասեանցեղոսը<sup>173</sup>, փորորչաան Շիշատակելով Պարսից Արտավան Քաղաճորի մահը, Պարթևների անբութիւն վերջապալը Մասանի որդի Արտաշիբի ձեռքով, պարսիկների նվաճվելը նրա ձեռքի տակ, Տրդատի չոր՝ հասարմի վրեժխնդիր լինելը և ասպատակութիւնը Պարսից և Ատրքեսանցոց աշխարհն աճերելը: Երբց հետո ստում է, թե հասարմը (պատմում) ուղարկեց իր թնիկ աշխարհը, Քուշանների կողմը, որպեսզի իր տոհմակիցներն իրեն օգնութիւն անան և Արտաշիբին դիմադրեն, Բայց նրանք, ստում է, չլսեցին (հասարմին), որովհետև աճելի չան ու նազան էր Արտաշիբի տերութիւնը, քան իրենց ազգաստճի և կարայրութիւն տերութիւնը, և որ հասարմը վրեժխնդիր է լինում ստանց նրանց: Սրա վրա (Աղասեանցեղոսն) աճկութիւն է, թե (հասարմը) ստար տարի այսպեհ նամատակի աճկելով նրանց ամբողջ երկիրն ամայացնում էր: Սրանից հետո պատմում է Անակի նկնգաճոր զպալատը, որ չհապուրկեց Արտաշիբի խոտառմից, որ նա ասաց, թե «Զիք թեիկ սեփական պատմական Պահլաւը ետրից ձեզ կգործնեն և թե Քաղաճով կփոտաճորեն»: Աստի Անակը հանն է արնում և սպանում է հասարմին:

Արդ՝ Քնկեա Աղասեանցեղոսը նամատտ պատմեց այս անցերբը, բայց ևս կամենում էմ երկար ու մանրամասն գրել այս ժամանակի պատմութիւնը բուն սկզբից, լի և խոն ճշմարիտ տեղեկութիւններով:

## ԿԸ

### ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԱՉԳԵՐԻ ՄԼԱՍԻ, ՈՐՈՆՃԻՏ ԶՈՒՆՎԵՏԻ ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՅԵՂԵՐԸ

Սուրբ գիրքը ձեզ աճանգում է, որ Աղամից սկսած բանեմեկերորդ նահապետն էր Արքաճամ, որից ստաց է կել պարթևների ազգը: Ռոճահտն (Ս. գիրքն) ստում է, թե Սառայի ժեռնելուց հետո Արքաճամը կին ասաճ Քեսուրային<sup>174</sup>, որից ծնվեցին ձեռքար և նրա կերայրիները, որոնց Արքաճամն իր կնկանուճիւն ժամանակ բամանեց Բասահից, արձակելով նրանց արևելյան երկիրը: Նրանցից սերվեց պարթևների ազգը: Սրանցից էր Արշակ Քալը, որ մակեդոնացիներից ապստամբելով Քաղաճորից Քուշանց երկրում երեսունեմի տարի, իրանից հետո նրա Արտաշես որդին քանեկեց տարի, ապա նրա Արշակ որդին, որ կուլից Մեծ, որ Անտիոքոսին սպանեց և իր կերբը՝ Վաղարշակին Հայոց վրա Քաղաճոր գրեց, իր երկրորդը զարձնելով: Բակ ինքը լվելով Բահլ, այնտեղ նաստանց իր Քաղաճորութիւնը, հիտունեք տարի. այս պատճառով նրա սերունդները Պահլով կուլվեցին, ինչպես և նրա կերբը Վաղարշակի սերունդները նախնի անունով կուլվեցին Արշակունի:

Ե՛վ սրանք Պահլավիկ Քաղաճորները: Արշակ Մեծից հետո նաև Քաղաճորութիւնն անուն է Արշական, Հայոց Վաղարշակ Քաղաճորի տասներեքերորդ տարում՝ երեսուն տարի, ապա Արշաճակ՝ երեսուն և մի տարի: Նրանից հետո Արշակ՝ քսան տարի. ապա Արշավիր՝ քսուսուսեկեցից տարի: Նա ունենում է երեք որդի և մի դուստր, ինչպես ստալ ասացի<sup>175</sup>. Նրանցից անցորդնիկ անունն էր Արտաշես, երկրորդինը Կարեն, երրորդինը՝ Սուրեն, զուտարը կուլում էր Կուշ:

Արդ՝ Արտաշեսը չոր մահից հետո կամեցավ իր ցեղով Քաղաճորելու երապրելի վրա. էրը կերայրիները շամաճայինցին, նա նրանց ձեճանեց ու աշքան ողորպիան և պատրոզական խոսքերով, որքան սաստով: Ե՛վ Արքալը նրանց մեզ երզումով պայման հաստատեց, որ Քաղաճորի Արտաշեսը իր զավակներով, իսկ կնիկ նրա զարմն սպաճի, ապա կերայրիներն ստանան Քաղաճորութիւնն իրենց աճագութիւն կարգով: Ե՛վ Արտաշեսը երաճեցի այս (Նամաճայնութիւնն) ստանալով՝ զաճաներ է նրանց պարզելու և նրանցից ստեղծում է նախարարական ցեղեր, յուրարանյուր մեկի անունով, բոլոր նախարարութիւններից բարձր զանելով նրանց և նրանց ազգի նախնական անունը նրանց վրա պահելով, որպեսզի կուլվեն Կարենի Պահլավ, Սուրենի Պահլավ, Բակ թուրք Անպահպանի Պահլավ, որովհետև նրա ամուսնից զորք:

րի վրա էր (նշանակված)։ Եվ այս կարգով նրանք երկար տարիներ մնացին, մինչ որ նրանց տեսությունը վերջացավ։

Բայց զո՞ւ այստեղ մեզ չբաժանեմ իբրև ավելորդաբանի, որ մեր մի անգամ արգին պատմածը նորից սասցիկը։ Բայց զիտցիք, որ մենք ցանկալով, որ բնիկները լավ ծանոթություն ունենան մեր Լուսավորչի ազգականների մասին, այսօրեւելով կրկնեցինք մեր ասածները։

## ԿԻՐ

### ՔԵ ԻՆՉԳԵՍ ԷՐ ՊԵՐՈՒՑ ԱՐՏԱՆԵՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՏԵՂԸ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՉԸ

Անցնենք այժմ թվարկելու Արտաշեսի ցեղից թագավորներին, մինչև նրանց տեսության վերջանալը։ Ինչպես սասցիկը, Արշավիրից հետո թագավորում է Արտաշես երեսուներորտ տարի Ապա Դարևո՞ Երեսուտ տարի, Արշակ տասնինը տարի, Արտաշես՝ քսան տարի, Պաշուգ՝ երեսուներորտ տարի, Վազար՝ հիսուս տարի, Արտավան՝ երեսուներե տարի<sup>75</sup>։ Սրան սպանեց ստա՛րացի Արտաշիբը, Սասանի որդին, պարթևների թագավորությունը վերջացնելով և նրանց ժառանգության աշխարհը գրավելով։ Այս ժամանակի վերաբերյալ պատմիչներ շատ կան պարսից և առօրոց մեզ, նաև հույների։ Որովհետև պարթևներն իրենց թագավորության սկզբից մինչև նրա զագարտմը գործ ունեցան հռոմայեցիների հետ, երբեմն նազանգություն, երբեմն պատերազմով, ինչպես պատմում են Պաղկեփատոս<sup>77</sup>, Պորբիուր, Փիլիմոս և ուրիշ շատերը։ Բայց մենք կպատմենք Բարսումալի զբրից, որ բերեց հոսո՛հրտը։

## Հ

### ԻՆՉ ԱՌԱՊԵՆՆԵՐ ԿԱՆ ՊԱՇԱՎԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս հոսոհրտը պարսից Շապուհ թագավորի զորին է կելի և ընկել է հույների ձեռքը, երբ Հուրիանոսը, Պատարատոս կոչվածը, զորով Տիգրանի վրա գնաց. իսկ նրա մահից հետո Հորիանոսի հետ Հուստատան եկավ արքունական սպասավորների հետ միասին, մեր հովանս ընդունելով կուլից Եղիազար և հունարեն սովորելով գրեց Շապուհի և Հուրիանոսի գործերի պատմությունը։ Սրա հետ միասին նա թարգմանեց նաև (թագավորների) պատմությունը պարսեմակոց մի մասույան, որ գրել էր իր գերեկից մի ոմն Բարսումա, որ պարսիկները կոչում են

Ռաստոհուն<sup>78</sup>, որտեղից անհելով մենք այս գրքում կրկնում ենք, զից զցելով նրանց առասպելների բարբառանքը։ Որովհետև մենք անտեղի ենք համարում այստեղ կրկնել առասպելները՝ Փափազի երազը<sup>79</sup>, Մասանից մանկավազատ հոր դուրս գալը, հոսը պատելը, լուսանկը, կախարհների, այսինքն քաղցյանների նախազուշակությունը և սրանից հետո պատահածները, Արտաշիբի պոռնկական խորհուրդը սպանությունը հանգեցրած, մոլի աղչիկ անմիտ հանձնարարությունը նոխարի մասին և բուրբ մնացածը, նաև այժի ծիծ աարը երևիսյին արծվի հովանու ներքև, ազտավի զուշակություն, զերապանած առյուծի պահպանությունը զալլի սպասավորություն, և բաշ մենամարտությունը, և ինչ որ աշխարհանության կարգին է պատկանում։ Մենք միայն ստույգը կգրենք, ճշմարտության վաշի պատմությունը։

## ՀԱ

### ԽՈՍՐՈՒՆ ԱՌԱՊԵՆ ԲԱՔԱՎԱՆԸ ԳԵՊՈՒ ԱՌՈՒՍԱԿՆ, ՈՐՈՎ ՄՏԱԳՐԷ ԷՐ ՓԿԵՆՆ ԱՐՏԱՎԱՆԻՆ

Երբ Արտաշեսը, Սասանի որդին, Արտավանին սպանեց և ինքը թագավորաց<sup>80</sup>, Պահլավյան երկու ցեղերը, որսը կոչվում են Ապաշապետի և Սուրենի Պահլավ, նախանձ պահած լինելով իրենց հարազատ ազգից թագավորած ցեղի զեմ, որ Արտաշեսինն է, համարությամբ ընդունեցին Սասանի որդի Արտաշիբի թագավորությունը։ Բայց կարեն Պահլավի տունը հավատարմություն պահպանելով զեղի իրենց եղբայրական ազգակցությունը, պատեղազմով դիմարկեցին Սասանի որդուն՝ Արտաշիբին։ Բայց զեմ ավելի առաջ Հայոց հոսարով թագավորը, հենց որ լսեց ծագած խոստովան մասին, աճապարեց օգնության զիմելու։ Արտավանին, նրան փրկելու՝ եթև հնար լինի։ Բայց երբ նա Ասորեստան մտավ, այստեղ լսեց Արտավանի մահվան բոթը, բոցը Պարսից զորքերի և նախարարների միարանությունը (Արտաշիբի հետ), ինչպես և իր ազգի՝ Պարթևների և Պահլավիկների, բացի Կարենյան ցեղից։ Ուստի հոսարով արա մտա պատգամավորների ուղարկելով՝ մեծ արամությունը ու վշտով վերապանում է մեր աշխարհը։ Եվ իսկույն շատարով ծանուցանում է հռոմայեցիների Փիլիպոս կայսրին, նրանից օգնություն խնդրելով։

**ԽՈՍՐՈՎԸ ՓՈՒՊՈՍԻՆ ԵՎ ԿՆՈՒՓՅԱՆ ԱՍԱՆԱԿԻՉ ՊՍԵՆՔԱՅԻՆ  
ԿՄՈՒՄ Է ԱՐՏԱՅԻՆ ՎՐԱ**

Փիլիպոս, իր Բագավորության մեջ խառնություն ծագած լինելով, չկարողացավ համայնյիններ զեղերը պարսպեցնել և խորովին օժանդակելու համար, բայց նրան օգնեց զբով հրամայելով, որ բոլոր կողմերից նրան եղատեսնէ: Այսպիսի հրաման ստանալով՝ նրան օգնեալու են հասնում Թիլգոտոսից և անապատից սկսած մինչև Պանոսոսի ժողովրդաց կողմերը: (Խոսրովը) այսբան բազմությունը ձեռք բերելով՝ դիմում է Արտաշիի վրա, ճակատամարտ տալով նրան ստիպում է փախչել և խլամ է նրանից Ատրեստանը և մյուս արքայանիստ աշխարհները:

Գարձլայ պատգամավորներ է ուղարկում իր տահմային Պարթև և Պաշլափի ազգերին և Քուշանաց աշխարհի բոլոր գորերին, որ զան իր մոտ, Արտաշիից վրձն անելու, և (հետո) ինքը նրանից արժանագործին կհազարկեցին, որպեսզի անբովիտը նրանց ձեռքից զուր չլա: Իսկ նրանք, վերջ հիշված Ասպահայեանի և Պարսի Պաշլափները, շահամայնեցին, որի պատճառով Խոսրովը մեք աշխարհը վերագրեցավ, ոչ այնչափ ուրախանալով տարած Տաղթության վրա, որքան ջաղված իր ազգականների հետ կանգնելու համար: Այս ժամանակ նրա մոտ են հասնում մի քանիսն այն պատգամավորներից, որոնք դիացել էին ամենապատավոր ազգի մոտ, աշխարհի խորքերը, բուն Բաշլը, և նրան լուր բերին, թե քո ազգական Վեհոսանը իր ջեղով, Կարենյան Պաշլափով, Արտաշիին շահագանգեց, այլ քո կոչին անաչլով, դալիս է թեզ մոտ:

**ԽՈՍՐՈՎԻ ԿՐԻՆ ԶԱՐԱԿՆԱԿԻՆ ԱՐՏԱՅԻՆ ՎՐԱ  
ԱՌԱՆՑ ԼՈՒՊԱՅՆՆԵՐԻ ՕԿՆՈՓՅԱՆ**

Խոսրովը թեպետ շատ ուրախացավ, լսելով իր ազգականներին զարթալու լուրը, բայց այս Արտախաթունը երկար չտեսց, որովհետև շուտով հասավ բոթը: Քե Արտաշի անձամբ միարանած զորքով հեռաժամու է եղել և կուտորել է Կարենյան Պաշլափի ջեղը, բոլոր արուններին սննդացնելով, երիտասարդներից սկսած մինչև կաթնակները, բացի մի երեխայից, որին ազանց նրանց տանը հավատարմի մեկը Բուրջ անունով է փարսցրեց Քուշանաց աշխարհը և հանձնեց նրա մի քանի թուր ազգականներին: Արտաշիքը շատ ջանաց ու խեղճեց, որ այդ երեխան իր

ձեռք տան, բայց չհաջողեց, որովհետև ազգականները միարան (մեք-ժեցին), այնպես որ Արտաշիքն ակամայից կրկնց, որ երեխային վտանգ չի հասնի: Այս առիթով պարսիկները բյուր սուտաբններ շինեցին նրա մասին, որ անբան (անասուններն) ապագավորելիս են կզել երեխային: Սա Պերզգամասն է, Կամասրականների ջեղի նախնին, որի մասին իր անզգու կպատմեն:

Բայց մենք (գտնանք այն անցքերին), որ տեղի ունեցան Կարենյան Պաշլափի ջեղի կոտորածից հետո, որի վրձնը պահանջեց Խոսրով թագավորը ոչ թույլ չափով: Թեպետ և Փիլիպոսը վախճանվել էր և հոտմայեցիները թագավորությունը շփոթության մեջ էր բռնել և մեկը մյուսին ձեռքից խլում էին անբովիտը կարճ ժամանակով, ինչպես էին Գեկիտս, Գալլուս և Վազրիանոս կայսրերը: որոնք Խոսրովին շոգնեցին, բայց նա իր զորքով և նրան հարած ուրիշ սիրելիներով և հյուսիսային ազգերի օգնությամբ Արտաշիին հաղթեց և հաղածելով թեյց մինչև շնդիաց աշխարհը:

**ԱՌԱՎԻ ԳԱՍՏՅԱՆ ՄԱՐԻՆ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԸՂԱՏՈՒՄԸ**

Այսպես Արտաշիքը Խոսրովից մինչև շնդիաց աշխարհը փախելով և շատ եղզվելով՝ մեծամեծ խոստումներ էր անում նախարարներին, կթե մեկն իրեն ազատի նրանից անսովորեղի միջոցով կամ զառտեսպան սրով սպանելով: զանազան խանգ պատիվներ էր խոստանում: ՍՄանականը ձեզ, պարթևազաններից, ասում է նա, կարծես ավելի հեշտ կլինի նրա գեմ զավ սարքել սիրո պատրվակով: ազգականության պատճառով նա ձեզ կխոստանա և կպարտվի: նրանց խոստանում էր վերագրանել իրեն Պարթևական տունը, որ կոչվում էր Պաշլափ, որբայանիտս Բաշլ բազարը և ամբողջ Քուշանաց երկիրը: նաև խոստանում էր թագավորական ձեռնագրերներ, Արշայ աշխարհի կեռը և իր երկրորդը լինել իր ձեռքի տակ: Այս խոստաններից հրատարկելով՝ Անակը, որ Սուրենյան Պաշլափի ջեղից էր, հանձն է անում Խոսրովին սպանել: Եվ կեզձեղով թե զազթում է, փախչում է Արտաշից, նրան ձեռ համար հետամուտ են լինում Պարսից զորքերը և իրքե թե փախցնելով՝ բշում են Ատրեստանով, բերում հանում են Արտապատակաի սահմանների մոտ Կորդուքի միջով: Մեծն Խոսրովը Առնուացց զավանում այս քանի լսելով՝ կարծում է, թե Կարենյաններն են կողմերը և մի գունդ է ուղարկում Անակին օգնության: Սրանք Անակին պատահելով՝ թագավորի հրամանով



երան տանում են Արտազ կուլված բազալը, մի դաշտավայր տեղ, որտեղ հայտնվեցին մեր մեծ և սուրբ Քաղցրու առաջնայի նշխարները:

Այստեղ եւ հիշում եմ քրանչելի ժերի<sup>151</sup> գրույցը, որ ստան էր. «Նախնիքներից ունեմ այս գրույցները, որտեղ հիշատակությունը անցել է հորից որդուն, ինչպես Որինպոտորի գրույցները Տարսնի և Միմ լեռան մասին»: Արզ՝ երբ Անակ ապրում էր Արտազի գաշտում, նրա գիշերելու տեղը խորանի ներսի զին, պատահեց սուրբ առաքյալի զերեզմանի մտա անդդոյիքը, և ստան էն, այստեղ է հույժուն առև մեր սուրբ և մեծ Լուսավորիչը: Ուստի և նույն առաքյալի շնորհն ստացավ նա, որ նրա հանգաբարանի մտա գոյությունը գտավ և նրա հոգեւոր մշակութային պահպարտը լրացրեց:

Անակի Հայաստան գալուց երկու տարի անցած՝ երրորդումը նա սպանում է Խոսրովին, որ թագավորեց բառասունութ տարի: Ինքը (Անակը) և բոլոր իրայինները մեռնում են. Աստուծո նախախնամությունը պահում է միայն սրան, որ, կարելի է առել, Աստուծո կամքով և առաքյալի շնորհով սանգովեց կամ յուսավորվեց մոր արգանգումը, որին և տվեց նա իր առաքելական շնորհը: Իսկ այս գրույցներից մեացածները բնիկ կզատեն Ագաթանգեղոսը:

## ԼԵ

### ԿԱԳՆՈՎԱԿԱՆ ԿԵՍԵՐՈՒՄԻ ԵՎԻՍԿՈՊՈՍ ՓԵՐՄՈՒՆԱՆՈՍ ԵՎ ՆՐԱ ԳԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԱՍԻՆ

Կապագովական Կեսերիայի Փերմոնիանոս եպիսկոպոսը<sup>152</sup> սրանչելի էր ուսումնասիրությամբ, որ և տղայության հասակում Որդիների մտա զնաց ուսանելու: Նա շատ զգամաբեր գրեց, որոնցից մեկն է պատմությունը եկեղեցու հայածանքի, որ նախ ժողով Մարտիրիանոսի և Գեկասի<sup>153</sup> մամոնակ և վերջը՝ Գիովղետիանոսի արքեւում, հիշվով նաև թագավորների գործերը: Այս գրքում նա առում է, թե աղբթանագրացիների առանձնվեցորդը եպիսկոպոսն եղավ Պետրոսը, որ նահատակվեց հայածանքի իննեորդ տարում: Նույնպես գրում է, թե մեր աշխարհում էլ շատերը նահատակվեցին Խոսրովի ձեռքով և նրանից հետո ուրիշները ուրիշներից: Բայց որովհետև հավաստի և կարգին չի պատմում, ոչ էլ անուններն է նշանակում և նահատակության տեղերը, ուստի մենք էլ կարևոր չհամարեցինք կրկնել: Նույնպես գրում է, թե Սեներոսի որդի Անտոնինոսը պատերազմել է Միսղիստորում Պարսից Աղաբաշ թագա-

վորի հետ և մեռել է Եղեւիայի և Խառանի միջև, իսկ մեր Խոսրովը ոչ մեկի կողմը չի անցել:

Իսկ ինչ որ նա պատմում է Խոսրովի մահից հետո մինչև Տրդատի թագավորելը, անշիշանություն տարիների մասին, մենք ստույգ համարելով կրկնում ենք բնիկ համար համառոտ խոսքերով: Իսկ ինչ որ կատարվել է Տրդատի թագավորության մամոնակի և նրանից հետո, մենք ոչ անփութությամբ և անզգույնությամբ վրիպելով և ոչ կամավոր սխալով նրա մեջ պատմություններ սարքելով, այլ հետևելով հնաց իրականների մատանակիրների հիշատակություններին, և սրանց նմանությամբ իմաստուն և հնախոս բանաստեղծ մարդկանց հաղորդումներին, ստույգ տեղեկացանք և արդարապես բնիկ պատմեցինք:

## ԸԳ

### ԱՐՏԱՏՈՒՐԻ ՄԵՆ ԳՐԱ ԳՄԵՒԸ ԵՎ ՏԱԿՏՈՒՄԻ ՆԱԳԹԵԸ

Նույն մարզն ստան է, թե Խոսրովի սրախողիտը անելուց հետո Հայոց նախարարները միաբանելով՝ իրենց զգնության եկ կանչում Փոյուզիայում գտնվող Հունաց զորքերը, պարսիկներին դիմադրելու և Հայոց աշխարհը պաշտպանելու համար, և իսկույն իմաց տվին Վաղերիանոս կայսրին, Բայց որովհետև գոթերը Դանուր զեռն անցնելով շատ գազանների զերեցին և Կյուկղազի կղզիները<sup>154</sup> կողոպտեցին, ուստի Վաղերիանոսը<sup>155</sup> չի կարողանում մեր աշխարհին համանավորել: Եսեկ նրա կյանքն էլ կարճ է առում, և թագավորությունն անցնում է Կղզիզոսու և նրանից հետո Ավրեղիանոս, արագ-արագ իբր հաջորդելով, նույնիսկ ամխանելով թագավորեցին Կյուստոս և Տակիտոս և Փղոսիանոս Եղրայրները: Այս պատճառով Արտաշիրը համարձակաբար արշավեց մեր երկիրը, Հունաց զորքերը փախերեց և մեր աշխարհը մեծադույն մասը զերելով ավերակ դարձրեց: Հայոց նախարարները Արտաշիրյանց ընդ հետ նրանից (խուսափելով) գաղթում ապսխանում էին հույներին, սրանցից մեկն էր և Արտավազ Մանգակունին, որ Խոսրովի Տրդատ որդուն առնելով հասցնում էր կայսեր զուռը: Ուստի Տակիտոսը հարկազրկած գալիս է Արտաշիրի վրա պոնտացաց կնիժերը, իսկ իր եղբոր Փղոսիանոսին ուրիշ զնով արձակում է զնպի Կիլիկիա: Իսկ Արտաշիրը Տակիտոսին հասնելով՝ նրան փախցնում է, որ և իրայիններից սպանվում է Պոնտացաց ճանչուրում<sup>156</sup>, այսինքն նազարեում. այսպես և նրա Փղոսիանոս եղբայրն (սպանվում է) Տարսնում ուխտնեւթ օր հետո:

#### ՏԻՐԱՆԻ ԹՈՒՂԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՄԵՆՆ ՎՐԹԱՆՆԵՍԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻԾ ՓՈՒՎԵԼԸ ԵՎ ՍՈՒՐԸ ՀՈՒՄՈՒԿ ԼԱԶՐՈՒՆԻ ԱՅՍ ԱՅՈՒՆԻ:

Ավգոտառ Կաստանզը, Կաստանդիանոսի որդին, իր ինքնակալության սասնելովորոր տարում թագավորեցնում է Տիրանին, խորովի որդուն և ուղարկում է շայտառան մեծն Վրթաննսի հետ: Ես գալով խաղաղությամբ պահում է մեր աշխարհը, պարսիկների հետ հաշտություն անելով և ոչ թև պատերազմներ, շարկ վճարելով հույներին, մասնավոր բան էլ պարսիկներին, խաղաղ ապրում էր իր հոր նման, եսլյպես ոչ մի բաշտության գործ ցույց չառավ, եսլյնիսկ շնտեսելով հայրենական առաքինությունը, այլ ամեն բարեպաշտությունից թուլացած գաղտնի կերպով, որովհետև մեծն Վրթաննսից բաշվելով չէր համարձակվում հայտնապես արտաքին անձնատուր լինել:

Իսկ մեծն Վրթաննսը եպիսկոպոսության տասնհինգ տարին լրանալիս փոխվում է այս աշխարհից Տիրանի կերորդ տարում, թագավորի հրամանով նրան տարան թագեցին Թորգան գյուղում, կարծես մարգարեական աշքով աննելով, որ շատ ժամանակ անցնելուց հետո եսլյն անդում պետք է թագվեն նրա հոր նշխարները: Իսկ ամբողջ հաջորդում է նրա շուսի որդին, Տիրանի չորրորդ տարում, որ և լիովին հնտեղ է լինում իր հայրերի առաքինության:

### ԺԲ

#### ՇԱԳՈՒՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿՈՍՏԱՆՆԻ ԼՆՏ

Բայց Եսպուհը, Ուրիկի որդին, շատ սեր հաստացեց մեր Տիրան թագավորի հետ, մինչև իսկ նրան թիկունը և օգնական եղավ՝ նրան ազատելով չլուստական ազգերի հարձակումից, որոնք միարանելով զուրս կկան ճորա պահակից<sup>255</sup> և չորս ասրի ժամանակ բանակ գրին ու մնացին Աղվանքի սահմաններում, Ուրիշ շատ թագավորներ էլ նվաճեց Եսպուհը և շատ բարբարոս ազգերից էլ օտանդակություն գտնելով՝ հարձակվեց Միշերհրաբի և Պաղեստինի վրա: Իսկ Կաստանզը Հուլիանոսին կհասր<sup>256</sup> գարձնելով՝ ինքը գինվեց պարսիկների զեմ: Ծակատամարտի մեջ երկու կողմերն էլ պարտություն կրեցին, որովհետև երկու կողմից էլ շատ ընկան, և ոչ մեկը մշտապից երես չգարձեց, սեպես որ համաձայնության գալով՝ խաղաղություն կնքեցին մի բանի տարով: Պարսիկների (պատերազմից) վերազանդավ՝ Կաստանզը երկար հիվանդությունից հետո վախճանվեց կիրիկիայի Մամփալուեստ բաղաբում, բաներից տարի թագավորելուց հետո: Մրա օրերում Երուսաղեմում երկնքից երեսայ լուսեղեն խաչը բաղաբի բուր հավատացյալներին և անհավատներին երանելի կյուրեղի<sup>257</sup> ժամանակ:

### ԺԳ

#### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԻՐԱՆԸ ՀՈՒՄԱՆՈՍԻՆ ԸՆԿՈՒՄԱԶ ԳՆԱԼՈՎ ՊԱՏԱՆՆԵՐ Է ՏԱԼՍՍ

Այս ժամանակներում շունաց վրա թագավորեց ամբարիշտ Հուլիանոսը<sup>258</sup>. նա Աստոնև ուրացավ, կուրերը պաշտեց, հայաժամը և խոսվություն հուզեց եկեղեցու զեմ և ամեն կերպ ջանում էր բրիտանոնական հավատը հանցնել: Բայց ոչ թև բռնությամբ էր հեաղանդեցնում, այլ խորամանկությամբ հնարք էր փետում, որ Բրիտանոսի պաշտոնը խախտվի և զենքին երկրպագություն մատուցվի: Երբ նա բոս իրավունքի գինվեց<sup>259</sup> պարսիկների զեմ և կիրիկիայով անցնելով Միշաղեստ հասավ, Պարսից սահմանապահ գորբերը եփրատ գետի նավակամարի շվանները կտրելով՝ անցրը պաշտպանում էին: Իսկ մեր Տիրան թագավորը Հուլիանոսին ընդատաջ գալով՝ հարձակվեց և Պարսից գորբերի վրա, նրանց հայաժամ է և սպասավորություն մատուցանելով՝ ամբարիշտ Հուլիանոսին և հեծելազորի ամբողջ բաղաժությունն անց է կացնում (գնտով) և շատ մեծաբում է Հուլիանոսից:

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ԶՈՐԱՆԸ ՀԱՅՈՑ ԶՈՐԵՐԸ ԱՌՆԵԼՈՎ ՀՈՒՆՈՒՆՈՍԻ ՄԻՏՈՑ ԷՆՏ Է ԳԱՆՆՈՒՄ ԵՎ ՅԵՂՈՎ ԿՈՏՈՎՈՒՄ Է**

Սուրբ Հուսիկի սպանման լուրը և բոլոր նախարարների քրթմըշլուրն հասավ Ռշտունյաց Չորս նահայտեի ահանջին, որ Հայոց հարավային զնդի գորսպետն էր Մանանդիոսի փոխանակ և Տիրանի հրամանով գնացել էր իր գործով Հուլիանոսի հետ: Այս լուրը լսելով՝ նա սասց իր գործին: «ՉՉարվենք այն մարզու հրամանով, որ զայնսկզբուցուն է գցում Բրիտանի երկրպագութիան մեջ և սպանում է նրա սրբերին, և շուղիցնեք այս ամբարիշտ թագավորին»: Չորս իրեն կամակից զարձնելով՝ հետ է գտնում և գնում ամբարնում է Տնորքում, մինչև տեսնի, թե ինչ պիտի անեն մյուս նախարարները: Բայց Հուլիանոսի սուբհանդակները նրա զայոց սասց են հասնում և բերուկ են Տիրանին թուղթ հետևելու բովանդակութիամբ:

**Հուլիանոսի թուղթը Տիրանին**

«Ինքնակալ Հուլիանոս, Ինարի սերունդ, Արամազդի որդի, հակասագրով անմահութիան սահմանված, մեր Տիրան գործակալին ողջունի: Այն զորքը, որ մեզ հետ ուղարկեցիք, նրանց գորսպետին սասով հետ զարձավ: Մենք կարող էինք մեր անթիվ զնգերից ուղարկել նրանց հակակց ու բռնել, բայց թուղթ ամիկնք (նրանց հետանալ) երկու պատճառով: Եսի՞ որդեգրի պարսիկները չլսեն, կը զորքը բերում է բռնութիանը և ոչ կամովին, և երկրորդ՝ որդեգրի փորձերն իր հաճախամութիանը: Արդ՝ և թե նա այդ բանն արավ ոչ իր կամքով, սպա նրան ցեղովին բնացնելը արա, որդեգրի մնացորդ շմա, հակառակ զեզրում երգվում են Ռասով<sup>240</sup>, որ մեզ թագավորութիանը շնորհեց, և Արևեստով, որ հաղթութիան, որ մեր վերագործին անպարտելի զորութիամբ կիսրտակներ քեզ էլ, քո աշխարհն էլ:»

Տիրանն այս տեսնելով՝ զարհուրում է և Հայր կոչված մարզպետին ուղարկում է Չորսայի մաս, երզումով նրան կանչում է: Նրա զորք տեսնելով՝ որ բոլոր նախարարները լուս են մնացել, մեր ազգի անձուժկալութիամբ ցրվեցին, շուրսանշուրքը գնաց իր տունը: Չորսն մենակ մնալով՝ ահամայրից զայիս է թագավորի մաս: Նրան բռնելով՝ թագավորը գրավում է Աղթամարը, նրա ամբար բերդը և բոլորին կտորում սպանում է: Բայց մի փոքիկ երեխա, նրա Մեհենդակ եղբոր որդին, գալակները փախցրին փրկեցին, իսկ թագավորը նրա տեղ նշանակում է Աղաճալիին, Անձիտի տիրուրը:

Նրանից այս խնդիրն է անում, որ նրան իր հետ Պարսկաստան շտաբի, պատճառ բերելով, թե անկարող է մի հեծնել: Հուլիանոսը համաձայնում է, բայց խնդրում է նրանցից զորք և պատանդներ: Տիրանը խնայելով իր երկրորդ որդուն, Արշակին, ապիս և Տրգատին, երրորդ որդուն, կնով և սրգիներով և իր Տրքիթ թսանք, իր մեղած անդարձելի որդու՝ Արտաշեսի որդուն: Հուլիանոսը նրանց առնում անմիջապես ուղարկում է Բյուզանդիան, իսկ Տիրանին՝ արձակում է՝ իր աշխարհը գնալու: Նրան ապիս է իր պատկերը, տախտակի վրա նկարված, որի վրա (նկարված էին) նաև մի բանի զեկերի պատկերներ, և հրամայում է կանգնեցնել հիկեզեցում՝ արևելյան կողմում, ասելով, թե Հոսմալեցիների տերության հարկատու եղողները բոլորն այդպես են անում: Տիրանը հանձն անելով բերում է, մարզով շանցիացնելով, թե իսրախութիամբ զեկերի պատկերներին երկրպագութիան կժամտուցվի:

**ԹԴ**

**ՍՈՒՐԸ ՀՈՒՄԱՆԻ ԵՎ ԳԱՆՆԵԼԻ ՆԱՀԱՍԿՈՒԹՅՈՒՆ**

Տիրանը Սոփաց զավարտ հասնելով կամեցավ պատկերը զնել իր արքունիքի եկեղեցում: Սուրբ Հուսիկը պատկերը հափշտակեց թագավորի ձեռքից, զեպին զցեց և ստով կոխեց ու մանրեց, հասկացնելով թագավորին՝ բանի իտարանակութիանը: Տիրանը նրան չլսեց, վախենալով Հուլիանոսից, որովհետև մասանց, թե ինքը կարող է մեռնել, իբրև թագավորի պատկերը անսակոխ անող: Ուտի աճիս նա բորբորվեց նրա մեջ զայրույթը, որ ասում էր զեպի սուրբ Հուսիկը, իր հանցանքները շարունակ հանգիմանելու պատճառով, և հրամայեց ճիպտաներով այնքան երկար ձաղկել նրան, որ ծծելիս հողին ավանդեց:

Նրա վախճանիկուց հետո Տիրանը նախատիների և անձերի ենթարկվեց ժերուժի Գանիել քահանայի կողմից, որ սուր Գրիգորի աշակերտն ու սպասավորն էր, ուտի հրամայեց նրան խեղդամահ անել: Աշակերտները նրա մարմինը վերցնելով թաղեցին նրա միայնարանում, որ կոչվում է Հայցյաց գրախա: Իսկ սուրբ Հուսիկի մարմինը վերցրին տարան իր հոր յոս, Քորդան դյուղը՝ նա եպիսկոպոսութիան արավ վեց տարի:

**ԺԶ**

**ՀԱՌՄԱՆԻ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՆԸ ԵՎ ՓԱՆՆԵՐՄԵՆԻ ԸՆԹՈՐԳՆԻ ԱՐՈՒՄ**

Իսկ Հայոց նախարարները Տիրանից խնդրում են մի արժանավոր մարդ, Հուսիկի փոխարեն կոֆիպոզուս գնելու համար: Որովհետև նրա որդիները դավիչ վարք չունեցան և անարժան էին այն առաքելական ավտոնի. և բացի սրանից, այդ օրերումը նրանց վրա մահ հասավ ահանելի, լսողների սարսափման արժանի. մի անգամ կրկուսը միասին կաշի-ծովհանար կզան, որոնց անուններն էին Պապ և Աթանազիոսն. նրանք շքեղին շահաճառ զավակ այդ պաշտանին համապատասխան, բացի Աթանազիոսին մի որդուց, ներսն անունով, որ Կեսարիայում, սովորում էր և այդ ժամանակ գնացել էր Բյուզանդիոն՝ կին ստնելու մի ոմն Ասպիոս մեծ իշխանի աղջկան: Ուստի որովհետև Գրիգորի ցեղից մարդ չկար, ընտրեցին մի ոմն Փառնեբահ՝ Տարսնի Աշտիշատից և զրին բահանալուպես Տիրանի տասներորդ արարում: Նա ավտուր գրավեց շորս տարի:

**ԺԷ**

**ՔԵ ԻՆՉՊԵՍ ՏԻՐԱՆԸ ԸՆԳՈՒՆԻՑ ԽՈՒՎԵՑ ՈՒ ՆՐԱ ԿՈՉԻՆ ԳՆԱԽՈՎ ՆՐԱՆԻՑ ԿՈՒՐԱՑՈՒՑՑ**

Այս բոլորից հետո ամբարշտու Հուլիանուսը փորից վիրավորվելով ստակում է Պարսկաստանում, ինչպես արժան էր նրա շար խորհուրդների համար: Նրա զորք հեռ գործով, թագավոր ընտրելով Հորիանոսին, որը ճանապարհին վարժանովեց՝ Բյուզանդիոն հասած: Իսկ Պարսից Շապուհը թագավորը նրանց հետամուտ է լինում և խարտուլյամբ կանչում է Տիրանին իր մոտ, զրելով նրան այսպիսի թուղթ.

**Շապուհի թուղթ Տիրանին**

«Մագդեկանց բաշ<sup>241</sup>, արեգակին բարձակից Շապուհ՝ արքայից արքա. մեք բարձրացանումովյամբ հիշած սերկի կղզոր, Հայոց Տիրան թագավորին շատ ողջուիչ:

Մենք ստուգապես վերահստու եզանք, որ դու հաստատ պահեցիր բա սերք դեպի մեզ, կալսրի հետ չկար՝ մեք Պարսից աշխարհը, և այն զուղղը, որ բկանից ստավ (Հուլիանոսը), հետևից մարդ ուղարկելով հետ կանչեցիր: Եվ առաջինը ինչ որ դու արիր, գիտենք նրա համար

արիր, որպեսզի բո աշխարհով չանցնի, այն, ինչ որ նա ինքը պիտի տներ: Ուստի մեք պահապանները երկշտուովյամբ թուղթն հետացան՝ թեզ պատճառ բռնելով, որի վրա զայրանալով՝ մենք ցուլի արյուն տվինք խմցնել նրանց զխավորին: Քո թագավորությանը մենք ոչ մի վնաս չենք հասցնի, երբովում ենք Միշը մեծ սատուածով, միայն շտապիր զայ մեզ տեսության, հասարակական ոգուտի մասին խորհրդակցելու համար»:

Տիրանն այդ տեսնելով խնչագործից զիաց նրա մոտ, որովհետև արգարությունը նրան տանում էր հասուցման տեղը: Շապուհը նրան տեսնելով նախատեց խոսքերով իր զորքերի զեմ հանդիման և նրա աշխարհը կուրացրեց, ինչպես հնումը Սեղեկիական<sup>242</sup>: Գուցն սրանով ըստ վրեժու սուտեց սուրբ մարգու, որով լուսավորվում էր մեք աշխարհը նա Ավետարանի խոսքի, աշխարհի լույսը լինելով: Տիրան նրա լույսը խավարեցրեց Հայաստանում և ինքն էլ խավարեց, տասնենվ տարի թագավորություն անելուց հետո:

**ԺԸ**

**ՈՒՂՈՒՆԻ ԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼԸ ԵՎ ՀՈՒՆԱՏԱՆ ԱՐՇԱԿԵԼԸ**

Բայց Շապուհը Տիրանի փոխարեն թագավորեցրեց նրա որդուն Արշակին, անկանծով Հայոց զորքերից, որպեսզի որևէ կերպով չխափանի իր ձեռնարկելիք գործը: Նա այսպես պատշաճ անարեց, որ բարեարարություն անելով, մեք աշխարհը հաստատ իր կողմը գրավե. նախարարական ցեղերն էլ նա զսպեց, ամենից պատանդներ անեկով: Եվ Հայոց արևելյան զորքին Վահան Ամատուսու փոխանակ սպարապետ նշանակեց իրեն հավատարիմ Սյունի Վաղինակին, և Հայաստանը նրան հանձնելով, ինքը հետամուտ եղավ հունական զորքին, հասավ մինչև Բյութանիա և այնտեղ նստեց շատ ամիսներ: Ոչինչ անել չկարողանալով, ծովի մոտ մի սյուն է կանգնեցնում, վրան դնում է առյուծ, սուրբանակ մի գիրք բռնած, որ այն և նշանակում: Ինչպես առյուծը հորն է զագանների մեջ, այնպես է պարսկականը թագավորների մեջ, իսկ գիրքը պարունակում է գիտություն՝ ինչպես է Հռոմայեցիների տերությունը:

**ՔԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱՎ ԱՐՀԱՄԱՐՆԵՑ ԼՈՒՆԱՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ**

Այս ժամանակների ընթացքում Նյութալային ազգերի կողմից խափովյուններ ծագեցին, (սրանք գրազեցրին) Պարսից Տապու՛՛ Քաղափորին: Իսկ Նույնների վրա Քաղափորնց Վարենտիանոս, որ զորրի գումարտակ է ուղարկում Միշերկրայր և Նայածում է պարսկական զորքերին: Հնուտ մեր Արշակ Քաղափորին ուղարկում է այսպիսի Քուզթ:

**Վարենտիանոսի թուղթն Արշակին**

«Ինքեակալ Վաղենտիանոս Ազգոստոս, մեր աթոռակից և Քաղափից Վաղես կայսրի Նեո, Հայոց Արշակ Քաղափորին ողջունչ:

Գու պետք է իշխեր այն չարիքները, որ ձեզ Նստան անասալամ պարսիկներից, և այն երախտիքները, որ մեզանից գտել եք Նեոց ի վեր մինչև թո ժամանակ, և պետք է Նեոսալայր նրանցից և մեզ ժամանալիր: Երպեսզի մեր զորքի Նեո խառնվելով, միասին կովենք նրանց զեմ. մեր այդուեղի զորավարների ձեռքով ուղարկիր ձեք աշխարհի Նարկերը, նրանց գուճացողական թղթերով, որպեսզի նրանք թո այստեղի էզրոք և նրա Նեո եկած պատանդներն առնելով զուրս բերեն: Ողջ եղիք, լիովին Նստանդալայամք մեր Հռոմեական տերությանն:

Իսկ Արշակը նույնիսկ շպատասխանեց այս թղթին: Այլ ատամ բացելով նրանց արձամարհեց. մինեռն ժամանակ նա Տապու՛՛ի կողմն է շարժավ թուրք սրտով. այլ ինքնահալանությամք պարժեկում էր միշտ կերտուսմաների ժամանակ և վարձկան երզնյների բերանով, իբրև Քև Արիւնեանց<sup>245</sup> էր ավելի քաջ ու արի և, բայց իբր Նեոսովելով կազ ու սրագուլու Քերտախանի, իր մեծամեծներից մերժված, մինչև որ իր ամբարտաճանության վարան ստացավ:

**Ի**

**ՈՒՐԱՐ ՆԵՐՍԵՍԻ ԵՎ ՆԲԱ ՄՈՒՐՄԱ ԲԱՐԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Արշակի Քաղափորության երբորդ ատրում Հայոց եպիսկոպոսապետ զարձով մեծն Ներսես, Աթանազիենսի որդին, Հուսիկի որդու, Վրթանեսի որդու, սուրբ Գրիգորի որդու: Բյուզանդիայից Կեսարիա վերադառնալով նա եկավ Հայաստան և իր Նայրերի թուրք ուղղության կարգերը նորոգեց. և ավելին ես, որովհետև ինչ բարեկարգություններ որ նա

տեսավ Նույնների աշխարհում, մանձվանդ Քաղափորանիստ քաղաքում, նույնք սահմանեց և մեր աշխարհում: Նա եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմաններով Նաստատեց ողորմածությունը, արմատախիլ արավ անգրությունը, որ մեր երկրում իրեն սովորեցական էր: Որովհետև բորտաները<sup>246</sup> Նայածում էին, իբրև օրենքով պիղծ ճանաչված մարդիկ, ուրուկներին էլ փախուստի էին ենթարկում, որպեսզի անտար նրանցից ուրիշների վրա չփոխադրվի. նրանց կացարաններն անսպասներն էին և ամայի տեղերը. նրանց ծածկույթը՝ բարերն ու մտացանդեր, իրենց թշտաության մեջ նրանք ոչ սրից մխիթարություն չէին գտնում: Քացի սրանցից, Նայածնդամները չէին խառնվում, անձանտթ Նյութեր չէին ընդունվում, օտարականները պաշտպանություն չէին գտնում:

Իսկ նա Նրամայեց, որ ամեն մի զավատում շինեն արքատանոցներ ատանձնացած անընակ տեղերում, որպեսզի Հնուցց Նիվանդանոցների նման մխիթարություն լինեն մարմնով մշտացածներին: Այս (Նիվանդանոցների) վրա բաշխեց ավանները և ապարակները, որպեսզի իրենց արտերի արջուրներին, արածող պետանների կից ու բրդից բամբի անեն և պարտավորարար նրանց պետերը Նոգան, Նեոմանց Նեոս, իսկ նրանք զուրս զան իրենց ընակության (սահմանված) շներերից: Այս զորքը նա Նանձնեց իր սարկավազին, Խաչ անունով, որ Կարնի Մարգաց (զուղից) էր: Նույնպես սահմանում է, որ բուրք գլուխներում ինչաններ շինվեն օտարականների Նամար, սեռուցի տեղեր որբերի և մերերի Նամար և խնամք չբավորների Նամար: Շինում է նաև անսպաստ և անարքարանակ տեղերում կղարյունացներ և մենաստաններ և մեռակ (ձգողներ) Նամար խրճիթներ: Մրանց վրա Հայր և վերահսկիչ և Նշտանակում Շաղիթային, Եղիփանին, Եփրեմին և Գնեղին Սիկունեաց ցեղից և ուրիշ մի քանիսին:

Եվ նախարարական ցեղերի միջից վերացնում է այս երկու բանը. ստաշիքը՝ խնամությունը մերձավոր ազգականների միջև, որը զործարում էին՝ սեպուհական աղվճականության պատճառով ազանելով, և երկրորդ. որ մեռածների վրա ունիրներ էին զործում Նեթանուական սովորությամբ: Այնուհետև մեր աշխարհի մարդիկ երեսացան արդեն ոչ բարբարոսների պես աշխանդակված, այլ քաղաքացիների նման Նամեստացած:



**ԱՐՁԱԿԻ ԵՎՐՈՒՐ ՏՐՂԱՏԻ ՄԱՍԿՆԵՐԸ, ՍՈՒՐԲ ԵՐԲՈՒՄԻ ԲՈՌՈՂԱՆՆԵՐԸ  
ԳՆԱՆ ԵՎ ԳՈՍԱԿՆԵՐԸ ՀԵՏ ԳԱՐՔՆԵՐԸ**

Վաղեմիանոսն անիրավ մարդկանց վերաբերմամբ շատ խիստ և անազն էր. նա շատ իշխաններ սպանեց հափշտակության պատճառով, և Ռոզանոս անունով մի ներքինապետ կենդանի այրեց, որովհետև ինքը կերթ անգամ հրամայեց, բայց նա չվերադարձրեց մի այլի կնոջից հափշտակում գրչոր: Նույն այդ օրը հասան նրա այն պատգամավորները, որոնց ուղարկել էր Հայաստան և նրան ավելի գայթաղել՝ Արշակի խոստատարն զիպրը պատժելով: Եվ որովհետև նա բարկացած գրոթվյան մեջ էր, հրամայեց սպանել Արշակի կղորը՝ Տրգատին, մանուկ Գնեկի հորը, և Քեղզոսին պատվիրեց ծանր զորքով Հայոց վրա դիմել: Երբ նա Հայաստանի սահմանները հասավ, Արշակը գարշուրեց, նրան ընդատաչ ուղարկեց մեծ ներսեսին, խնորհեց հաշտվել, խափանված հարկերը լիովին վճարեց և ներսեսին շքեղ ընծաներով նրա հետ ուղարկեց (Բյուզանդիոն): Նա գնալով՝ թագավորին հանգրայանցնում և, շատ մեծարժույթ և նրանցից և պատանդները խնայում՝ հետ է առնում և վերադառնում: Եվ մի կույս Ոլիմպիոսը անունով, կայսրի ցեղից, կին է բերում Արշակին: Բայց կայսրը բարեարություն անելով մանուկ Գնեկին, նրա հոր՝ Տրգատի անմեղ մահվան համար իրենց ձեռքով՝ առիթ է հյուպատոսության պատիվ և շատ զանձեր: Տիրիթը օրա վրա նախանձելով՝ շարունակ մտածում էր նրան շարիք գործել, հարմար օրվան սպասելով:

**ԹԵ ԻՆՉՉԱՆԻ ԽՈՌՈՎՈՐԹՈՒՆ ԸՆԿԱՎ ԱՐՁԱԿԻ ԵՎ ԳՆԵԿԻ ՄԵՋ,  
ԵՎ ՏՐՂԱՏԻ ՄԱՐԸ**

Իսկ Գնեկ կալով Կույս աղմար Արագած կոչված շեռան ստորաբաժնում, իր կուրացած Տիրան պատի մաս, որ զեռ կենդանի էր: Տիրանը գառնապետ ողորաց իր Տրգատ օրդուն, Գնեկի հորը, իրեն իրեն պատանա համարելով նրա սպանվելուն. ուստի Գնեկին է առիթ իր բոլոր ունեցածը և կալվածները, գյուղեր և զատակներունը, և հրամայում է հենց նույն Կույս աղմանում բնակվել: Այնուհետև Գնեկը կին է անունով մի ուն Փառանձեմի, Սյունաց ցեղից, և թագավորաժայել հարսանիք անելով առաւ-առաւ պարզիներ է առիթ բոլոր նախարարներին: Մրանը նրան հավանելով ու սիրելով՝ իրենց զավակներին նրան հանձնեցան, որոնց

նա փառավոր զարգարեց զենքերով ու զարզերով: Մրա համար նրան ավելի ևս սիրեցին: Այսպեղ ահա Տիրիթն առիթ գտավ բուսթյան, նա կկալ թագավորի մաս իր բարեկամ Վարդանի հետ, որ թագավորի զինակիրն էր, Մամիկոնյան տոհմից, և առում են. «Մի՛քե, չգիտես, որ Գնեկը միտար գրել է թեզ սպանել և քո փոխանակ թագավորել: Ահա առես, թագավոր, այս բանի ապացույցները. Գնեկը բնակվեց Այրարատում, ձեռ թագավորական կալվածում, բոլոր նախարարները սրտով նրան են հարած: Կայսրին այդ զավթ սարքելով նրան հյուպատոսության պատիվ առին և շատ մեծ զանձ, որով նա նախարարներին գրավեց»: Վարդանը երգվում էր թագավորի արևով և ասում էր. «ես իմ տկանը զսլացի Գնեկից, որ ասում էր, թե ես իմ հորեզորը չեմ թողնի իմ հոր մահվան վրեժը, որ նրա պատճառով եղավ»:

Արշակ այս բանին հավատալով՝ նույն Վարդանին ուղարկում է Գնեկի մաս, թե «Ինչու՞ բնակվեցիր Այրարատում և հայրենական կարգը խանգարեցիր: (Որովհետև սովորությունն այնպես էր, որ Այրարատում բնակիվ միայն թագավորը և նրա մի որդին, որին պահում էին իրեն թագավորին հաջորդ, եւ ժյուս Արշակունիներն ապրեն Հայտյանք, Ագիոփյա և Աորերանի զավաններում, արքունական կամուսներով և ուսեստով): Արդ՝ զու պետք է քնտրես երկուսից մեկը, կամ մահը քույրենի, կամ Այրարատից հեռանալ և թեզանից հեռացնել նախարարների որդիներին»: Գնեկն այս լսելով՝ թագավորի հրամանը կատարեց ու զեաց Ագիոփյա և Աորերանի: Բայց Տիրան, նրա պապը, խիստ խոսքեր ողջեց իր Արշակ օրդուն, որի պատճառով իր սենեկապետների ձեռքով խեղզամահ էղավ Արշակի զարանի հրամանով և թաղվեց նույն Կույս աղմանում: Հարմանակալով իր հայրերի զերեզմաններին, զուցե նա հաստացումն արավ Աստծու մարդու՝ Գանիելի մահվան: Ինչ չափով որ չափեց, նրանով էլ ինքը չափեց, ինչպես ասված է Ս. գրքում<sup>215</sup>:

**ԱՐՁԱԿԻ ԶՈՐԻՑ ԵՆԻՍՏՆԵՐԸ ԳՆԵԿԻ ԵՎ ԵՐԱՆ ՄԱՍԿՆԵՐԸ**

Մրանից հետո թագավորը որսի զեաց Մասիսի թիկունքում իր սիրած Կոզալովիտ զավտար: Մասսիսի մեծ որս եղավ, և Արշակ խմելոս պարծեւեւում էր, թե իրենից առաջ ոչ մի թագավորի մասնակ այսքան բազմաթիվ որս չի կտորարկել մի ժամում: Այստեղ Տիրիթն ու Վարդանը նորագում են իրենց նենգությունն ասելով, թե Գնեկը այդ օրերում ավելի շատ երկներ է սպանել իր լեռան վրա, որ Շահապարկն է կոչվում, որ

երան հասնի էր նրա մեր պատկից, Գննի Գնունուց: Անտի (Արշակը Գննին) այսպիսի հրովարտող է ուղարկում:

### Արշակի թողութի ԳՆՆԻՅԷ

«Արշակ, Մեծ Հայրի թագավոր, իմ Գննի որդուն ողբույն:  
Այդտեղ, Մարգարե լեռան<sup>246</sup> վրա, անստատ և քրազեռ տեղում բնորիք և պարարատիք առատ որսով տեղ, որպեսզի մեկը գանք և թագավորավայել որսի հանդիպենք»:

Հրովարտակն ուղարկելուց հետո Արշակն իսկույն գնաց, մտածելով, որ եթե Գննիը հրամաննի համաձայն չի կատարել, նրան կապի իբրև թև նա դժկամակել է թագավորի որսախառնում: Բայց երբ գալիս տեսնում է որսի այնպիսի պատրաստություն և երևելի յայնպիսի բազմություն, որ նա երբևէ չէր տեսել, խոզովում է սրտում նախանձից ու կասկածներից, և հրամայում է նույն Վարդանին՝ որսառնելու Գննիին սպանել, իբրև թև պատահամար, նետը որսի վրա արձակելիս՝ նրան զիպչելով: Այս հրամանն ատենալով՝ նա իսկույն կատարում է, ոչ այնքան թագավորի հրամանի պատճառով, որքան իր սիրելի Տիրիթի կամքը կատարելով: Իսկ Արշակը Գննիի զին նախարարների հետ Ազիտի որսառն ինչնեղելով՝ թաղում է արքունական Ջարիչատ քաղաքում և անմեղ ձևանալով՝ մեծ կոծ է կատարում:

### ԻԿ

#### ՔԵ ԻՆՉԳՆՍ ԱՐՇԱԿԸ ՀԱՆԿՎԱԿԵՆ ԳՆՆԻՍ ԿՆՈՋՆ ԱՌՆԵԼ, ՈՐԻՆ ՍՐԱԿԵՆ ԳՈՂԸ

Քելպես կարծում էր Արշակ, թև այդ շարիները թաքուն գործեց, բայց ինչ որ չի ծածկվում Աստծու ամենատեսա աչքից, հայտնի է գտնում և աշխարհից, հանցավորներին էլ սարսափել, ինչպես Տիրանի և Գննի մահը: Երբ բոլորն այս բանն իմացան, իմացավ նաև մեծն ներսես, որ անիծելով Արշակին և սպանության ասիթ կողմին, գնաց ասոզ նստավ շատ օրեր, ինչպես Սամվելը Սամուելի համար: Իսկ Արշակ չզղոջոց, չապաշխարհեց, այլ անամոթարար, սպանվածի գանձերին և ժառանգությանն ազակելով, գնա նրա կնոջը, Փառանձեռներն էլ իբրև կին ասավ: որից ծնվեց մի պատանի, որ կոչվեց Պարս:

Այս Փառանձեռ մի անլուր և անկարկի շարիք գործեց, որից լսողները պիտի սարսափեն: Մի անարժան և սուսանուն քահանայի ձեռքով մահացու դեղ խառնեց կյանքի դեղի մեջ<sup>247</sup> և ամփեց Ուխտագալիսին, Ար-

շակի անաշին կնոջը, և նրան կյանքից զրկեց, նախանձելով նրա տիկնաթյան վրա: Նույնպես և Արշակի ձեռքով սպանել է ասլիս Վաղինակին և նրա տեղ նշանակում է իր հորը՝ Անտիորին:

### ԻԵ

#### ՏՐԻՓԻ ՍՐԱՆՈՐԹՅՈՒՆԸ

Երբ Շապուհը հյուսիսական ազգերից խաղաղվեց և պատերազմներից հանգիստ ասավ՝ արտահայտեց իր բարկությունը Արշակի վրա, որ նա այնքան տարիներ հարկ է տալիս կայսրին, և ոչ իբրև: Այս պատճառով Արշակ նրա մոտ է ուղարկում Տիրիթին և նրա սիրելի Վարդանին՝ արժանավայել բնծաներով, հաշտություն խնդրելու համար: Բայց Շապուհը որովհետև ուզում էր հույներից վրեժխնդիր լինել սոցյալ պատերազմների համար, ինքը գնում է նրանց զին պատերազմի, ուստի և խնդրում է մեր Արշակ թագավորին, որ իր հետ գնա բոլոր Հայոց գործերով: Բայց Արշակը, պատճառներ բերելով, չկամեցավ անձեռք գնալ, այլ մի փոքր զունեղ ուղարկեց Շապուհի հետևից:

Իսկ ինքը Տիրիթի վրա բարկանալով, գրկում է պատվից, իբրև թև այդ բանը կատարվեց նրա թելադրանքով, որովհետև նա ասում էր հույներին: Թագավորին ամփեղ զրգոտում էր նրա զինակիրը, Վասակը, որ եղբորը նախանձում էր մի հարձ ազգես պատճառով: Ուստի թագավորը նրան (Տիրիթին ու Վարդանին) աստափի նախատեց ամոթալի վիրավորական խոսքերով: Իսկ նրանք այսպիսի անպատվություն և պարտավանք տանել չկարողանալով՝ գաղմզեցին (Արշակից) և զիմեցին զնացին Շապուհի մոտ: Արա վրա ամփեղ գալանաձևով Արշակ հրամայում է նույն Վասակին՝ նրանց հետևիցն ընկնել ուժեղ զեղով և նրանց սպանել, որտեղ որ նրանց հասնի: Վասակն անփութ չեղավ (այս հրամանը) կատարելու, թեպետ Վարդանը իր եղբայրն էր: Այս կերպով Գննի տնեղ սրչան վրեժը պահանջվեց ամբարշտ Տիրիթից, ինչպես անիծել էր ներսեսը, և Վարդանից, որին վիճակվեց իր հարազատ եղբորից սպանվել:

### ԻԶ

#### ՇԱՐԱՆԻ ՊԱՐՏՈՐԹՅՈՒՆ ԿՆԵԸ ՏՐԻՓՆԱԿԵՐՏՈՒ

Իսկ Շապուհը գալիս հասնում է մեր Տիրանակերտ քաղաքը: Նրան զնմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ՝ զորքը, որովհետև

Այլույնաց Անսիրո նահապետք, որ Արշակի անձին էր և բազարի վերակապուն, հրամայեց բազարի դռները կողպել Շապուհի ասաց: Եվ ոչ միայն արդիւնց մանել, այլև ոչ պատգամաժողովներ ուղարկեց նրան մտտ, ոչ էլ նրա ուղարկածներին ընդունեց: Տեղի ունեցավ խիստ կռիվ, որի մասնական շատ պարտիկների սպանեցին: Շապուհի զուցը պարտաւթյուն կրելով ճորից Ամբին դարձավ: Երբ զորք հունգտացավ ու կրած նեղութուններից կազդուրվեց՝ (Շապուհի) կամեցավ (զնաւ և) Տիգրանուկերտն աննել, բայց նրա առաջապահ զինիքը և լրտեսները լիզորն այս բանով զբաղվել, (ասելով թէ) զրանով հույների զեմ ձեռնարկված գործը կհանգարգի: Եվ Շապուհն ասաց անցնելով՝ այսպիսի թուղթ է գրում նրանց:

### Շապուհի թուղթը Տիգրանակերտին

«Մազզեղանց բաշ Շապուհ՝ արքայից արքա, տիգրանակերտացիներին, որ այլևս չէր հիշվելու արչաց և անարչաց մեջ:

Ես կամենում էի ձեզանից սկսելով բոլոր առաջիկա բազարները մուտք գործել խաղաղությամբ և բացին վայել ազնվականությամբ: Եվ եթէ բայց, տիգրանակերտացիներդ, որ առաջինն եք, ոչ թէ քաջությամբ, այլ իմ ուղեբության ճանապարհի վրա, ինձ հակառակ կանգնեցիք, մյուսներն էլ ձեզանից օրինակ կառնեն նույնպես վարվելու: Բայց իմ գործի մասնակ իմ բարկությամբ ձեզ այնպես կվնասեմ, որ նորից օրինակ դառնաք խելացիոր ստահակներին»:

Ի՛՛:

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱՎԱԿԱՆԸ ՇԻՆՎԵՍ ու ԿՈՐԹԱՆՎԵՏ,  
ԵՎ ԱՆԻՆ ԱՆՆՎԵՏ**

Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմեծ գործ գործեց: Մասին լուսան թիկունքում նա շինեց մի գաղտակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի: և հրաման արձակեց, թէ ով որ կարողանա այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա գաղտաստան և իրավունք չի լինի: Անմիջապես բոլոր հովիտը ինչպես զավ, լցվեց մարդկանց բազմությամբ, որովհետև ավանդատներն ու պարտապանները, ծառաներն ու հանցագործները, զողերն ու մարգասպանները, ուրիշի կանանց փախցնողները և ուրիշ արանց նմանները փախչում ապաստանում էին այնտեղ, և նրանց զեմ հարց ու գաղտաստան չկար, նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակ նրանց չլսեց, այն աստիճան, որ նրանք միևն Շա-

պուհին զիմեցին: Եվ երբ Շապուհ՝ Հունաստանից հետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ զեղով ուղարկեց, որ երբ զեպրը գա, Արշակին բռնի: Բայց նա խուսափեց նրանից, փախավ Կովկասի կողմերը, վրացիների հետ միարանելով:

Իսկ Պարսից սպարապետը Հայաստան զայլով նախարարների օժանդակությամբ առնում է Անի ամրոցը, ավարի է առնում այնտեղ պահած բոլոր արքունական զանձներ, այլև թագավորների սովորները, շղիտեմ՝ Արշակին նախատիքը հասցնելու նպատակով, թէ որևէ հեթանոսական հմայքի համար: Բայց հետո նախարարները խնորհեցին հետ ստացան (սովորները) և թաղեցին Ազցը ավանում, Արաղած կոչված լեռան ստորոտում: Որովհետև նրանք շխարդացան բռնի հեթանոսներին և հաճառացյալների սովորները, բանի որ գերողները խառնել էին իրար հետ, ուստի արժան չհամարեցին թաղել սրբերի հանգստարանում, Վարդաշապատ քաղաքում:

Իսկ Հայք նախարարները ժողովվելով զիմեցին թագավորական գաղտակերտի՝ Արշակավանի վրա, որով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կատաղած էին իրենց ծառաների և վնասարարների զեմ: Այս բանը թեպետ իմացավ մեծն Ներսեսը, բայց կարողացավ կոտորածից օրան հասնել, այլ հասավ վերջում, երբ կոտորվածների երեխաներին բաժանելով ուզում էին զիրի առնել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաներին: Մեծն Ներսեսը նրանց ազատեց և հրամայեց բթողներով կրել<sup>248</sup> մի զոմ: Նրանց համար սնուցիչներ և սնունդ նշանակեց: Հետո նրանք (մեծանալով) ավան կազմեցին, որ այս պատճառով կոչվեց Որթը (բթողներ):

Ի՛՛:

**ՏՈՒՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՔԱՎԵԼ ԵՎ ԼՈՒՐՈՒՄԻ ԲԱՆՎԱԿԵԼ**

Իսկ Շապուհ՝ եկավ Տիգրանակերտ: Դռները զարմայ կողպեցին և պարսպի վրա բարձրանալով զազազկում էին. «Հե՛նացիք մեզանից, Շապուհ՝, ապա թն ոչ թեղ առաջինից ավելի մեծ չարքներն կհասցնենք»: Իսկ նա պատասխանեց. «Ո՛վ քաշ հայեր, որ ինքներդ ձեզ արդիւնք փակել եք Տիրքանակերտի պարիսպներին հետ, և ներսից սպառնալիքներ եք արձակում, Քաշ տղամարդիկ կզուժն են արձակ դաշտում և ազատ սեղան: Կանայք են, որ փակվում են, կովից վախենալով»: Այս ասելով զարձակ զերի բռնված հույներին և ասաց. «Եթէ ձեր կովկով այս քաղաքն առնեմ, ձեզ բողոքի կազատեմ ձեր ընտանիքներով հանդերձ»:

իսկ Պարսից զորքերին հրամայեց բողոքի շուրջը պատվել և պարսպի վրա կողոնքերի նետերով խոչոտել:

Իսկ հույները մտազուտ, մեծ ուժով պարսպին զեմ գրին էլ կոչված (գործերը): Սա մի անվավոր մեքենա է, որ բշկով տանում են երեք մարդ. երանց ներքևում կան կացիներ, երեքերևույթ սակրներ և արածայր մուրներ՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հայկազյան Տիրարներ շինել էր հաստ և ամուր: Հիմքից բանջելով, սապակային, զոներում և բուր կողմերում կրակներ վառեցին, և նետում էին քարեր, նետեր և տեղեր, Մերսեր խոցողովով շշկվեցին: Բոլոր զորքը ներս մտավ, պարսկական ձեռքը չէր հոգնում բազմախոցող սուրբ արշալուով հազեցնելուց, այնպես որ սպանվածների արյունով լցվում էին հիմքերը: Իսկ հունական ձեռքը կրակի էր տանում բոլոր փայտակար շինությունները: Եսպուհ՝ կոտորածից մնացածներից զերի անկերով կիսում է Պարսկաստան, իսկ Հայաստանում եղած զնգիրեն մարդիկ է ուղարկում, հրամայելով, որ Սյունյաց տոհմը (բնաջիւղ անեն) անվավակ դարձնեն<sup>249</sup>:

**ԽԹ**

**ԱՐՇԱԿ ՊԱՏԵՐԱՅԻՆ ԻՐ ԱՆՔԱՐԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՄ ԳԱՐԻ ԲՅՈՒԶԱԿՆԻՆԻ ՈՐԱՐՄԱՆԵԼԸ**

Եսպուհի համար դարձյալ խոտովություններ ծագեցին նույն (հյուսիսական) սպգերից, իսկ խաղաղությունը շուտ եկավ հույների կողմը, համաձայն այն խոսքի, թե փոփոխակի իրար փոխարինում են<sup>250</sup>, որանց խաղաղությունը նրանց խոտովության մեջ է կայանում, և նրանց խաղաղությունը սրանց խոտովության մեջ, այնպես որ մեկի վախճանը մյուսի սկիզբն է դառնում, որովհետև Վաղեմարյանսար<sup>251</sup> Բերդատին կոչված բերդում հիվանդանալով մեռնում է, և անբուժելուն անուն է նրա երբայրը, Վաղես, որ զթիների հետ բարերախա պատերազմ մղելով ու հաղթելով հետ է դառնում և ամբիպղպեն զորք է ուղարկում Միջագետք, Հայաստան՝ Եսպուհի օրինակ զորք ապուլն համար:

Բայց Արշակը վրացական զեղով գալով՝ իր մտերիմներից էլ սակավաթիվ զորք է ժողովում և պատերազմ է սկսում այն նախարարների հետ իր Արշակավան դատարանների գլխում անկելու համար, նրանք էլ ինքուրանով ներսեի, Կամսարի որդու առաջնորդությամբ պատերազմով զինարարում են Արշակին: Տեղի է ունենում ստատիկ կռիվ, որի մեջ յուրաբանչյուր կողմից շատ մարդիկ են ընկնում. ողամարդ աղամարդի

զեմ զուրս գալով, ոչ մեկը չէր կամենում պարտություն կրած լինել: Երբ նրանք սրով են լինում կրողովում, վրա են հասնում կոչարեական զորքերը: Այն ժամանակ Արշակը տեսնելով, թե իրեն թշնամի են հասպուհ, Վաղեսը և իր նախարարները, ամենից լրված՝ շատ սեղան մարդ է ուղարկում մեծն ներսերի մտա աղաչելով, խոստանում է հետ կանգնել բոլոր շար հանապարհներից, նրա կամքով վարվել, բուրձով ու մոխրով ապաշխարել, միայն թե նա գա, խաղաղություն ցցի և իրեն փրկի հզոր հույների ձեռքից: Նույն բանի համար նախարարների կողմից էլ իրար վրա հանախ խնդիրներ էին զայլի, այնպես էլ եպիսկոպոսները ժողով գումարելով նրան թախանակելով խնդրում էին, որ անտարբեր շմեա իր վիճակի կորուստին:

Այսպես մեծն ներսեր համաձայնելով եկավ և նրանց մեջ խաղաղություն հաստատեց: որովհետև թագավորն էլ, նախարարներն էլ նրան բեկին: Բայցի Արժրուհիների նահապետ Մեհերուսանից և նրա բոլոր մարդուց Վահան Մամիկոնյանից, որոնք անխաղ եղան և ապստամբելով գնացին Եսպուհի մոտ: Իսկ մյուս բոլոր նախարարները ուխտ հաստատեցին, որ թագավորն այնուհետև ուղղությունը վարվի և իրենը հազատամտությամբ նրան ծառայեն: Այդպես (հաստատվեց) նրանց մեջ: Բայց Հունաց զորքերի մտա էլ գնաց մեծն ներսեր և աղաչում էր, որ մեք աշխարհին վնաս հասցնեն, այլ հարկերն ստանան, Արշակի որդուն Պապին բոլոր նախարարների որդիներով հանդերձ պատանդ վերցնեն ու հետ դառնան: Բայցը և մեծ Քեղզոս զորավարը համաձայնեց ու զարձակ կայսրի մտա պատանդներով հանդերձ, հետո տանելով մեծն ներսեանի Արշակի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ուներ.

**Արշակի բողոք Վաղեսին**

Արշակ թագավոր Մեծ Հայքի և Արամյան սպիտ բոլոր նախարարներս մեր սիրոջ՝ ինքնակալ Վաղես Ավգրատտոսից և քո Գրատտառոս որդուց սղուշույս:

Յոյ ինքնակալդ այնպես շտառեմ, թե մեք մեզ անկուց օտամբակեցինք կամ մեզ հզոր համարելով սապատակող զեղի ուղարկեցինք Հունաց երկիրը. բայց դրտեմնալով, որ մեծ խոտովություն է ծագել մեր մեջ և որ ոչ բոլոր մեզ չի փրկի Եսպուհի ձեռքից, նրկուցդ նրան օղնեցինք մի փոքր զեղով. բայց ևս ինքս, Արշակո, նրա հետ չեղան, հազատարիմ մնալով մեզ, որի պատճառով նա ալկերից մեք աշխարհը, մինչև անգամ մեք հայրերի գերեզմանները փորցի, ուղործներ հանեց: Արդ՝



այս իրողութիւններին հաճատալով՝ հաստատ պահեցեր ձեր նախկին սերը զեպի մեզ և մենք հաճատարում/բխամք ձեզ կձառայենք:

Բայց Վաղեսը ոչ թուզթը կարողաց և ոչ մեծն ներսևսին կամեցա՞մ տեսնել, այլ ուղղակի հրամայեց նրան արտերկ և բոլոր պատահեղներին արի անցկացնել:

**Ա**

**ՄԵՆՆ ԿԵՐՆԵՍ ԿԱՏՈՐԱԿԵԼ ԵՎ ԱՆՔԱՆ ԿՂԵՐ ԳՉԵԼԸ, ԵՎ ԻՆՉԳԵՍ ԿՐԱՆԷ ԿԵՐԱԿՐՈՒՄ ԵՆԻ ԵՐԱՆԱՍԻ, ԽՆԱՄԵՐՈՎ**

Այս ժամանակ Բյուզանդիոնի եպիսկոպոսական աթոռը նստում էր հոգեմտառ Մակեդոնը: Երբ արքունիքից հրաման եկա՞վ մեծն ներսևսին արտերկու, իբրև մի անգամ կայսրին խարոզի և ուխտադրումի, նրա մտտ եկան մի բանի հերթաժողովեր Արիոսի ազանջոց և ասացին. «ՅՅՅ մեզ հեզ հազ պահեստ, թեզ կփրկի մեր հայրը, Մակեդոնը» նա չհամարաւնեց ու արտօրկեց: Երբ նա՞վով լողում էին, ձմեռվա խիստ քամիները նա՞վը բշեցին զեպի մի անապատ կղզի ու խորտակեցին: Նա՞վորդները շէին վտատահում մակույկներով նա՞վի, մնացին տարակիսւած և ուտում էին անտառի ծառերի արմատները: Բայց Աստծու խնամքով նրանք ուժ ամրա կերակրեցին այն ձկներով, որ ծովը կենդանի ա՞փ էր գցում: Իսկ Պապը և բոլոր պատահեղները հանձն առան և Մակեդոնը նրանց ազատեց:

**ԱԱ**

**ԱՐՈԱԿԻ ԿՈՏՈՐԱԿԵԼ ԿԱՏՈՐԱԿԵՐՆԵՐԻՆ ԵՎ ԽԱԿ ԵԳՐՄԵՆՊՈՍ ՎԱՐԷՐ ԻՄԱՍԻՆ**

Երբ մեծն ներսևսը հեռացա՞մ, Արշակը զրժեց բոլոր պայմաններին, որ կերել էր նախարարների հետ և կամեցա՞մ իր Արշակական դատասկերտի վրեժը հանել: Նա կատորեց նախարարներից շատերին, մասնա՞վանջ ընտրե՞լ արա՞մ կամաարականների ցեղը, ազահելով Արտաղոնը ամբողջին և երվանդաշատ քաղաքին, որ նրանց ոտտանե՞լ<sup>252</sup> էր: Նրանց հրա՞վիրեց իր մտտ, Արմավիրի լքված պալատը, իբրև ազգականներ, պատա՞կելու, մեծարելու պատահաւանքով, և հրամայեց բոլորին միանգա՞մայն կատորել, մարդկանց, կանանց, երեխաներին: Ոչ որ նրանցից շփրկվեց, բացի Սպանդարաւանց, Արշավիրի որդուց, որ Արշակունեայց (տա՞մից) կիև ունեւելա՞մ՝ գնաց բնակվեց նրա մտահաղթյալն կա՞լմա-

ծում, Տարոնի և Հաշտյանքի կողմերում, իբրև տրտնջող իր ներսե՞հ հորերորից, այս պատահաւով էլ նա նրանց կոտորածի սեղանը չհանդիպեց: Բայց կեր (իր պզգաստ՝մի կոտորածի) բոթը լսեց, իր հա՞վարչ և Գա՞վազոն որդիների հետ բոլոր բնտանիքով փախա՞մ գնաց Հունաստան:

Բայց մեծն ներսևս Հունաստան գնալիս ետա՞ց սարկա՞վազին ձեռնազրել էր Բազրեանզի և Արշարունիթի եպիսկոպոս և նրան էր հա՞մատա-ցել մեր աշխարհի վերակացութիւյն բոլոր զորժերը միջև: Իր վերա-գարձի ժամանակը, Այս ետա՞ց մեծն ներսևսին էր նման ամեն բանով, մանա՞վանջ ազբաւների խնամատարութիւյն գործում, որի շահմարաններն էլ հենց աղբյուրի նման անտառայան սքանչելի կերտով, ինչպես եղիտայի և Եդիսսի ժամանակ<sup>253</sup>, և թագա՞վորին հանդիմանելու մեջ էլ նա խիստ էր և ա՞նա՞վոր ու աներկելու: Սատանան ոչ մի կերպ նրան զիտ-չի չկարողացա՞մ բացի մի բանից, որ նա զգեստի կողմից պերճասեր էր և ձիւտեթ, որի պատահաւով նրան պարտա՞վում և մալարում էին փոխա-կարար նրանք, որոնց նա հանդիմանում էր: Այս պատահաւով նա հրա՞մարվեց շրջի զգեստներից և մազեղեն հագնելով՝ իշով էր ման գալիս միջև իր մա՞ն՞վան օրը:

**ԱԲ**

**ՅԵ ԻՆՉԳԵՍ ԱՐՈԱԿ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՐ ԶԱՐՈՅԼ ԵՎ ԶԱՐԿՈՅԼ ԵՐԱՆԵԼԻ ԽԱԿԻՆ՝ ԻՐ ՀԱՆՔԱՆ-ՔՆԵՐԸ ՀԱՆԳՐՈՒՄԵՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ**

Երբ Արշակ կամաարականների ցեղը կոտորեց, հրամայեց նրանց զեակները քարչ ատալ, զին զցել առանց թաղելու, որպեսզի չներկ կե-բակուր գտանան, իսկ ինքը, իբրև մեծ հաղթութեամբ պատահում, մի բանի օր ուրախութիւններով անցկացրեց և հրամայեց, որ նրանց միջերկերը բերին և Արմավիրում համարեն: Փորցցին բացին նախա՞ւ-վան գլուղում նրանց կրկու շատ խոր և շատ լայն հորերը և նրանց ա՞վանի սալներով բերին: Սալապանները տեսնելով մարդկային ոսկոր-ներ, որ թափթփված էին փոսի մոտերը և գազանների կերակուր էին զարձել, հարցրին իմացան, որ իրենց տերերի ոսկորներն են. սալներում հա՞մարեցին, եղեղով ծածկեցին, ստարան նույն հորերում թաղեցին: Ար-շակն այս իմանալով՝ հրամայում է սալապաններին նույն հորերի վրա փայտից կախել:

Խաչն առաջին զեպրին շղատաւնեց, իսկ այս անգամ հաստվ և սկեց հանդիմանական խոսքերով թագա՞վորին պարտա՞վ: Արշակ հրամայեց նրան քաչել և քարկոծել: Ե՞մ որովհետև նրա ազգիկները տեղեր ունեն

մեծ նախարարություններից, Ապառնույց բար և զորեղ ցեղից, որանք արհրը հանելով բաշտողներին կհասնու արին և հազին նրանց ձեռքից հափշտակելով իրենց զավառը գնացին: Արշակ հակառակ շքեաց, ծղարուն հանցեց, միգուցե բոլոր նախարարները զրգովեն:

**ԼԳ**

**ՔԵՌՆՈՍ ՄԵՆԻ ՔԱՎԱԿՈՐԵԼ ԵՎ ՀՈԿԵՄԱՐՏՆԵՐԻ ՊԱՏԱՅԻՆՈՎ  
ԳՈՒՐԱՎԱՅ ԺՈՂՈՒԸ**

Բայց Վազն կայսրը մշտնջենական զհ՛շանի օրինակն հենց այստեղ կրելով, Ազրիանուպոլսում հրակն նկատ ու ստակեց, ինչպես արձան էր իր զինավորություններին: Սրանց օտաջավ թեողոր, Սա մինչև հասարը քանգեց կուսրբի մեհյանները, որոնք սուր Կոստանդինուսից միայն փակված էին, այսինքն Արեգակի, Արտեմիտի և Ափրոդիտի (մեհյանները): Բյուզանդիանում, նույնպես ավերեց Գամակոսի տաճարն ու վերանցեց կնկեցու: այսպես նաև Իլիոս<sup>254</sup> քաղաքի տաճարը Լիրիանոսի մեծ և հռչակավոր (տաճարը, որ կոչվում էր) որոնք:

Սա հետ զարմրեց բոլոր սուրը հայրերին, որոնք ուղղափառություն պատճառով արտար էին ուղարկված, որոնց թվում նաև Մեծն Ներսեսին բերելով իր մտա Բյուզանդիոն, պահում է մեծ պատվով, մինչև ստուգվի նշմարիտ: հավասար՝ ամբարիշտ Մակեդոնի<sup>255</sup> հայտնությունների առիթով, որովհետև նա սուրը հոգուն շեր զմզմանում տեր, և ոչ նրկերը պագելի և ոչ փառաբանելի հոր և որդու հետ, այլ Աստուծու բնությունից օտար, ստացական, ծառա, պաշտույլա, ոչ թե մի անձնավորություն, այլ մի ազդումն եմ թագավորանիտա Բյուզանդիոն քաղաքում ժողովկեցին սուրը հայրերը՝ Հռոմի Գամակոսը, Կոստանդնուպոլսի ներսարհիսը, Ազեքանդրիայի Տիմոթեոսը, Անտիոքի Միլիտոսը, Երուսաղեմի Կյուրիոսը, Նյուխայի Գրիգորիոսը, Գեսարիայի Գեղատիոսը, Նաձեալեմու Գրիգորիոսը, Կիտայի Անփյուլոբիոսը և ուրիշ կայնեղապետներ, ընդամենը հարյուր հիսուն հար, որոնք նկոչվեցին և մերժեցին Մակեդոնի և բոլոր հոգեմարաններին:

**ԼԿ**

**ԱՐՔԱՎԻ ԱՎԱՄԱ ԳՆԱԸ ԸՆԳՈՒՆԸ ՄՈՏ ԵՎ ԷԼ ՀՆՏ ԶԿԱՆՈՒՄԸ**

Շաղուհը պատերազմներից զորվալ գազար գանելով՝ Արշակի վրա է ուղարկում ուժեղ զեղով մի ոճն Փահլավիկ Ալանազանի, որ Արշակին ազգակից էր: Արշակը նրանից խույս տվեց, որովհետև անօգնական

մնաց շատ նախարարների կողմից: որոնք իրենց Արշակի թագավորից սաղափաջում, Ալանազանին ձեռք էին մեկնում և իրենց կամքով գնում Շաղուհի մոտ, որից մեծարվելով գնում էին մեր աշխարհը: Մրանից Արշակը առարկում էր պատգամ է ուղարկում Պարսից զորքի իշխանին, թե՛ օժու իմ արշունակիցն ու հարազատն ես, ինչու՞ ես այդպիսի խառնությունը հայտնադով հակառակիչ Շաղուհի հրամանին, որ զուտ ազգականից վրա: Արդ՝ մի քիչ փուլացրու (հայտնանից), որ ես կարողանամ կարճ ժամանակ մի տեղ թարնվել, մինչև շունչ առնեմ և կարողանամ Հունաց կրկիրն անցնել: իսկ զու մեր աշխարհը կզրգովես և ինձանից մեծամեծ բարիքներ կզուես, ինչպես մտերմեմ հարազատիցու:

Ալանազանը նրան այդպիսի պատասխան է տալիս. շեթն զու, ստում է, շինանցիք մեր ազգական Կամառականներին, որոնք ինձանից ավելի մտա հարազատներ էին թեզ, ձեր կրոնի կողմից և միևնույն աշխարհում բնակվելով, ինչպե՛ս կարող ես հուսալ, որ ես կրեման ինձ, որ թեզակից հետո եմ և՛ կրեմով, և՛ բնակությամբ, և ինչպե՛ս կարելի է, որ քո բարիքներին հուսալով, որ հայտնի չէ, թե կստանամ, կորցնեմ այն բարիքները, որ գտնի եմ իմ թագավորից:

Ալանահետ Արշակը, ստատիկ նեղն ընկած, ակամա դնում է Շաղուհի մոտ և արդիվում պահում է Քանի ստիպումներից հարկազրկում՝ գրում է իր Փառանձեմ կնոջը, որ զուր գա: Շաղուհն էլ հրամայում է բոլոր մեծամեծներին, որ Փառանձեմի հետ գան:

**ԼԸ**

**ՔԵ ԻՆՉ ԶԱՐԻՆՆԵՐ ԲԱՐԵՑ ԸՆԳՈՒՆԸ ԱՅՅԱՍԱՅԱՆԻ ՎՐԱ,  
ԵՎ ԱՐՔԱՎԻ ՄՈՒԸ**

Հայոց այն նախարարները, որոնք Արշակից առաջ ձեռք էին մեկնել Պարսից Շաղուհի թագավորին, երբ թմացան, թե իրենց կանանցն էլ կանչել է, ինչպես և այն նախարարներին, որոնք հավատարիմ էին մնացել Արշակին, երբ տեսան նաև, թե Ալանազանը գնաց, և մի փոքր դուռը է, որ այս բանի համար եկել է, միտանեցին, նրանց հայտնեցին և իրենց կանանց ու որդիներին առնելով՝ փախան Հունաց աշխարհը: Փառանձեմն էլ իր մարդու կողմն չգնաց, այլ գանձերով հանդերձ ընկավ Երուսաղեմ թերզը: նա լուր ուղարկեց իր Փայտ որդուն և հույս ուներ Շաղուհի ձեռքից ազատվելու: Շաղուհի սրտ վրա զայրանալով՝ Արշակի սուները կապում է կրկաթե շղթաներով և ուղարկում է հուսթաստա-



հունական զորքերը, ոչ որի բաց շնորհիւ, Վերցնել նույնիսկ քաղաքների հետեւակ պահապաններին, որոնք մեծաքաղաք փրկապետն էին կրում:

Պատերազմը խորացնելով Միջրոմ գաղութում, և ճակատների իրար մտակցան: Հայոց բար նախարարների պատանիներն իրենց կամրով խիզարիւնով մասն երկու ճակատների մէջ, ապափորցում էր իրենց սպարապետ Սմբատ ասպետի, Բագարատի որդու, որ Բագարատույնաց ցեղից էր: Պարսից զորքերի միջեց էլ զորս կէկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մէջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրով եկան: Երբ Պարսից պատանիները հետ էին գտնում, մերսեր անմիջապէս, հասնում էին նրանց հետեւից և ինչպէս փոթորիկ, որ անտար տերեւափոխ է անում, այնպէս էլ նրանք արագորեն ներգրկեցով նրանց վեր էին գցում ձկնորջ, զիսկները գետնի երեսին փռում, բանի որ նրանք չէին կարողանում իրենց ճակատի մէջ մտնել, Իսկ երբ պարսիկներն էին մերսնց շուտ տալիս, արանք մտնում էին Հունաց վահաններով պատասպարված ճակատը, իրեն մի անուր քաղաք և ամենին չէին վաճաճում: Տրոպոնոս Գորգուսուր, հետեւակ զորքի հրամանատարը, այսպէս վահաններով պատեց Պատի ճակատը, ինչպէս պարսպով:

Տրոպոնոս Հունաց զորքերն սպառնալիքով էին ասկեղն և արծաթեղն զենքերով և նրանց ձկնոր էլ նույնպիսի զորքեր էին կրում, ուստի նրանք կարծես մի պարսիկ էին կազմում, արանցից շատերը իրենց զգեստների զգյա և կաշյա պահպանակների դատճառով կարծիք բարձրի անէր էին ստանում, և նրանց վրա անխաչում վեները<sup>262</sup>, իրեն նշաններ, ժածանվում էին սաղարթախիտ ժուռերի սաղարթների նման, Իսկ վիշապների<sup>263</sup> գալարումները, որոնք բաժանուց ուռչելով աճապին կերպով բացել էին բերանները, որիչ բանի չեմ կարող նմանեցնել, բան էթմի մի ազամանդա լեռան, որ ինչում էլ զիսի ծովը, այդիերն Հունաց ամբողջ ճակատը զեպի պարսիկական զորքը, որովհետև արանք էլ նմանում էին մի հզոր գետի, զեպի մի կողմ ծովալայտ, որոնց հագած զբանները արգարն չրի գուշի սպաճորտութուն էին քոզմուս:

Երբ մեծն ներսն այն թուրք տեսավ, բարձրացավ նպատ լեռան զուրբ և ձևները զեպի երկիրը բարձրացրեց և առանց իջեցնելու ազոթք էր անում, նախաժողովարն Մոսկոնի նման<sup>264</sup>, մինչև Երկրորդ Ամառիկ պարտութուն կրեց:

Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դիմուղեմ, պղնձապատ վահանների ցուրք լեռների վրա էր փայլատակում ինչպէս մեծ ամպից, և (այդ ճակատից) գուրս էին թռչում մեր նախարարներից լավ զբահաժորդները ինչպէս փայլատակող ճառագայթներ, արանց աեսրից միայն պարսիկական զուսնը երկուդի մեջ ընկավ, բայց մի փչչ նաև մեր զուսն:

Կր, որովհետև (զիմացից) ծագած արևի պատճառով չէր կարող զիմուցնել նախ: Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսիկական զեպի գնեմ: Կովի խառնուրդով մամանակ Մուսնդարուն Կամարականը պատահեց մի մեծ խմբի, որի մէջ էր բաշ Ենթիբը, Անկան<sup>265</sup> Քաղաժորը, որ ճակատի մեղաեղումը պինդ կանխում էր՝ միջին զեպի զուրս անցած: Մուսնդարուր հարձակվեց, խումբը ճեղքեց և բաշին գնաին սապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուտ տալով փոխուստի մասանց: Եվ այսպէս Հունաց և Հայոց զորքերն առհասարակ, երկմտին օգնութիւնը զբարացած, թըշնամիների զիսկներով յոյրը գաշտը լքին և մնացածներին փախցնելով չայածեցին: Արանց Քվում էր և Առանյոր, Աղվանից Քաղաժոր, որ խոցով էր Մուշեից, Քանակ Մամիկոնյանի որդուց, և պատերազմից զուրս հանեցին:

Բայց ամբարիշտ Մեհրուստանի մին վերջովորված լինելով նա լիարդացով փախչողների հետ արագ հետանալը Հայոց Մծրտոս սպարապետը անապարիտով հասավ նրա մոտ, նրա հետ եղով զորքերը կոտորեց և այն թշվառակներն ձերբակալեց Կազալովտի եղգնուտի ափին: Մտածելով, թէ զուցե մեծն ներսեր նրան կփրկի, բանակը շտարով նրան, այլ նույն տեղերում ամբարիշտին փշացնելու համար սպարապետ է գտնում վրանարնակներ, որոնք կրակ էին վառել, որպեսզի միս խորովին երկամ շամփուրով: Նա շոտմարում արաքսնելով երկու փաթ բուրբուք պղպեղի ձեռով և շիկացնելով սառց, սթեց պատկում նմ, Մեհրուստան, որովհետև զու ձգտում էր Հայոց վրա Քաղաժորցնելու և իմ սպապետն պարտն էլ բեզ պատկել իմ հայրենի իշխանութիւն կարգով: Եվ կրակի նման կեծ (շամփուրը) զրեց Մեհրուստանի զիսին, և այսպէս այն շարք սասակեց: Արևուտան երկիրը խոցազովեց՝ Պատի ձեռք տակ նվաճվելով:

ԼԸ

ՔԵ ԵՆՆՉԵՍ ԳՈՂԸ ՍՈՒՐԸ ԿԵՐԵՍԵՐԻ ՄԵՆՉԱՆԻ ԳԵՂ ՏԱՍՈՎ ԿՏԱԼԵՑԵՑ ԶՐԿԵՑ

Երբ պատերազմները վերջացան և երկիրը խաղաղվեց, մեծն ներսերս սեխ էր հաստատում Պատ Քաղաժորի և նախարարների մէջ, որ արքայութիւն ճանապարհով գնան, որպեսզի նրանց զորքերը համապատասխան լինեն քրիստոնեական հովանին, որ Քաղաժորը հորը



չմանի, անիրավություններ չգործի ու չզրկի, այլ ուղղութիւնք վարվի եւրոպարներէ Տեա, հայրական խնամքով, նրանք այլևս շատարական ու շեղանան նրանից, այլ ծառայեն համարարութեամբ: Այս ժամանակ Պապը Սպանդարտա Կամարականին վերագործրեց ամեն ինչ, որ հափշտակել էր նրա Արշակ հայրը՝ Երեսկի և Արշարունյաց գավառը, որոնք պատկանում էին Կամարականներէ ցեղին, (բայց) ոչ իբրև իր Արշակ հոր պահովութեամբ անիրավարք (նշում), այլ իբրև պարզ քաջ Սպանդարտի ծանայութեան համար, որ սպանել էր Ղեկաց Սաղավորին: Այսու նախարարներին էլ վերագործրեց (նրանց կրած) գրկանքները, ցույց էր տալիս անընչասեր բարք և սարսում էր ստատարաբ:

Բայց որովհետև անտիպի անտիպ գործելի կյանք էր վարում և սրա պատճառով մեծն ներքսին հանդիմանելով ու նախատվում էր, նրան իսկ արձակ էր նաշում, մտածում էր գիտակ, բայց ինքնակալ Քեղոսի (Կրկնյոզից) չէր համարձակվում հայտնի կերպով նրան վնաս հասցնել: (ուստի) գաղտնի կերպով ստոր ներսեսին մատուցու զիգ խցցնելով գրկեց կյանքից<sup>66</sup>, որ երկնայապատեան ամբողջ գրավեց Երեսունչորս տարին: Երանելի ներսեսն այս աշխարհից փոխվեց Եկեղյաց գավառում, խախ կռված գլուխում: Պապ Սաղավորը նրա մարմինը վերցրեց, տարավ Քաղց Քիլ ավանում, եղևությանը թաքուն պահելով:

**ԼԹ**

**ՍԱԼԱԿԻ ԱՅՈՒՌԱԿԱՆՈՒՅՑՆԷ ՄԱՌՆԷ, ԵՎ ՊԱՊԻ ՍՊԱՆԿԵԼԸ  
ՔԵՌԿՈՍԻ ՋԵՌԷՈՎ**

Անուհետև Պապ Սաղավորը անհանելով, որ բոլոր հոգիներ պում են երանելի ներսեսին, հարկից տրեւանքով փնտրեց ու գտավ Ագրիանոսի ցեղից ու ժառանգութեանց մի ոմն Սասնիկ, որ զովութեանից հետո չէր և նրան նշանակեց ներսեսի փոխանակ առանց Պատրիարխի մեծ արքայախոզորնի (ձեռնագրութեան)<sup>67</sup>: Նա ամբողջ նստեց շորս տարի:

Բայց Պապը լսեց, թէ մեծն Քեղոսը Բյուզանդիայից զեկի Հում գաղխ գործքով մտավ Քեստանիկի և իջևանի պատճառով խռովութեան ընկավ նրա և բազարացիների միջև, կոխով ծագեց և թէ ինքնակալը հաղթեց և բազարացիներին տասնէինգ հազար մարգ կտորեց, Այս բոլորը լսելով՝ Պապն այնպես կարծեց, թէ այդ խռովութեանները Երկար պիտի տանէ, ուստի (Քեղոսին) արհամարհելով սաստիակեց նրա զեմ և ինքն իր կորուստից զրգովելով Տերևտիանոսին ու նրա զորքը հայտնեց և

սկսեց պատերազմի պատրաստվել: Բայց քաջն Տերևտիանոսը մեծն Քեղոսից հրաման ստանալով՝ կրկնի վրա հետ գարձավ: Եվ բախտը նրան այնպես հաջողեց, որ հանկարծակի հարձակվեց (Պապի) բանակի վրա, ոմնաց սրով կտորեց, մյուսաներին փախուստի դարձրեց: Այստեղ մեծ քաջութեամբ գիմարտութեան էր ցույց տալիս Անձնացյաց նահապետ Գեկը, Պապի արևելյան գործի սարսափալարը, նրան հաղթող Տերևտիանոսը անձամբ սպանեց: սրով նրա գլուխը կես անելով, և Պապ Սաղավորին թոնկը: Պապն ազուցեց նրան, որ շմեղուն, այլ որ ինքն կայսրին ներկայանա: Քաջ Տերևտիանոսը զիստով նրա խնդրածը շնորհեց: Նա երկաթե կապանքներով տարվեց մեծն Քեղոսի առաջ և քստ իր անզգամութեան սակերով զիստավեց, լսելի տարի Սաղավորիցու հետ:

**Խ**

**ՎԱՐԱՉԿԱՏԻ ԹԱԳԱՎՈՐԵՆՈՒ ԵՎ ԿԱՊՎԵՆՈՒ ՄԱՌՆԷ**

Բայց բարեկործ Քեղոս Ավգոստոսը, Մեծ կռվածք, իր (Սաղավորութեան) բանեկերոց տարում Հայոց վրա Պապի փոխարեն Սաղավորեցրեց մի ոմն Վարաչգասի Կայն Արշակունյաց առնից: Այս Վարաչգասը երիտարարգ էր տարիքով: զրոտտ, հաղթունտասի, ուժեղ, լի արիության բուր գործեկով և շատ հզոր նետանգութեան մեջ: Եսպուհից փախելով նա փնայեց էր կայսեր գուռը և այնտեղ քաջ հանդիպալեց: Նախ Պիտայում<sup>68</sup> քանցքամարտիկներին հաղթելով, հետո հելլոպոսիների Արգի քաղաքում կես սրում մի թանի առյուծ կտորեց, որի համար Ոլիմպիական հանգեան բժշկամարտեան խաղերում փառք վտատակեց և հարգաբեր: Բակ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Վանկվարաների<sup>69</sup> սպիտի զեմ, համարձակվում էմ ասել, թէ հափտար էին ստոր Տրգատի (գործերին), որովհետև թշնամիների կողմից հինգ ախյան հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի հետեից բոլորին սրով կտորեց, և մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնելոթ մարգ նետով զարնելով իրար վրա ներքի գործեց: ինչպես շուտ հասուհացած թղերը թափում են սաստիկ մորկեցի:

Երբ նա իբրև Սաղավոր մեր աշխարհն եկավ Եսպուհի հիսունէինգերորդ տարում, առաջին կտվում պատահում է մի բանի ստորի սպառակների Գարանաղիի սրվար տեղերում: Նրանց փախուսական և անուժ և հետևներից ընկնում: Բակ նրանք Եփրատի նեղ տեղում կամրջի անցնելով՝ փայտը հեռը զցեղին իրենց հետեից: իսկ նա հասնելով,

վազելով թագի եփրատի վրայով, ալվեի քան լակեանցի Քրիստոսի վազ-  
քը<sup>270</sup> ցամաքելու կանգունի շափ. այստեղ մի նոր Աբիլլես էր հանդես գա-  
լիս՝ Սկամանդրոս գետի<sup>271</sup> վրայով ցատկելիս, Ավագակները դարձորած  
գնեքերը պցնցին և անձնատուր եղան:

Այսպես իր երիտասարդության քաղցթյաններից հարբած լինելով՝  
Քաղցթորության մամանակ էլ չէր հնազանդում Հունաց վերականցու  
զորքերի խրատին: Այլ պատգամավորներ է ուզարկում Շապուհի մաս,  
որ իր սղիկներից մեկին իրեն վրտալան տա և ինքը Հայոց աշխարհը  
կրտն կզարմեն: Հունացի զորավարներն այս խմանալով, հայտնում են  
կաշարին Ինքնակայ Քեղարց Տրամայեց նրան բունն, եթե նա իր կամքով  
կաշարի կոշիկն չգնա: Ուստի հարկադրված իր կամքով գնում է կաշարի  
մաս, հուսալով թե ստա կհանն Ավգրատասին: Իսկ կաշարը նրան նույնիսկ  
սեռուկան շարժանացրեց, այլ հրամայեց թրակաթի կապակներով տանել  
Ովկիանոսի Քուրխն<sup>272</sup> կղզին, չորս տարի կապավորելուց հետո:

Բայց Վարազդատի երկրորդ տարում Հայոց եպիսկոպոսական եղավ  
Զավենը, նույն Աղբիանոսի ազգականներից, չորս տարի:

**ԽԼԼ**

**ԱՐՏԱՆԻ ԵՎ ՎԱԳԱՐՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մեծ Քեղոս Վարազդատի փոխանակ Հայոց վրա թագավորեցրեց  
Պապի երկու որդիներին, Արշակին և Վաղարշակին, այսպես մասնելով,  
Թե երկուսը չեն միտարածի պատասաբելու համար: Այս պատանիների  
մեքն իր մաս պահելով՝ նրանց արձակում է զորքով իր կողմից էլ  
համատարիմ մարզիկ վերականցու նշանակելով: Մրանք եկան, զրազե-  
ցին մեր աշխարհն ու արիւնցին՝ արխարար կոթիվներ մղելով պարտիկ-  
ների դեմ: Նրանք իրենց կին առան Արշակը՝ Մշունեաց Քարիկ նահա-  
պետի զուտերը, իսկ Վաղարշակը՝ Սահակ ապետերին: Եւ նա նույն տարին  
մեկավ:

Բայց Արշակի երկրորդ տարում Հայոց եպիսկոպոսական եղավ Աւ-  
պարակեար, Շա՛նակի և Զավենի ազգականը, հինգ տարի:

Իսկ մեծն Քեղոս պատերազմի զուր գալով՝ Միգրումանն<sup>273</sup> քա-  
ղաքում հիվանդացած է մեկավ, թագավորութունը թողնելով իր որդի-  
ներին, Արիագիրտին Բյուզանդիան և Սեղիթոսին Հասքը, որոնք չեզան  
զովկի և արժանավոր իրենց հոր առաքինության:

**ԽԼԸ**

**ԱՍՏՆԱՍԱՆԻ ԵՐԿՈՒ ՄՐՈՒ ԲԱԺԱԿԱԳԵԼԷ ԵՐԿՈՒ ԱՐՏԱՆԻՆԻ  
ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՁԵՆՔԸ ՏԱԿ, ԵՐԿՈՒ ԱԶԳԵՐՈՒ՝  
ՊԱՐՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑՆԵՐԻ ՀՊԱՏԱԿԱԳԵԼՈՒ**

Շապուհն իմանալով, որ Արկազն ուղղածիւս չէ, նրա հետ խաղաղու-  
թյուն է հաստատում, որովհետեւ հաղթված ու շարզված էր նրա հորից,  
մեծն Քեղոսից: Արկազն էլ համաձայնում է հաշտութուն անել, մանա-  
վանդ իր զորագլուխների պատճառով, որովհետեւ թեպետ երանելի Քե-  
ղոսի սպրած մամանակ Աստված նրան էր շնորհել հաղթութունը, սա-  
կայն զորագլուխները հոգեած ձանձրացած էին մշտական պատերազմ-  
ների նեղութունից: Ուստի համաձայնության գալով, կամավորական  
հանձն առավ Միգրագետը և Հայաստանը բաժանել, նոր սահմաններ  
գնելով: Այս պատճառով Արշակը թողեց իր հայրերի բուն թագավորու-  
թյունը, Ալարատը, և Պարսից բաժնում ընկած բոլոր մասը և դեպ  
մեր աշխարհի արժանաչան մասին տիրելու, ոչ միայն իր մեր պատճա-  
ռով, որ մեկու էր կայսերական թաղաքում, այլ լավ համարելով եվտզ  
կողմին տիրել, քրիստոնչյա թագավորի հպատակվելով, քան շատ տե-  
ղերի իշխել, մանկելով հեթանոսների լծի տակ, նրան հետեւեցին ու գնա-  
ցին Շապուհի բամին նախարարութուններն իրենց կանանց և որդիների  
հետ, թողնելով իրենց գույքը, գլուխներ ու գաստակերտները:

Մրա վրա Շապուհը լարանալով գրում է Արշակին. «Ինչո՞ւ իմ և  
կաշարի մեջ պատերազմ ես սրբողում, իմ բամին նախարարութունները  
(թեղ հետ) տանելով: Արշակից նա լուում է պատասխան. «Որովհետեւ  
նրանք չլին համարում պարտիկ առաջնորդով կառավարվել: Աստի եկան  
իմ հետեկը: Արք, եթե դու ինձ հավատասա քո բամին իշխանութունը,  
իջեպես կաշարի իրենը, ես պատրաստ եմ թեղ էլ ձառույրել, ինչպես և  
կաշարին: Իսկ եթե այս թեղ հանկի չէ, և նախարարներն իրենց կամքով  
կամենան զանաւ, ես արգելք չեմ լինիս: Շապուհն այս լսելով, իր բամին  
վրա թագավորեցրեց Խոսրովին, նույն Արշակունչաց ցեղից, և իր բամին  
նախարարներին, որոնք գնացել էին Արշակի հետ, հրովարտակ գրեց  
այսպիսի բովանդակութամբ.

**Շապուհի բուլղը նախարարներին**

«Պաշտպաններին մեջ քաշ, արքայից արքա Շապուհ, Հայոց նա-  
խարարներին, որոնց իշխանության կալմամենն ընկել են իմ բամին մեջ,  
շատ ողջույն եմ շնորհում մեզ:







Հասկանալի էր մեում՝ Քարգոմանիչ լինելու պատճառով. Ուստի ես միտ-  
քը դրեց մի հնարք գտնել, Հայոց լիզբի համար աստեր ստեղծել, և  
աշխատանքի անձնատուր լինելով դանազան փորձերով շարշարում էր:

## ԽԸ

### ԱՐՁԱԿԻ ՄՈՏ ԵՎՈՒ ԿԱՆՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՐՁԸ ԽՈՐՈՎԻ ՄՈՏ

Հայոց նախարարները տեսնելով, որ հույները նրանց վրա թագա-  
վոր լնչանակեցին, դժվար համարելով անառաջնորդ լինելը, որոշեցին  
կամավորապես հնազանդվել Խոսրով թագավորին: Ուստի նրան թուզք  
դրեցին այս բովանդակությամբ.

#### Նախարարների թուզքը Խոսրովին

«Մտրատելառ Գագավոնը և Հունաց բաժնի Հայոց բոլոր նախա-  
րարները, մեր տեր Խոսրովին, Արարատի կղզիի թագավորին, ողջունելով:

Տե՛ր, զու ինքը գրեաւ մեր հաճատարութիւնը հիշատակաց ար-  
ժանի մեր Արշակ թագավորին, որը մենք անխախտ պահեցինք մինչև  
նրա մահը: Այժմ մենք որոշել ենք նույնպիսի հաճատարութեամբ թեզ  
ձառանկել, և՛ թե այս երեք բանը պայմանագրով մեզ կհաստատես. առա-  
ջին՝ շեռ հիշի մեր հանցանքը, որ թեզ հեռ պատերազմեցինք, ստիպմամ  
և ոչ թե մեր կամբով. երկրորդ՝ որ մեզ կվերագործենս այդտեզ Պարսից  
բաժնում կգամ մեր բոլոր ծառայողութիւնները, որ արբունքը գրավե-  
ցինք. և երրորդ՝ որևէ հնարքով մեզ կպագասս կայսրից, որպէսզի վերա-  
դնեն մեր բնակութիւնները, որոնք մեզանցից իշխանութիւն ունեն այս  
(հունեական) բաժնում: Եվ այս ուխտի պայմանը կզրեա, խաշի կերբով  
կհաստատես, որը տեսնելով մենք կփութանք բո ծառայութեան մեզ  
մանկու: Ողջ կդիր, մեր տերդ»:

Խոսրովը դրում է պատասխան.

#### Խոսրովի թուզքը նախարարներին

«Քաշարանց Խոսրով, Հայոց թագավոր, Գագավոն սարատելատից  
և բոլոր նախարարներից, շատ ողջունելով:

